

Ա. Ավագյան, Լ. Բաբայան,
Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան,
Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան

Բարդ իրավիճակների պարզ լուծումներ

Երևան
2020

ՀՏԴ 373.2(07)
ԳՄԴ 74.1g7
Բ 345

Ձեռնարկը ստեղծվել և տպագրվել է
Վորլդ Վիժն Հայաստանի աջակցությամբ

Մասնագիտական խմբագիր՝ Արմենուհի Ավագյան
Տեքստի խմբագիր՝ Գարեգին Ղազարյան

Բարդ իրավիճակների պարզ լուծումներ/Ա. Ավագյան, Լ. Բաբայան,
Բ 345 Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան, Ա. Մանուկյան, Մ. Մարության,
Ս. Պետրոսյան.-Եր.: ՏՊԱՐԱՆ.ԷՅԷՄ, 2020.- 132 էջ:

«Բարդ իրավիճակների պարզ լուծումներ» ձեռնարկը ներառում է տեսական ու գործնական տեղեկատվություն, այդ թվում՝ արդի մոտեցումներ, խաղեր, վարժություններ և խորհուրդներ, որոնք կօգնեն մանկավարժներին արդյունավետ աշխատելու նախադարձական տարիքի բոլոր երեխաների հետ:

Ձեռնարկը նախատեսված է մանկավարժների, աջակցող մասնագետների, մանկավարժական մասնագիտություն ձեռք բերող ուսանողների և ծնողների համար:

ՀՏԴ 373.2(07)
ԳՄԴ 74.1g7

Խմբագրի կողմից

Սիրելի ընթերցող,

Համընդհանուր ներառական կրթության համապեքսսում չափազանց կարևոր են նախադպրոցական կրթությունն ու վաղ միջամտությունը: Կարևորվում է հնարավորինս մեծ թվով երեխաների՝ նախադպրոցական կրթության մեջ ներգրավելը, անհրաժեշտ աջակցող ծառայություններ փրամադրելը, դպրոցին պատշաճ նախապատրաստելը և այլն:

Ներառական կրթություն իրականացնող մանկավարժը պետք է կարողանա արդյունավետորեն աշխատել բոլոր երեխաների հետ՝ անկախ նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից, հաշմանդամության փաստից, կրոնական, լեզվական, գենդերային, սոցիալական առանձնահատկություններից: Նա պետք է ցուցաբերի պատշաճ վերաբերմունք երեխաների բազմազանության նկատմամբ, ունենա անհրաժեշտ միջոցներ և գիտելիքներ: Հետազոտությունները վկայում են (Christopher J. Johnstone & David W. Chapman, 2009¹), որ նշված երեք գործոններից (վերաբերմունք, միջոցներ գիտելիք) կարևորագույնը գիտելիքն է, առանց որի վերաբերմունքն արագ փոխվում է, իսկ միջոցները չեն ծառայում նպատակին:

Վորդ Վիթն Հայաստանի աջակցությամբ ստեղծված սույն ձեռնարկի նպատակը մասնագիտական գիտելիքների և կարողությունների շարունակական զարգացմանը նպաստող հայալեզու մասնագիտական գրականության համալրումն է: Հարուստ փորձ ունեցող մասնագետներն այս ձեռնարկում համադրել են ոլորտում առկա լավագույն փորձն ու սեփական փորձառությունը: Ձեռնարկը պարունակում է բոլոր երեխաների հետ ամենօրյա աշխատանքի համար անհրաժեշտ փաստահենք գործնական մտքեցումներ, միջոցներ, խաղեր, վարժություններ, ծնողների հետ համագործակցության համար կարևոր խորհուրդներ:

Ձեռնարկը հավակնում է դառնալ Ձեր սեղանի գիրքը, օգնել գտնելու հաճախ հանդիպող դժվարությունների, խնդիրների լուծումներն ու Ձեզ հուզող հարցերի պատասխանները:

Մասնագիտական խմբագիր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Արմենուհի Ավագյան

¹ Johnstone, Ch. & Chapman, D. (2009) Contributions and Constraints to the Implementation of Inclusive Education in Lesotho. International Journal of Disability, Development, and Education. Vol. 56, No. 2, 131–148



ԲԱԺԻՆ 1. ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արմենուի Ավագյան, լոգոպեդ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Այս բաժնում կանդադանանք սոցիալական, մտավոր, շարժողական ու հուզական տեսակետներից խաղերի կարևորությանը և նախադպրոցական կրթության մեջ դրանց կիրառմանը: Առավել հանգամանորեն կներկայացվեն խոսքը, հաղորդակցումը և սոցիալական շփումը զարգացնող խաղեր:

Հայտնի է, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեությունն է, և երեխան առավելագույնս զարգանում է խաղի ընթացքում: Ըստ այդմ՝ նախադպրոցական կրթության մեջ խաղերն ունեն կարևորագույն նշանակություն:

Ինչո՞ւ է խաղը կարևոր

Խաղի միջոցով զարգանում են երեխաների՝

- շարժողական ոլորտը (շարժումների համաչափություն, մանր շարժողականություն, ճարպկություն),
- հուզական ոլորտը (ապրումակցում, ինքնակառավարում, ինքնաճանաչում),
- սոցիալական հմտությունները (համագործակցություն, սոցիալականացում, հաղորդակցում),
- մտավոր կարողությունները (մտածողություն, ուշադրություն, ստեղծագործականություն, ուսումնասիրելու կարողություններ):

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվում են ինչպես ուղղորդված, այնպես էլ ստեղծագործական խաղերը: Ուղղորդված խաղերը առաջարկվում, կազմակերպվում և անցկացվում են մանկավարժի կողմից: Դրանք ունենում են հստակ կանոններ, պայմաններ ու պարագաներ: Ստեղծագործական խաղը չի ունենում խաղավար ու կանոններ: Խաղի առաջին տեսակը լայնորեն կիրառվում է բազմազան պարապմունքների ժամանակ, իսկ երկրորդը՝ ազատ խաղի ժամերին, այդ թվում՝ բացօթյա:

Խաղի տեսակները սոցիալական տեսակետից

Սոցիալական տեսակետից խաղի տարիքային նորմերն իմանալը էական է մանկավարժի համար, քանի որ խաղը երեխայի զարգացման կարևորագույն ցուցիչներից է: Եթե երեխայի խաղը չի համապատասխանում տարիքային նորմին, ապա անհրաժեշտ է այն զարգացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել ու անհրաժեշտության



դեպքում դիմել մասնագետների օգնությանը:

Համաձայն Chubey A., Evans T. (2009) աշխատության, սոցիալական տեսակետից երեխան տարբեր տարիքներում, խաղի ընթացքում լինում է միայնակ, հետևող, զուգահեռ խաղացող, հարաբերվող և համագործակցող: Ըստ տարիքային նորմերի՝ տվյալ առանձնահատկությունները ներկայացված են նկար 1-ում:



Նկար 1. Խաղի տեսակները սոցիալական տեսակետից:

0-2 տարեկան երեխան միայնակ է խաղում: 2-2,5 տարեկանում երեխան հետաքրքրվում է շրջապատում խաղացող երեխաների խաղով, հետևում է նրանց, բայց խաղին չի միանում: 2,5-3 տարեկան երեխան խաղում է հասակակիցների կողքին, բայց՝ ոչ նրանց հետ: 3-4 տարեկան երեխան խաղում է հասակակիցների հետ՝ հարաբերվելով ու դերեր ստանձնելով: Այս տարիքում երեխան սկսում է ունենալ նախընտրելի խաղընկեր: 4-6 տարեկանում երեխան խաղում է՝ համագործակցելով ու դրսևորելով փոխօգնություն: Սա առավել ցայտուն է արտահայտվում ստեղծագործական խաղերի ժամանակ, օրինակ՝ ավազով խաղալիս:

Տարիքային նորմերը իմանալը օգնում է մանկավարժին՝ երեխայի խաղը դիտարկելիս ենթադրություններ անելու նրա սոցիալական զարգացման վերաբերյալ:

Օրինակ՝ եթե 5 տարեկան երեխան հասակակիցների կողքին է խաղում, ոչ թե նրանց հետ, խաղի ընթացքում չի դրսևորում համագործակցություն, ապա ամենայն



հավանականությամբ, նա իր սոցիալական զարգացմամբ ու հաղորդակցմամբ համապատասխանում է 2,5-3 տարեկանին: Սա ազդակ է մանկավարժի համար՝ զրուցելու ծնողների հետ ու դիմելու մասնագետների խորհրդատվությանը:

Ինչպե՞ս կարող են խաղն ու մանկական գործունեության ձևերը նպաստել սոցիալական շփման ու հաղորդակցման զարգացմանը

Սոցիալական տեսակետից խաղը զարգացնելու նպատակով կարելի է խթանել երեխաների՝ միմյանց հետ խաղալու, հարաբերվելու, համագործակցելու ունակությունների զարգացումը: Այս մոտեցումը արդյունավետորեն կիրառվում է սյուժետադերային խաղերի, խաղ-բեմականացումների ժամանակ: Երկրորդի դեպքում երեխաները ստանձնում են դերեր ու, բեմականացնելով այս կամ այն ստեղծագործությունը, համագործակցում, շփվում ու հարաբերվում են: Առաջինի ժամանակ երեխաներն ավելի ազատ են հորինելու և ստեղծագործելու տեսակետից: Նրանք վերարտադրում են շրջապատի անցուդարձը, դերերը և կրկին համագործակցում. տեղի են ունենում շփում ու հաղորդակցում:

Սոցիալական շփումն ու հաղորդակցումը կարելի է զարգացնել նաև մյուս խաղերի, պարապմունքների ու մանկական գործունեության այլ ձևերի ընթացքում: Օրինակ՝ ապիկացիա անելիս, երեխաներին կարելի է բաժանել զույգերի. մեկին առաջարկել քսել սուսինձը, մյուսին՝ փակցնել թղթի կտորները: Միառժամանակ հետո զույգերը կարող են փոխել դերերը: Խորանարդիկներով խաղալիս, կարելի է երեխաների մի մասին առաջարկել լինել «շինանյութ» մատակարարողներ, իսկ մյուս մասին՝ կառուցողներ: Երեխաներին կարելի է ներգրավել հանրօգուտ գործունեության մեջ՝ առաջարկելով, որ ճաշի ժամին մեծերին օգնեն սեղանը սպասքաղրել: Նկարելիս կարելի է առաջարկել, որ միմյանց օգնեն գույներն ընտրել, մատիտ սրել և այլն: Դրսում ավազով խաղալիս կարելի է առաջարկել, որ միասին պատրաստեն որևէ շինություն:

Եթե ընդհանրացնենք, սոցիալական տեսակետից խաղի զարգացմանը առավել նպաստում են զույգերով ու փոքր խմբերով աշխատանքները: Եթե երեխաները նստած լսում են մանկավարժի ցուցումները ապիկացիայի կատարման վերաբերյալ, յուրաքանչյուրն աշխատում է իր թղթի վրա, ապա շփում ու հաղորդակցում, որպես կանոն, տեղի չեն ունենում: Նույն իրավիճակն է առկա, երբ ավազով խաղալիս յուրաքանչյուր երեխա փորում է իր բահով ու պատրաստում իր, օրինակ, տորթը: Լինում են դեպքեր, երբ գործունեության ընթացքում երեխաների միջև տեղի ունեցող երկխոսությունը մանկավարժի կողմից դիտարկվում է որպես աղմկելու ու գործընթացը խաթարելու փորձ: Այսպես կարծող մանկավարժը երեխաներից պահանջում է *ստեղծագործելիս պահպանել լռություն*: Սա անընդունելի պահանջ է ու ամբողջությամբ հակասում է խաղի ու մանկական գործունեության ձևերի՝ սոցիալական տեսակետից զարգացմանը:



Խաղերի ու ստեղծագործարար գործունեության ժամանակ սխալ է լռություն պահպանելու պահանջը: Սա ոչ միայն սահմանափակում է ստեղծագործական կարողությունների բացահայտումն ու ինքնաարտահայտումը, այլև՝ խոչընդոտում միմյանց հետ շփումը, հաղորդակցումն ու համագործակցությունը:
Ստեղծագործարար գործունեության ժամանակ տիրող եռուզեռն ու աղմուկը միանգամայն ընդունելի երևույթներ են:

Երբեմն այս քայլին մանկավարժները դիմում են՝ երեխաների հնարավոր ընդհարումներից ու անցանկալի վարքագծի դրսևորումներից խուսափելու համար: Նշված դեպքերում, այս ձեռնարկի համապատասխան բաժիններում ներկայացված՝ անցանկալի վարքագծի հաղթահարման տեխնիկաներին տիրապետելը մանկավարժներին կօգնի կանխարգելել ու հաղթահարել անցանկալի վարքագիծը՝ առանց երեխաների մեկուսացած խաղի տարբերակները քաջալերելու: Ստեղծարար գործունեության ժամանակ տիրող աղմուկը հաճախ խոսում է ընթացքի մեջ սաների ներգրավվածության ու ոգևորության մասին:

Ինչպես կարող են խաղն ու մանկական գործունեության ձևերը նպաստել խոսքի զարգացմանը

Ինչպես սոցիալական շփմանն ու հաղորդակցմանը, այնպես էլ խոսքի զարգացմանը նպաստող խաղերը պետք է ներգրավված լինեն նախադարձական ուսումնական հաստատության (ՆՈՒՀ) բոլոր պարամունքների ու գործունեության ձևերի մեջ:

Խոսքի զարգացման տեսակետից կարևոր է, որ ՆՈՒՀ-ում կիրառվեն երեխաների բանավոր խոսքի և գրաճանաչության զարգացմանը նպաստող խաղեր: Բանավոր խոսքի զարգացմանը նպաստող խաղերը ուղղված են բառապաշարի հարստացմանը, կապակցված խոսքի ու դրա քերականական կողմի զարգացմանը:

Եթե երեխայի խոսքը չի համապատասխանում տարիքային նորմին, պետք է դիմել լոգոպեդի խորհրդատվությանն ու անհրաժեշտության դեպքում ստանալ նրա աջակցությունը:

Բառապաշարի հարստացմանը նպաստող խաղեր

Բառապաշարի հարստացմանը նպաստում են սեղանի դիդակտիկ (ուսուցողական) խաղերը (նկարներով դոմինոներ, լտոններ, զարգացնող այլ խաղեր): Բառապաշարի հարստացմանն ուղղված խաղերի ժամանակ կարևոր է, որ՝



● մանկավարժն ունենա որոշակի պլանավորած թեմա և խաղն անցկացնի դրա շուրջը,

● խաղն ունենա կոնկրետ նպատակ և մանկավարժը չշեղվի տվյալ նպատակից,

● սեղանի զարգացնող խաղերը կիրառելիս դրսևորի ստեղծագործական մոտեցում:

Երբեմն, խաղի ընթացքում կարելի է նկատել, որ թեև խաղի նպատակը, օրինակ, ուտելիքների անվանումներով բառապաշարը հարստացնելն էր, մանկավարժը սկսում է երեխաներին հարցեր տալ տվյալ ուտելիքների գույնի, ձևի, չափի, քանակի և այլնի մասին: Մանավանդ ներառական կրթության համատեքստում կարևոր է, որ սահմանվի հստակ նպատակ, որը համապատասխանում է երեխաների խմբի հնարավորություններին ու տարիքային նորմերին, և պարապմունքն այնպես անցկացվի, որ դրանից շահեն բոլորը՝ անխտիր բոլորը: Խաղալիք ուտելիքները, իհարկե, կարելի է կիրառել նաև գույն կամ քանակ սովորեցնելիս, բայց դրանք արդեն այլ նպատակ են հետապնդում և այլ պարապմունքների ու խաղերի թեմաներ են:

Սեղանի զարգացնող խաղերի նկատմամբ ստեղծագործականություն ցուցաբերելու մոտեցումը ներկայացնենք «Լոտո» խաղի օրինակով: Սովորաբար տուփում լինում են առարկայական փոքր նկարներ, պարկ և մեծ քարտեր, որոնք պարունակում են միևնույն նկարները: Դասական տարբերակից բացի՝ լոտոն կարելի է խաղալ նաև բազմաթիվ այլ տարբերակներով: Օրինակ՝

● «Խառնաշփոթ»

Փոքր նկարները խառը դասավորվում են մեծ քարտերի վրա: Երեխաները ստուգում են նկարները, գտնում սխալներն ու ուղղում:

● «Հորինենք պատմություն»

Փոքր նկարները լցվում են պարկի մեջ: Երեխաներին առաջարկվում է պարկից հանել 3-ական նկար ու հորինել պատմություն՝ օգտագործելով տվյալ առարկաների անվանումները:

● «Խմբավորենք նկարները»

Երեխաների առջև լցվում են բոլոր քարտերը: Հանձնարարվում է դրանք խմբավորել ըստ որևէ սկզբունքի՝ գույնի, նշանակության, առաջին տառի: Օրինակ՝ հանձնարարվում է առանձնացնել բոլոր կարմիր առարկաները, բոլոր նրանք, որոնց անվանումը սկսվում է «Ա» տառով, բոլոր կենդանիների պատկերները:

● «Մնջախաղ»

Նկարները դրվում են շրջված: Երեխաները հերթով մոտենում ու վերցնում են մեկական նկար: Նրանք պետք է նկարում պատկերվածը շարժումներով ցուցադրեն, ընկերները պետք է գուշակեն անվանումը:

● «Գուշակիր նկարագրությունից»

Նկարները դրվում են շրջված: Երեխաները հերթով մոտենում ու վերցնում են մեկական նկար: Նկարը վերցնողը առանց այն անվանելու, նկարագրում է պատկերված առարկան, ընկերները պետք է գուշակեն անվանումը:

● «Մտապահիր շարքը»

Սեղանին շարվում են որոշակի քանակով նկարներ: Երեխաները ուշադիր դիտում են դրանք, ապա՝ փակում աչքերը: Խաղավարը թաքցնում է նկարներից մեկը: Երեխաները աչքերը բացելուն պես պետք է կռահեն, թե՞ որ նկարն անհետացավ: Նույն խաղը կարելի է խաղալ՝ տեղափոխելով նկարները: Այս դեպքում երեխաները պետք է կռահեն, թե՞ որ նկարներն են տեղափոխվել:

● «Գտիր սխալ» հումոր-խաղ

Նկարները դրվում են շրջված: Երեխաները հերթով մոտենում են սեղանին, վերցնում մեկական նկար ու դիտավորյալ սխալ ասում, թե՞ ինչի համար է այն նախատեսված: Ընկերները պետք է ուղղեն նրան: Օրինակ. «Սա աթոռ է: Այն ուտելու համար է»:

Խաղերի տարբերակները կարելի է երկար թվարկել: Ինչպես նկատեցիք, ստեղծագործական մոտեցման դեպքում, եղած զարգացնող պարագաներով կարելի է խաղալ բազում խաղեր:

Նշված խաղերը զարգացնում են երեխաների ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, հարստացնում են բառապաշարը, զարգացնում քերականորեն ճիշտ խոսելու կարողությունը, կապակցված խոսքը, ստեղծագործելու կարողությունը: Այս խաղերի որոշ տարբերակներ կարելի է խաղալ *խմբային ձևով*:

Օրինակ՝

● Երեխաներին բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին առաջարկել սեղանի վրայից վերցնել որոշակի թվով նկարներ, միասին հորինել պատմություն ու պատմել ընկերներին:

● Յուրաքանչյուր խմբին առաջարկել մեծ քարտի վրա փոքր նկարները սխալ դասավորել: Ապա, մանկավարժի հրահանգով տեղափոխվել մյուս սեղանի շուրջը և վերացնել ընկերների ստեղծած խառնաշփոթը՝ նկարները դնելով ճիշտ տեղերում:

● Նկարները լցնել մի սեղանի վրա, իսկ երեխաների յուրաքանչյուր խմբին հանձնարարել առանձնացնել ու իրենց սեղանի վրա տեղափոխել այս կամ այն սկզբունքին համապատասխանող նկարները: Օրինակ՝ մի խումբը կառանձնացնի առարկաների կարմիր նկարները, մյուսը՝ կանաչ, երրորդը՝ կապույտ: Կամ մի խումբը կառանձնացնի հագուստ, մյուսը՝ ուտելիք, երրորդը՝ կենդանիներ պատկերող նկարներ:

Խմբային ձևով կազմակերպված խաղերը կնպաստեն ոչ միայն երեխայի մտավոր, խոսքային զարգացմանը, այլև շփմանը, հաղորդակցմանն ու համագործակցությանը:

Խոսքի քերականական կողմի զարգացմանը նպաստող խաղեր

Խոսքի քերականական կողմի զարգացմանն ու նախադասության ընդարձակմանը նպաստող խաղերում կարևոր է, որ՝

- այս կամ այն հոլովածևր պարբերաբար կրկնվի,
- այս կամ այն շաղկապը պարբերաբար կրկնվի,

- այս կամ այն ժամանակաձևը կիրառվի,
- երևակայական իրավիճակներ կիրառվեն:

Պարբերաբար կրկնվելու անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ այս դեպքում երեխաներն առավել լավ են յուրացնում նյութը: Հոլովածների պարբերաբար կրկնվելու լավագույն օրինակներ են կրկնվող գործողություններ պարունակող հեքիաթները:

Օրինակ՝ «Պապն ու շաղգամը» պատմելիս կամ խաղարկելիս երեխաները անընդհատ կրկնում են բացառական հոլովածը.

«...Թոռը կանչեց շնիկին.

Շունը՝ թոռից,

Թոռը՝ տատից,

Տատը՝ պապից,

Պապը՝ շաղգամից.

Հա՛ քաշեցին, քաշքշեցին,

Շաղգամը հողից

Չհանեցին...»

Նույնը՝ «Գնդիկ բոքոնիկը» հեքիաթում: «...Ես տատիկից փախել եմ, ես պապիկից փախել եմ, նապաստակից փախել եմ, գորշ գայլից փախել եմ, ծուռթաթ արջից փախել եմ, քեզանից փախչելն ի՞նչ է որ...»:

Նշված դեպքերում, հոլովածի կրկնությունների շնորհիվ հնարավոր է լինում ամրապնդել երեխայի՝ տվյալ հոլովածը ճիշտ կիրառելու ունակությունը՝ նպաստելով խոսքի քերականական կողմի զարգացմանը:

Շաղկապները խոսքում կիրառելու ու նախադասություններն ընդարձակելու համար կարելի է օգտագործել գործողություն պատկերող նկարներ: Եթե դրանք հակադիր գործողություններ պատկերող նկարներ են, ապա խաղալիս կարելի է երեխային սովորեցնել նախադասությունն ընդարձակել՝ կիրառելով «իսկ» շաղկապը:

Օրինակ՝ Աղջիկը ծիծաղում է, իսկ տղան լացում է:

Նապաստակը վազում է, իսկ կրիան քայլում է:

Իրար հաջորդող իրադարձությունների պատճառահետևանքային կապ պատկերող նկարների շարքը կարելի է կիրառել «ապա» և «որովհետև» շաղկապները բառապաշար ներմուծելու և դրանց շնորհիվ նախադասությունը ընդարձակելու նպատակով: Եթե սկզբում ներկայացվում է պատճառը պատկերող նկարը, ապա՝ հետևանքը պատկերողը, երեխան սովորում է օգտագործել «ապա» շաղկապը:

Օրինակ՝ տղան դրսում խաղաց, ցեխոտվեց, ապա եկավ տուն ու լողացավ: Այս նույն նկարները հակառակ հերթականությամբ ներկայացնելու դեպքում կնպաստենք երեխայի բառապաշարում «որովհետև» շաղկապի ներմուծմանը:

Օրինակ՝ տղան լողացավ, որովհետև դրսում խաղացել ու ցեխոտվել էր:

Ժամանակաձևերն օգտագործել սովորեցնելիս կարելի է կիրառել ինչպես նկարներ ու քարտեր, այնպես էլ՝ երեխաների լուսանկարները: Լուսանկարների



կիրառումն առավել արդյունավետ է, քանի որ երեխաները հաճախ դժվարությամբ են կողմնորոշվում ժամանակի մեջ: Սեփական փորձառության հետ ուսումնառությունը կապելը հեշտացնում է ժամանակի մեջ կողմնորոշվելն ու դրանց համապատասխան բառերը յուրացնելը: Օրինակ՝ երեխաներին կարելի է լուսանկարել օրվա ընթացքում, տարբեր գործողություններ կատարելիս: Միառժամանակ հետո կարելի է սեղանին դասավորել նկարներն ու առաջարկել առանձնացնել այն լուսանկարները, որոնցում պատկերված գործողությունները նրանք կատարել են առավոտյան կամ երեկոյան: Կարելի է առաջարկել առանձնացնել երեկ, օրեր առաջ, ձմռանը կատարած գործողությունների լուսանկարները: Առանձնացնելուց հետո երեխաները պատմում են, թե ինչ է պատկերված լուսանկարներում՝ օգտագործելով համապատասխան ժամանակաձևը:

Նախադասության ընդարձակման և խոսքի քերականական կողմի զարգացման նպատակով կարելի է օգտագործել նաև նկարներ կամ իրավիճակների նկարագրություններ:

Օրինակ՝ նկարում պատկերված է, թե ինչպես է տղան արմունկով դիպչում ծաղկամանին ու այն կտրում: Այս դեպքում կարելի է հարցնել, թե ինչ կանեին երեխաները տվյալ իրավիճակում՝ խնդրելով, որ նախադասությունը սկսեն սկզբից: Այսինքն՝ ասեն. «Եթե ես պատահաբար կտրեի ծաղկամանը, ապա ...» կամ «Եթե ես խաղի ժամանակ պատահաբար հարվածեի ընկերոջս, ապա...»: Նախադասության շարունակման տարբերակները կարող են բազմազան լինել: Այս դեպքում, քանի որ մանկավարժի նպատակը երեխաների՝ նախադասությունը ընդարձակելու և այն քերականորեն ճիշտ կազմելու կարողության զարգացումն է, ցանկալի չէ խաղը վերածել բարոյախրատական զրույցի, եթե նույնիսկ երեխայի առաջարկած նախադասության ավարտը մանկավարժի կողմից ընդունելի չէ: Աշխատեք չչեղվել տվյալ պարապմունքի նպատակից:

Գրաճանաչության զարգացմանը նպաստող խաղեր

Գրաճանաչությանն ուղղված պարապմունքները, զուգորդվելով ուսումնական գործընթացին, առավել հազվադեպ են ուղեկցվում խաղերով: Սովորաբար մանկավարժը ցույց է տալիս տառը, այն անվանում, ապա սաներին հարցնում, թե դա որ տառն է՝ փորձելով կրկնությունների միջոցով նպաստել դրա մտապահմանը: Ինչպես մյուս դեպքերում, գրաճանաչությանն ուղղված պարապմունքներում ևս խաղերը նպաստում են երեխաների ոգևորմանը և բարձրացնում աշխատանքի արդյունավետությունը:

Անդրադառնանք տառաճանաչությանը նպաստող խաղային վարժությունների որոշ օրինակների.

● Երեխաներին ներկայացվում է երկու ծաղիկ: Մեկի պսակաթերթերին գրված են տառեր, մյուսին՝ ոչ: Երեխաները պետք է նույն տառերը վերցնեն տառադարանից ու տեղադրեն երկրորդ ծաղիկի պսակաթերթերի վրա:

● Բաժանվում են թերթիկներ, որոնց վրա գրված են ավելորդ մասնիկներով տառեր: Երեխաները պետք է ջնջեն սխալ գրված տառերը:

● Բաժանվում են թերթիկներ, որոնց վրա գրված են ճիշտ և հայելաձև գրված տառեր: Երեխաները պետք է ջնջեն սխալները:

● Սեղանին շարվում են տառեր: Երեխաները ուշադիր դիտում են դրանք, ապա՝ փակում աչքերը: Խաղավարը թաքցնում է տառերից մեկը: Երեխաները աչքերը բացելուն պես պետք է կռահեն, թե որ տառն անհետացավ: Նույն խաղը կարելի է խաղալ՝ տեղափոխելով տառերը: Այս դեպքում երեխաները պետք է կռահեն, թե որ տառերն են տեղափոխվել:

● Գրանշաններով կարելի է կատարել թվաբանություն (Պայլոգյան Ժ., 2018):

Օրինակ՝

Ի+Լ=

Ու-Լ=

Ա+Լ=

● Տառադարանից հանվում ու սենյակի կենտրոնում են լցվում երեխաների սովորած տառերը: Երեխաները կանգնում են շրջանաձև, յուրաքանչյուրի դիմաց գրված է լինում մեկական տառ: Հնչում է երաժշտությունը: Երեխաները սկսում են պտտվել շրջանաձև: Երբ երաժշտությունը դադարում է, երեխաները կանգ են առնում, նայում են, թե որ տառի մոտ են կանգնել, վազում են կենտրոն, խառը լցված տառերի միջից ընտրում են այդ տառերը և բերում, լցնում են վերջինիս վրա: Կրկին հնչում է երաժշտությունը, երեխաները սկսում են պտտվել: Ամեն անգամ երեխան կանգնում է այլ տառի մոտ, կենտրոնից հավաքում է դրանք՝ հետզհետե ամրապնդելով իր սովորած բոլոր տառերը:

Ի դեպ՝ այս խաղը կարելի է խաղալ նաև թվերով, գույներով, երկրաչափական պատկերներով և այլն:

Տառերը մտապահելուց բացի՝ ավագ նախադպրոցական տարիքում կարևոր է, որ երեխան կարողանա բառերը ենթարկել հնչյունային ու վանկային վերլուծության ու համադրության:

Անդրադառնանք հնչյունային ու վանկային վերլուծությանն ու համադրությանը նպաստող խաղերի որոշ օրինակների:

● Երեխաներին առաջարկվում է սենյակում գտնել ու մատնացույց անել առարկաներ, որոնց անվանումները պարունակում են այս կամ այն քանակի հնչյուններ կամ վանկեր:

● Երեխաները կանգնում են պատի երկարությամբ, մանկավարժը նրանց հերթով ասում է բառեր: Բառը լսելուց հետո տվյալ երեխան պետք է «քայլի բառը»: Յուրաքանչյուր քայլը համապատասխանում է մեկ վանկի:

● Երեխաներին տրվում են թղթե կտրոններ, որոնք գծանշամբ բաժանված են որոշակի մասերի: Յուրաքանչյուր մասը խորհրդանշում է վանկերի կամ հնչյունների քանակ: Երեխան տվյալ կտրոնով մոտենում է իր ընկերոջը և կտրոնը փոխանակում

ընկերոջ մոտի այն առարկայի հետ, որի անվանումը վանկային կամ հնչյունային կառուցվածքով համապատասխանում է տվյալ կտրոնին:

Օրինակ՝ եթե կտրոնը ունի հինգ հնչյուն խորհրդանշող հատվածներ, ապա երեխան կարող է վերցնել սալոր, խնձոր և լոլիկ, քանի որ այդ բառերը պարունակում են 5 հնչյուն: Եթե խաղը վերաբերում է վանկային վերլուծությանը, ապա երեխան ընտրում է առարկաներ, որոնց անվանումները պարունակում են վանկերի նշված քանակը:

Այսպիսով՝ ՆՌԻՀ-ում խաղերի կիրառումը բազմազանություն, հետաքրքրություն ու ոգևորություն է մտցնում գործընթացի մեջ՝ միանշանակ ապահովելով առավել բարձր արդյունավետություն:

Առաջարկություններ ընդանիքի հետ աշխատանքի վերաբերյալ

1. Կարևոր է, որ երեխան շատ խաղա: Ծնողին հորդորեք չճանրաբեռնել երեխային այնքան, որ խաղալու ժամանակ չմնա:
2. Խրախուսեք երեխայի բացօթյա ու հասակակիցների հետ խաղերը՝ համակարգչային խաղերի փոխարեն:
3. Ծնողին ուղղորդեք երեխայի հետ խաղալիս չճնշելու նրա ստեղծագործականությունը, չթելադրելու ցանկությունները: Կարևորեք այն հանգամանքը, որ երեխան խաղալիս ստեղծագործի:
4. Ծնողին օգնեք երեխայի համար ապահովել խաղային միջավայր ու հասակակիցների հետ խաղալու պայմաններ: Անհրաժեշտության դեպքում կարելի է խորհուրդ տալ հյուր ընդունել երեխայի հասակակիցներին՝ նրան խաղընկերներ ապահովելու նպատակով:
5. Եթե երեխայի խաղը տարիքային նորմին չի համապատասխանում, ծնողի հետ զրուցեք, ձեր մտահոգությունը հայտնեք նրան ու դիմեք մասնագետների օգնությանը:

ԲԱԺԻՆ 2. ԱՌԻՏԻՉՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սյուզաննա Պետրոսյան, սոցիալական մանկավարժ

Այս բաժնում ներկայացված է կարճ տեղեկություն աուտիզմի մասին, ինչպես նաև տրվում են գործնական խորհուրդներ աուտիզմ ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանք իրականացնելու համար:

Աուտիզմի համախտանիշը զարգացման խանգարում է, որն ի հայտ է գալիս կյանքի առաջին 5 տարիներին և շարունակվում է ողջ կյանքի ընթացքում: Այն ամենից հաճախ հանդիպող զարգացման խանգարումներից է համարվում և 4 անգամ շատ հանդիպում է տղաների մեջ¹: Համաձայն Հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի մշակած «Հոգեկան խանգարումների փաստորոշում և վիճակագրություն» ձեռնարկի վերջին տարբերակի (այսուհետ՝ ԱՎՁ-V)²՝ աուտիզմին բնորոշ փաստանշաններն են².

1. Սոցիալական հաղորդակցման և սոցիալական փոխազդեցության բացակայություն, այն է՝

- երեխաները խուսափում են շփումից, հուզականորեն անտարբեր են, հաճախ չեն արձագանքում նույնիսկ հարազատներին,
- մեծ դժվարությամբ են հասկանում և օգտագործում հաղորդակցման ոչ խոսքային ձևերը, այն է՝ աչքի կոնտակտ, ժեստեր, դեմքի արտահայտություն,
- դժվարությամբ են մտերմանում կամ ընկերանում, ուշադրություն չեն դարձնում հասակակիցներին:

2. Սահմանափակ և կրկնվող վարքաձևեր, հետաքրքրություններ և գործողություններ, մասնավորապես՝

- կրկնվող շարժումներ և խոսք (խաղալիքները շարում են նույն հերթականությամբ, կրկնում են նույն բառերը կամ հնչյունները, անկանոն շարժումներ են անում, ձեռքով պտտեցնում են առարկաները, հոտ են քաշում առարկաներից),
- արարողակարգային վարք, միօրինակ և անփոփոխ միջավայրի պահանջ (միշտ ձգտում են քայլելու նույն ճանապարհով, ուտում են գրեթե միատեսակ սնունդ, յուրաքանչյուր փոփոխություն մեծ անհանգստություն և տագնապ է առաջացնում երեխաների մեջ),

¹ <https://www.autismspeaks.org/what-autism>,

² <https://www.psychiatry.org/psychiatrists/practice/dsm>

● *Խիստ արտահայտված հետաքրքրություններ կամ սահմանափակ հետաքրքրություններ. օրինակ՝ երեխան կարող է չափից դուրս տարված լինել խաղալիք ավտոմեքենաներով կամ ընդհանրապես հետաքրքրություն չդրսևորել խաղերի նկատմամբ.*

● *միջավայրային գործոնների նկատմամբ գերզգայունություն կամ զգայունության պակաս, այն է՝ վառ լույսերի, աղմուկի, բարձր ձայների, մարդաշատ վայրերի: Նման միջավայրերում այս երեխաները կարող են փակել աչքերը, ականջները, խուսափել ֆիզիկական շփումից:*

Երբ անհանգստանալ և դիմել մասնագետի

Հայաստանում ախտորոշումը տրվում է միայն հոգեբույժների կողմից: Այնուամենայնիվ՝ մասնագետները նշում են, որ եթե երեխան ունի վերոնշյալ 1-ին կետի բոլոր 3 և 2-րդ կետի առնվազն 2 ախտանշանները, ուրեմն պետք է ուղղորդել մասնագետի մոտ³:

Հետևյալ ախտանշանները ևս կարող են ազդարարել, որ երեխան գտնվում է աուտիզմի համախտանիշի ռիսկային զոնայում⁴:

- ▶ 6 ամսականում և դրանից հետո երեխան չի ժպտում կամ ջերմության այլ դրսևորում չի ցուցաբերում,
- ▶ 9 ամսականում փոխադարձաբար չի արձագանքում ուրիշների խոսքին, ժպիտներին կամ դեմքի արտահայտություններին,
- ▶ 12 ամսականում չի թոթովում,
- ▶ 12 ամսականում մատով չի ցույց տալիս, չի թափահարում, «հաջող չի անում»,
- ▶ 16 ամսականում գոնե 1 բառ չի արտաբերում,
- ▶ 2 տարեկանում առնվազն 2 բառից կազմված իմաստավորված բառակապակցություն չի ասում (սա չի վերաբերում նմանակմանն ու կրկնօրինակմանը),
- ▶ Որևէ տարիքում երեխան ունեցել է խոսքի, թոթովանքի և սոցիալական հմտությունների կորուստ⁵:

Ասպերգերի համախտանիշ

Ասպերգերի համախտանիշը ևս բնութագրվում է աուտիզմին հատուկ՝ սոցիալական շփման և հաղորդակցման դժվարություններով: Այս երեխաները ևս ունենում են սահմանափակ հետաքրքրություններ և կրկնվող վարք: Նրանք ինքնամփոփ են և դժվարությամբ են ընկերներ ձեռք բերում:

³ Talin Babikian, PhD, ABPP, UCLA, Neurodevelopmental Disorders, PPT

⁴ Gerald T. Guild, PhD, Early Signs of Autism, https://www.tclny.org/content/Policies/early_signs_of_autism_revised_10-08.pdf

⁵ Պետրոսյան Ս. (Ներառական կրթությունը գործնականում, ուսումնամեթոդական ձեռնարկ, 2018, էջ 9-10



Սա մանկական աուտիզմից տարբերվում է նրանով, որ այս դեպքում պահպանված է խոսքը, և բացակայում է ճանաչողական ոլորտի զարգացման հապաղումը⁶: Երբեմն, չունենալով հաղորդակցման տարրական հմտություններ, կարող են բացարձակ ընդունակություններ դրսևորել այլ բնագավառներում (մաթեմատիկա, երաժշտություն, ֆիզիկա և այլն):

Գործնական մոտեցումներ աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատանքում

Վարքային մոտեցում

Երեխան դրսևորում է կարծրատիպային վարքագիծ (ոտքերով խփում է հատակին, գոռում է), երբ հուզված է, ձանձրանում է կամ գտնվում է սթրեսային վիճակում: Վարքային յուրաքանչյուր դրսևորում ունի իր պատճառը. փորձեք հասկանալ այն: Հաճախակի դիտարկելով երեխայի վարքը և գրառումներ կատարելով դրանից առաջ և հետո տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ կարելի է արդեն կանխորոշել վարքի դրսևորման հնարավոր պատճառները, որպիսիք են՝

- ուշադրություն գրավելու մղումը,
- ցանկություն արտահայտելու անհրաժեշտությունը,
- առաջադրանքներից խուսափումը,
- ինքնախթանումը և այլն⁷:

▶ «Կիրառական վարքային վերլուծության» տեսության կողմից առաջարկվող՝ վարքի կառավարման տեխնիկաներ, որոնք կօգնեն ձեզ վարքային արդյունավետ միջամտություն իրականացնել աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատանքում⁸:

Սովորեցրեք հաղորդակցվել: Հնարավորություն ստեղծեք, որ երեխան կարողանա արտահայտել իր պահանջներն ու ցանկությունները խոսքով, ժեստով կամ նկարների միջոցով: Օրինակ՝ որևէ բան ցանկանալու դեպքում երեխային սովորեցրեք խնդրել կամ համապատասխան նկարով ցույց տալ գոռալու փոխարեն:

Առաջարկեք այլընտրանքային վարք: Հաղորդակցվելու հմտություններին զուգահեռ սովորեցրեք նաև այլ միջոցներ կիրառելու տարբերակներ, օրինակ՝ ձեռքով ցույց տալ ցանկալի իրը կամ առարկան: Ինչպես նաև փորձեք հեշտացնել որոշ գործողություններ, որպեսզի նա կարողանա հաջողությամբ ավարտել դրանք:

⁶ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հրապարակած «Հիվանդությունների միջազգային դասակարգում», Տասներորդ վերանայում (ՀՄԴ-10, Հավելված ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանի, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=86263>

⁷ Functional Assessment Observation Form, <http://www.pent.ca.gov/frm/funcobserv.pdf>

⁸ Challenging Behaviors Tool Kit, <https://www.autismspeaks.org/sites/default/files/201808/Challenging%20Behaviors%20Tool%20Kit.pdf>

Խրախուսեք դրական վարքը: Ամեն անգամ, երբ երեխան ցանկալի իրին կամ իրավիճակին հասնելու համար խնդրում է, քաջալերեք նրան և անմիջապես տվեք ցանկալի իրը, որպեսզի խրախուսեք դրական վարքը և դա արեք որքան հնարավոր է հաճախ:

Փոխեք ձեր վարքը երեխաների հետ աշխատանքում: Շատ հաճախ աուտիզմ ունեցող երեխաների վարքի պատճառ կարող է դառնալ մեր կողմից տրվող արձագանքը: Երբեմն այն կարող է խրախուսել երեխայի անցանկալի վարքը, ուստի պետք է լինել վճռական և հետևողական, միևնույն ժամանակ պետք է շեղել երեխայի ուշադրությունը այլ հանձնարարությամբ կամ առաջարկով: Օրինակ՝ եթե երեխան գդալով հարվածում է սեղանին, դուք վերցնում եք այն նրա ձեռքից, և նա ուժեղ լաց է լինում, ապա կարող եք առաջարկել, որ գնա, լվացվի, որից հետո կարող եք առաջարկել, որ ընտրի իր սիրելի խաղալիքները որևէ մեկը և խաղա: Եթե նկատում եք, որ երեխան անցանկալի վարք է դրսևորում ձեր ուշադրությունն ու արձագանքը ստանալու համար, փորձեք անտեսել այդ վարքը, եթե այն լուրջ վտանգ չի ներկայացնում երեխայի և շրջապատի համար, և նորից ուղղորդեք այլ գործողության: Միևնույն ժամանակ խրախուսեք ուշադրություն գրավելու դրական վարքը և ամեն անգամ հիշեցրեք, որ դա է ճիշտ տարբերակը:

Իրականացրեք կանխարգելող միջոցառումներ: Խիստ անհրաժեշտ է նախօրոք ճանաչել երեխայի անցանկալի վարքի ի հայտ գալու նշանները: Երբ արդեն անցանկալի վարքի նախանշաններ եք նկատում, պետք է արագ կողմնորոշվել, մինչ երեխան կկորցնի սեփական վարքի հանդեպ վերահսկողությունը: Օրինակ՝ եթե նկատում եք, որ կոնկրետ առաջադրանքի պատճառով երեխան սկսում է լարվել և նյարդայնանալ, ապա մի անգամ էլ մտածե՛ք՝ արդյո՞ք այն կարևոր է այդ պահի համար. եթե կարևոր է, կարելի է ավելացնել օգնությունը, որ շուտ վերջացնի, և թույլ տալ փոքր-ինչ հանգստանալ:

Ապահովեք կանխարգելիչություն: Հնարավորության դեպքում երեխային նախապատրաստեք սպասվելիք փոփոխություններին. կարող եք օգտագործել նկարներ, հերթականությունը հուշող պատկերներ, հաճախակի գրուցեք սպասվելիք փոփոխությունների մասին:

Ապահովեք ընտրության հնարավորություն: Երեխային տվե՛ք ընտրության հնարավորություն, օրինակ՝ ասելով. «Առաջինը ուզում ես՝ նկարե՞նք, թե՛ լեզոներով խաղանք»:

Զգայական ինտեգրում

Զգայական ինտեգրումը մի գործընթաց է, որի շնորհիվ մարդիկ կարողանում են զգայական համակարգի միջոցով ընկալել, կարգավորել և տարբերակել շրջապատից ստացվող ազդակները և, ի պատասխան դրանց, իմաստավորված և հարմարվողական



վարք ցուցաբերել⁹:

Աուտիզմ ունեցող երեխաները շատ հաճախ բախվում են զգայական ինտեգրման լուրջ դժվարությունների, և նրանց դրսևորած անցանկալի վարքի հիմքում կարող են ընկած լինել զգայական անհարմարություններ¹⁰: Երեխան կարող է չափից դուրս զգայուն լինել աղմուկի նկատմամբ և անընդհատ փակել ականջները, մյուս կողմից՝ երեխայի պրոպրիոցեպտիվ զգացողությունը, որը պատասխանատու է մարմնի դիրքի, ծանրության, ճնշման, շարժումների և տարածության մեջ մարմնի դիրքի փոփոխության համար, կարող է լավ զարգացած չլինել. որպես արդյունք՝ երեխան կարող է անընդհատ պտտվել իր առանցքի շուրջ մարմնի զգացողությունը կարգավորելու համար: Սովորաբար աուտիզմ ունեցող երեխաներին դուր են գալիս պտտվելը, հրելը, քաշելը, ցատկելը, ինչ-որ բանից կախվելը, ինչպես նաև՝ մարմնի վրա ծանրության զգացողությունը, հաճախ հաճելի ֆիզիկական ակտիվությունն օգնում է նրանց կենտրոնացնել ուշադրությունը, նայել դիմացինի աչքերի մեջ: Թեև կան երեխաներ, ովքեր խուսափում են ֆիզիկական ակտիվությունից և ավելի հարմարավետ են զգում պասիվ վիճակում¹¹:

▶▶ Միջավայրային ազդակներ, որոնք կարող են աուտիզմ ունեցող երեխաների մեջ անհարմարության զգացում առաջացնել.

- էլեկտրական սարքերի, օրինակ՝ հեռուստացույցի՝ բարձր հաճախականությամբ արձակվող ձայներ, որոնք շատ մարդիկ նույնիսկ չեն լսում,
- անընդմեջ թրթռացող լույսեր՝ համակարգչի էկրան, լուսադիոդային (LED) լամպեր և այլն,
- վառ արտահայտված հոտեր, օրինակ՝ օձանելիքի, հոտազերտիչի (դեզոդորանտի), ուտելիքի, օդը թարմացնող միջոցների հոտեր,
- սովորական ձայները, օրինակ՝ երթևեկության ձայները, ոտնաձայները հաճախ կարող են անհանգստացնել աուտիզմ ունեցող երեխաներին,
- արտացոլանքներ՝ հայելիներ, փայլուն լամպեր, ապակի,
- անհարմար մակերերևույթներ՝ կոշտ մակերես, սառը, մետաղական առարկաներ,
- շարժվող առարկաներ՝ վարագույրներ, քամուց շարժվող դռներ,
- վառ հակադրություններով առարկաներ՝ շախմատի տախտակ, արստրակտ (վերացական) նկար, գունավոր բաժակ, փայլուն լույսեր:

⁹ (Ayres, 1976/2005) From Frequently Asked Questions About Ayres Sensory Integration®, AOTA, 2008, Doi:<https://www.irvinetherapyservices.com/resources/sensory-integration/>

¹⁰ Cindy Hatch-Rasmussen, M.A., OTR/L, Doi:<https://www.autism.org/sensory-integration/>

¹¹ Айрес, Э. Дж. Ребенок и сенсорная интеграция. Понимание скрытых проблем развития / Э. Дж. Айрес; [пер. с англ. Юлии Да-ре]. - М.: Теревинф, 2009. - 272163-171, с.163-171

➡ **Ջգայական միջոցառումների մի քանի օրինակներ, որոնք կօգնեն հարմարավետ միջավայր ստեղծել աուտիզմ ունեցող և առհասարակ բոլոր երեխաների համար¹²:**

➡ Սենյակում ստեղծեք զգայական անկյուն, որտեղ երեխան կարողանա առանձնանալ և հանգստանալ շրջապատի ազդակներից: Հնարավորության դեպքում տեղադրեք փափուկ բազկաթոռ կամ մեծ փչովի գնդակ (նկ.1):



Նկար 1. Ջգայական անկյուն

➡ Սենյակի անկյունում ստեղծեք **զգայական պատ**, որտեղ երեխաները կարողանան ձեռք տալ տարբեր մակերևույթներին, հավասարակշռել զգայական պահանջները (նկ.2):



Նկար 2. Ջգայական պատ

➡ Պատրաստեք **զգայական արկղ**, որտեղ կարող են լինել տարբեր կենցաղային իրեր, օրինակ՝ պլաստիկ շշեր, տարաներ, սիլիկոնե խոհանոցային առարկաներ, զգայական խաղալիքներ, շղթաներ, օճառե պղպջակներ, սպիներներ, փոքրիկ գնդակներ, լոբազգիներով, բրնձով լցված տոպրակներ: Ժամանակ առ ժամանակ այս

¹² <https://harkla.co/blogs/special-needs/sensory-room-ideas-for-home-or-classroom>
<https://www.iidc.indiana.edu/irca/articles/sensory-integration-tips-to-consider.html>

իրերը տալով երեխաներին՝ դուք կդառնաք նրանց շրջապատում ամենանախընտրելի մարդկանցից (նկ.3):



Նկար 3. Չգայական իրեր

➡ **Չգայական տախտակը**, զբաղվածություն ապահովելուց բացի, կօգնի երեխաներին բարելավել ուշադրության կենտրոնացումը, խոսքը, հիշողությունը, տրամաբանությունն ու երևակայությունը: Այն նաև կարող է ծառայել որպես ուժեղ խրախուսանք: Օրինակ՝ երեխային կարելի է ասել. «10 բոլբոլ կխաղաս ընկերներիդ հետ, հետո կգնաս Չգայական տախտակի մոտ» (նկ.4):



Նկար 4. Չգայական տախտակ

Սոցիալականացում և հաղորդակցման հմտություններ

Աուտիզմ ունեցող երեխաները սոցիալականացման դժվարություններ ունեն, քանի որ դժվարանում են հասկանալ, տարբերակել իրականն ու ոչ իրականը, ճիշտն ու սխալը:



Այս ամենին կարելի է հասնել՝ մուտք գործելով երեխայի աշխարհ՝ շփում հաստատելու, վստահություն ձեռք բերելու, անհրաժեշտ սոցիալական հմտություններ սովորեցնելու միջոցով: Այս ամենից հետո միայն հնարավոր կլինի օգնել նրանց:

▶▶▶ *Սոցիալական հմտությունների ուսուցանմանն ու հաղորդակցման զարգացմանն ուղղված գործնական խորհուրդներ, որոնք կօգնեն ձեզ աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատանքում:*

▶▶▶ երեխային խոսքի ընկալման համար լրացուցիչ ժամանակ է պետք, հետևաբար՝ անհրաժեշտ է խոսել պարզ բառերով և նախադասություններով,

▶▶▶ երեխայի հետ հաղորդակցվելիս ընտրեք այն եղանակը, որը նա արդեն յուրացրել է: Օրինակ՝ եթե նա սովորել է նկարների միջոցով արտահայտել իր ցանկությունը, նրա հետ օգտագործեք նկարներով հաղորդակցվելու եղանակը,

▶▶▶ օգնեք նրան հաղորդակցվել, բայց, որ ավելի կարևոր է, սովորեցրեք հաղորդակցվել այլ երեխաների հետ և հասկանալ դրա նշանակությունը: Օրինակ՝ սովորեցրեք բարևել ընկերներին, երբ խումբ է մտնում, և ամեն անգամ, երբ նա բարևում է, խրախուսեք և քաջալերեք նրան,

▶▶▶ կիրառեք պատկերային աջակցություն և այլընտրանքային հաղորդակցման միջոցներ, օրինակ՝ կարիքները, ցանկությունները, զգացումները արտահայտող քարտեր. օրինակը տես՝ ձեռնարկի «Երեխաների հաղորդակցման բարելավումը նկարների/սիմվոլների միջոցով» բաժնում:

▶▶▶ կրկնեք երեխաների խոսքը՝ ավելացնելով նրանց բաց թողած բառերը,

▶▶▶ արտասանեք այն առարկաների անունները, որոնք նրանք վերցնում են,

▶▶▶ երեխաներին օգնեք ներգրավվել թիմային աշխատանքներում: Շատ կարևոր է երեխաներին սովորեցնել համագործակցել և աշխատել խմբով. այստեղ կարող է օգնության հասնել հստակ կանոններ սահմանելը և ընդունված կանոններին հետևելը,

▶▶▶ սովորեցրեք հրաժեշտ տալ խաղալիքներին, երբ դրանք արդեն հավաքում եք,

▶▶▶ սովորեցրեք օգտագործել «կախարդական» բառեր,

▶▶▶ ստեղծեք իրավիճակներ, որոնք կստիպեն երեխային հաղորդակցվել, օրինակ՝

● ցույց տվեք նրան լույսերով կամ ձայնով խաղալիք,

● ցույց տվեք օճառե պղպաջակներ,

● առաջարկեք այնպիսի բան, որ նրանք չեն սիրում,

● ձեռքում պահեք զգայական խաղալիքը կամ իրը,

● անավարտ թողեք խճանկարը,

● երկու տարբերակներից մեկը ընտրելու հնարավորություն տվեք,

● բաց թողեք դրսի դուռը,

● խաղալիս սխալ մասնիկ առաջարկեք:

Աշխատելիս շատ կարևոր է ձեռք բերել երեխայի վստահությունն ու մտերմությունը: Ջանացեք երեխայի համար դառնալ խրախուսող անձ: Խրախուսեք ամեն անգամ, երբ նա փորձում է շփվել ձեզ հետ:

Ինքնասպասարկման հմտություններ և ինքնուրույնություն

Սովորաբար ընտանիքն է պատասխանատու երեխայի ինքնասպասարկման հմտությունների զարգացման համար, սակայն ՆՈՒՀ-ը ևս անմասն չի մնում այս գործընթացից: Շատ երեխաների համար այն խթանիչ միջավայր կարող է ծառայել անհրաժեշտ ինքնասպասարկման հմտություններ սովորելու համար: Աուտիզմ ունեցող երեխաները, սոցիալական, վարքային, զգայական և այլ խանգարումներով պայմանավորված դժվարություններ ունեն ինքնասպասարկման հմտությունների ձեռքբերման և զարգացման գործընթացում¹³, սակայն զարգացման խանգարումը չպետք է խոչընդոտի երեխաներին ինքնասպասարկման հմտություններ սովորեցնելու գործում: Այս տեսանկյունից մեծահասակների լավագույն օգնությունը կլինի սովորեցնել երեխաներին ինքնուրույն հոգալ իրենց կարիքները: Ինքնասպասարկման հմտությունների ուսուցանումը ենթադրում է հրահանգավորում և աջակցություն՝ ուտելիս, հագնվելիս, զուգարանից օգտվելիս, բակում խաղալիս և կենսական անհրաժեշտություն ունեցող այլ գործողություններ կատարելիս¹⁴:

➡ **Ինքնասպասարկման հմտությունների ուսուցանման համակարգված մոդելում**

Գիտնականների¹⁵ մի խումբ առաջարկում է «Կիրառական վարքային վերլուծության» տեսությունից բխող հմտությունների ուսուցանման հաջորդական քայլեր, որոնք կօգնեն ոչ միայն աուտիզմ ունեցող, այլև մյուս բոլոր երեխաներին ձևավորել ինքնուրույնություն և ավելի քիչ կախվածություն ունենալ մեծահասակներից: Այդ քայլերն են.

- 1) հստակեցնել, թե ի՞նչ հմտություն էք ուզում սովորեցնել.
- 2) հմտությունը բաժանել ավելի փոքր քայլերի.
- 3) համակարգված կազմակերպել նոր հմտության ուսուցանումը.
- 4) գրանցել առաջընթացը համապատասխան թերթիկում.
- 5) անհրաժեշտության դեպքում փոխել ուսուցանելու մեթոդը:

Օրինակ՝ եթե որոշել եք սովորեցնել օգտվել զուգարանակոնքից, ապա կարող եք այս հմտությունը բաժանել մի քանի քայլերի: Այստեղ կարևոր է, որ առաջին քայլը սովորեցնելուց հետո միայն անցնեք մյուսին, և այդպես շարունակ. նշված դեպքում այդ քայլերը կլինեն. սովորեցնել արձակել կոճակը, իջեցնել տաբատի շղթան, իջեցնել տաբատը, նստել զուգարանակոնքին և այլն: Կարելի է այս քայլերը, որպես առանձին հմտություն, սովորեցնել դիդակտիկ նմուշների վրա (նկ.6):

¹³ Kim D Lucker, Ph.D, BCBA, A Review of Self-Help Skills for People with Autism: A Systematic Teaching Approach, by Stephen R. Anderson, Amy L. Jablonski, Marcus L. Thomeer, and Vicki Madaus Knapp

¹⁴ Eileen K.Allen, Glynnis Edwards The Exceptional Child:Inclusion in Early Childhood Education, 373-375 p.,

¹⁵ A Review of Self-Help Skills for People with Autism: A Systematic Teaching Approach, by Stephen R.Anderson, Amy L.Jablonski, Marcus L.Thomeer, and Vicki Madaus Knapp
<https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC2854062/>



Նկար 6. Ինքնասպասարկման ուսուցանման դիդակտիկ նմուշ

Եթե ուզում եք, որ երեխան յուրացնի այս հմտությունը, ապա վարժությունը պետք է կատարել օրվա մեջ մի քանի անգամ, և խիստ էական է, որ երեխան հաճույքով անի դա: Մասնագետները խորհուրդ են տալիս այս հմտությունը սովորեցնելիս օգտագործել այն հագուստը, որը երեխան հաճույքով է հագնում և, որ ամենակարևորն է, հարմարավետ է: Օրինակ՝ տաբատի կոճակը կոճկելիս կարևոր է, որ այն մեծ անցք ունենա, շղթայի փականը ևս պիտի բավականաչափ մեծ լինի, որ երեխան կարողանա հեշտությամբ օգտագործել: Ծնողին կարելի է խնդրել, որ առավելագույնս հարմար կամ ազատ տաբատ հագցնի երեխային, որ երեխան հեշտությամբ կարողանա իջեցնել և բարձրացնել¹⁶:

▶ **Հուշում և պատկերային աջակցություն**

Նոր հմտություններ սովորեցնելիս հնարավոր է, որ երեխան մեծ դժվարություններ ունենա և հուսահատվելով փորձի հրաժարվել վարժությունը կատարելուց, հետևաբար՝ աշխատեք սկզբնական շրջանում ավելի շատ հուշել, ֆիզիկապես ուղղորդել, այնուհետև, հմտության յուրացմանը զուգընթաց, պակասեցրեք հուշումները: Օրինակ՝ հագուստի վրայի շղթայի մասը դու՛ք բարձրացրեք, իսկ մնացածը առաջարկեք, որ երեխան բարձրացնի: Այսպես երեխան տեսնելով, որ հաջող է կատարում, էլ ավելի կոգնորվի և հաջորդ անգամ ավելի վստահ կմասնակցի աշխատանքին: Շատ կարևոր է, որ հաճախակի խրախուսեք երեխայի դրական փորձերն ու քաջալերեք ջանքերը՝ ասելով «Շատ ապրես. տես ի՞նչ լավ է քեզ հաջողվում», կամ «Մի անգամ էլ փորձիր, քեզ արդեն

¹⁶ Eileen K. Allen, Glynnis Edwards The Exceptional Child: Inclusion in Early Childhood Education, 2015, 2012, p. 377-379

հաջողվում է, հաջորդը ավելի լավ կլինի»:

Պատկերային աջակցության միջոցով փակցրեք պարզ քայլերի հաջորդականությունը, օրինակ՝ բացել ծորակը, վերցնել օճառը, ձեռքերը պահել ջրի տակ և լվանալ, փակել ծորակը, սրբել ձեռքերը սրբիչով: Այդ ընթացքում կարելի է խոսքով և ժեստերով հուշել՝ ասելով «Դու հիմա օճառ ես վերցրել, հաջորդը պիտի ձեռքերդ պահես ջրի տակ»: Օրինակը տես ձեռնարկի «Երեխաների հաղորդակցման բարելավումը նկարների/սիմվոլների միջոցով» բաժնում:

Առաջարկություններ ընդհանրից հետո աշխատելու վերաբերյալ

➡ Կազմակերպեք տեղեկատվության փոխանակման համար արդյունավետ միջոցներ. կարելի է ընդհանուր օրագիր վարել, որտեղ ամեն օր կարճ գրանցումներ կարվեն երեխայի վարքային, հուզական, ֆիզիկական վիճակի/դրսևորումների վերաբերյալ,

➡ հնարավորության դեպքում ապահովեք հաղորդակցումը ծնողի և ՆՈՒՀ-ում աշխատող աջակցության խմբի հետ (հոգեբան, լոգոպեդ, սոցիալական աշխատող և այլն),

➡ Ժամանակ առ ժամանակ կազմակերպեք հանդիպում-քննարկումներ երեխայի հետ առնչվող բոլոր աշխատակիցների մասնակցությամբ՝ ընդգրկելով նաև ծնողին,

➡ ծնողի հետ համաձայնեցրեք ինքնասպասարկման, սոցիալական հմտությունների ուսուցանմանն ուղղված նպատակները և արդյունավետ համագործակցություն ձևավորեք նույն նպատակի շուրջ, քանզի տանը և շրջապատում տեղի ունեցող կրկնությունների շնորհիվ՝ երեխան կկարողանա ընդհանրացնել սովորած հմտությունը:

Ներկայումս աուտիզմ ունեցող անձանց մեկ երրորդը կարող է որոշակի ինքնուրույնությանը ապրել և գործել հասարակության մեջ: Ըստ որոշ հետազոտությունների՝ արդյունավետ իրականացվող թերապիաների և սոցիալական ծրագրերի օգնության շնորհիվ այս թիվը կարող է աճել¹⁷:

Աուտիզմ ունեցող մարդիկ կարող են դուրս գալ իրենց հնարավորությունների սահմաններից և վերափոխվել հրաշալի, հաջողակ քաղաքացիների: Մեր պարտականությունն է՝ տեսնել այս պայծառ երեխաներին, ինչպիսիք որ կան իրականում, օգնել նրանց անցնել այս բոլոր դժվարությունների միջով և թույլ չտալ պիտակվել և սահմանափակվել իրենց ախտորոշումով:

¹⁷ Johnson et al.,2009; Mahar et al.,2013/Power, 2013, Effects of a Before-School Physical Activity Program on Physical Activity and On-Task Behavior:DOI: 10.1249/01.MSS.0000402740.12322.07

ԲԱԺԻՆ 3.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԻ ԵՎ ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՈՒՄ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Թագուհի Մակարյան, հոգեբան

Սույն բաժնում կներկայացվեն՝ ինչ է ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշը (ՈՒՊԳՀ), ինչպես է այն դրսևորվում: Հստակորեն կցուցանվեն սովորական ակտիվությունը գերակտիվության համախտանիշից փարանջատելու սահմանները: Կմատուցվեն ցանկալի վարքի ձևավորման և անցանկալի վարքի հաղթահարման փարբեր ռազմավարություններ, մեթոդներ և հնարներ:

Ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշը հաճախ հանդիպում է մանկական հասակում, երբեմն կարող է շարունակվել նաև դեռահասության շրջանում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն որոշակի տարածում է ձեռք բերել և ոչ միայն լուրջ հիմնախնդիր է ծնողավարման գործընթացում, այլ նկատելի դժվարություններ է առաջացնում ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելիս (Заваденко Н.Н., 2000, Frieman, B.B., 2001):

Նախադարոցական հաստատություններում մանկավարժներն ՈՒՊԳՀ ունեցող երեխաների հետ աշխատելիս ունենում են մի շարք դժվարություններ՝ հատկապես վարքի կառավարման հարցերում, քանի որ նման երեխաներն անկազմակերպ են, անուշադիր, գերակտիվ, դժվար են ենթարկվում կանոններին, շատախոսում են և շեղվում մի առաջադրանքից մյուսին անցնելիս:

ՈՒՊԳՀ-ն իմացական և վարքագծային մի շարք խանգարումների հավաքական համախտանիշ է, որը բացասաբար է անդրադառնում երեխայի զարգացման վրա: Այն երբեմն կարող է զուգակցվել այլ խանգարումներով, որոնք երկրորդական բնույթ են կրում:

Համախտանիշը բնութագրվում է ուշադրությունը կենտրոնացնելու, մղումային վարքը վերահսկելու, ինքնակառավարվելու և ինքնակազմակերպվելու դժվարություններով: ՈՒՊԳՀ ունեցող երեխաների վերոնշյալ դժվարություններն արտացոլվում են նրանց շփման և հաղորդակցման ոլորտում՝ առաջ բերելով խնդիրներ միջանձնային հարաբերություններում: Այս երեխաները դժվարությամբ են հարմարվում շրջապատին և իրենց անցանկալի վարքի պատճառով հիմնականում չեն ընդունվում շրջապատի, մասնավորապես հասակակիցների կողմից:

ՈւՊԳՀ ունեցող երեխաների թույլ կողմերի կողքին նպատակահարմար է մատնանշել նրանց ուժեղ կողմերը, որոնք նրանց հետ աշխատանքի կազմակերպման

հիմնական ռեսուրսներ կարող են ծառայել: Ուժեղ կողմեր կարող ենք համարել նրանց հետևյալ անձնային հատկանիշները.

- զգայուն են,
- հեշտ շահագրգռվող են,
- ոգեշնչվող են,
- եռանդուն են,
- անմիջական են,
- շնորհալի են և ստեղծագործող,
- սիրվող են,
- նվիրված են սիրելի մարդկանց:

Ինչպես ճանաչել ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշի դրսևորումները

Չնայած այն կարևոր հանգամանքին, որ ՈւՊԳՀ-ն ուսումնասիրված երևույթ է, համախտանիշի հայտնաբերման ստանդարտացված գործիք, որը կարողանա սահմանել՝ երեխայի որ վարքն է ցանկալի, որը՝ ոչ, դեռևս չի մշակվել:

Ընդհանրապես՝ թե՛ ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշի համատեքստում, թե՛ երեխաների վարքագծային խանգարումների մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ երեք գործոնների կարևորությունը.

- անցանկալի վարքի շարունակականությունը,
- անցանկալի վարքի դրսևորումների ինտենսիվությունը,
- երեխայի տարիքը:

Երեխայի անցանկալի վարքի դրսևորումները կարող են պայմանավորված լինել տարաբնույթ արտաքին և ներքին գործոններով.

- բնակավայրի փոփոխությամբ,
- նախադպրոցական հաստատության փոփոխությամբ,
- ընտանեկան կոնֆլիկտների (բախումների) առկայությամբ,
- երեխայի առողջական խնդիրներով,
- հոգեկան զարգացման խնդիրներով և այլն:

Ինչ վերաբերում է տարիքային գործոնին, հարկ է նշել, որ ոչ բոլոր երեխաների հուզական զարգացումն է ընթանում համաչափ. զարգացման ճգնաժամային փուլում երեխաներն առավել խոցելի են, և իրենց կյանքում կարող են դրսևորվել վարքագծային խնդիրներ:

Համաձայն հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի տեղեկատվության՝ վեց կամ ավելի օրվա խտանիշների՝ վեց ամիս կամ ավելի տևական դրսևորման դեպքում հավանական է, որ երեխան ունի ՈւՊԳՀ (Diagnostic and Statistical Manual of mental Disorders, 2000, DSM- IV-TR.):

Նպատակահարմար է նշել, որ ՈւՊԳՀ-ի դրսևորումները դիտարկելիս պետք է հաշվի առնել երկու կարևորագույն գործոններ.



- արդյո՞ք նշված դրսևորումները հանդիպում են երեխայի կյանքի բոլոր միջավայրերում՝ մանկապարտեզում, տանը, բակում,
- որքանո՞վ են տևական այդ դրսևորումները:

ՈւՊԳՀ դրսևորումներն ըստ ոլորտների

ՈւՊԳՀ-ն ունենում է ինչպես ընդհանուր դրսևորումներ (որոնք բնորոշ են ցանկացած ոլորտի), այնպես էլ՝ յուրահատուկ դրսևորումներ, որոնք բնորոշ են որոշակի ոլորտի (Лютова Е. К., Моница Г. Б., 2003):

|| ➡ **Ընդհանուր դրսևորումներ**

ՈւՊԳՀ ունեցող երեխան՝

- դժվարությամբ է քնում, ունի անհանգիստ քուն,
- կիսատ է թողնում ամեն գործողություն,
- արագ շեղվում է մի գործողությունից մյուսը,
- դեն է նետում է խաղալիքները,
- ունի խոսքի խանգարումներ (ներառյալ խոսքի տեմպի, ուղիղի և այլն),
- ունի ագրեսիվ (նախահարձակ) վարք,
- ունի նյարդային տիկեր,
- ունի բարձր գրգռվողականություն,
- ունի անհանդուրժողականություն լույսի, ձայնի հանդեպ,
- չի կարողանում հանգիստ խաղալ հասակակիցների հետ (նույնիսկ կարճատև):

|| ➡ **Դրսևորումներն ուսումնական գործընթացում**

Ուսումնական գործընթացում ՈւՊԳՀ ունեցող երեխան՝

- չի կարողանում հետևել ստացած հրահանգներին,
- հաճախ թվում է, թե չի լսում իրեն ուղղված խոսքը,
- չի ավարտում առաջադրանքներն ու պարտականությունները,
- չի սիրում և չի կամենում կատարել այնպիսի աշխատանք, որտեղ պահանջվում են երկարատև մտավոր ջանքեր,
- հաճախ և հեշտությամբ շեղվում է,
- կորցնում է առաջադրանքներ կատարելու համար անհրաժեշտ պարագաները (խաղալիք, մատիտ, գիրք):

|| ➡ **Դրսևորումները շարժողական ոլորտում**

Շարժողական ոլորտում ՈւՊԳՀ ունեցող երեխան՝

- ձեռքերով և ոտքերով անհանգիստ շարժումներ է կատարում
- հաճախ տեղից վեր է կենում և շարժվում, նույնիսկ՝ այն ժամանակ, երբ պետք է մնալ նստած,
- վազվզում, մագլցում է ամենուր,
- դժվարանում է սպասել իր հերթին,

- խոսելիս ընդհատում է մյուսներին,
- շատ է խոսում:

Անկախ ազգային և մշակութային տարբերություններից՝ ՌԻՊԳՀ ունեցող երեխաները դրսևորում են նմանատիպ վարքագիծ, անվստահ են, ունեն ցածր ինքնագնահատական:

Ուշադրության պակասի և գերակտիվության համախտանիշի պատճառները

ՌԻՊԳՀ-ն դիտվում է որպես կենտրոնական նյարդային համակարգի՝ ժառանգականորեն պայմանավորված նյարդաքիմիական դիսֆունկցիա (գործառախախտում), ինչպես նաև՝ շրջապատի սթրեսային գործոնների փոխազդեցության հետևանք ([Բաբլոյան Ա., Հակոբյան Ա., Երիցյան Մ., Սարգսյան Ս., 2008):

ՌԻՊԳՀ-ի պատճառները հստակ և միանշանակ չի կարելի նկարագրել, քանի որ համախտանիշն առաջանում է բազմաթիվ պատճառների համակցությամբ:

Բազմաթիվ հետազոտությունները վկայում են, որ ՌԻՊԳՀ-ն գենետիկական պայմանավորվածություն ունի (Faraone S. V., Biederman J., 1998): Այն երեխաները, որոնց ծնողներն ունեն ՌԻՊԳՀ, կարող են ունենալ նույն համախտանիշն ավելի քան 50% դեպքերում:

ՆՈՒՀ-ի մանկավարժներին, նման երեխաների հետ իրականացվող աշխատանքում, առավել օգտակար կլինի իմանալ ՌԻՊԳՀ առաջացնող՝ մասնավորապես հոգեբանական, սոցիալական և մանկավարժական պատճառները: Վերջիններիս թվին են պատկանում՝

- շրջակա միջավայրի գործոնները,
- մանկավարժական բարձրիթողությունը,
- վաղ մանկական սթրեսները և այլն:

Վերոնշյալ գործոնների ճշգրիտ և վաղ հայտնաբերումը թույլ է տալիս շուտ միջամտել և կանխել երկրորդային խնդիրների առաջացումը:

ՌԻՊԳՀ ունեցող երեխաների վարքի կառավարման մոտեցումներ մանկավարժների և ծնողների համար

Ներկայացվող մոտեցումները բաժանվում են երկու մասի՝ վարքագծային և ուսումնական:

Վարքագծային մոտեցումներն ուղղված են վարքի կառավարմանը, իսկ ուսումնականները՝ համապատասխանաբար ուսումնական ունակությունների զարգացմանը (Frieman B.B., 2001):

ՌԻՊԳՀ ունեցող երեխաների հետ աշխատելիս ՆՈՒՀ-ի մանկավարժներն ունենում են մի շարք դժվարություններ՝ հատկապես վարքի կառավարման հարցերում, քանի որ նման երեխաները անկազմակերպ են, անուշադիր, գերակտիվ և դժվարությամբ

են ենթարկվում կանոններին, շատախոսում են, դժվարությամբ են լուռ աշխատում, շեղվում են մի առաջադրանքից մյուսը, տեղից բղավում են, երբ հարցն իրենց չի ուղղված: Չնայած այս երեխաներն ունեն խնդիրներ մի շարք ոլորտներում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի անհատական կարողություններին և օգտագործել նրա ուժեղ կողմերը, որոնց հիման վրա կարելի է կառուցել ողջ կրթական գործընթացը:

Այս երեխաների հետ աշխատանքում գործում է երեք «Հ»-ի սկզբունքը՝ համագործակցություն, համբերություն և հետևողականություն:

Անկախ այն հանգամանքից՝ ՈՒՊԳՀ-ն դրսևորվում է որպես առանձին խնդիր, թե՛ հանդիսանում է ուղեկցող խնդիր (օրինակ՝ աուտիզմի ժամանակ), աշխատանքի ընթացքը և փուլերը նույնն են: Վարքի կառավարման մոտեցումները նպատակահարմար է իրականացնել կենցաղային, սոցիալական, ուսումնական, վարքային, հուզական ոլորտներում:

III ➔ **Կենցաղային ոլորտ**

● Քնելուց առաջ երեխայի հետ պատրաստել իրերի ցանկ՝ առավոտյան խառնաշփոթից և սթրեսից խուսափելու համար:

- Խուսափել մեծ թվով հրահանգներ և առաջադրանքներ ներկայացնելուց:
- Հրահանգները, առաջադրանքները ներկայացնել հերթականությամբ:

III ➔ **Սոցիալական ոլորտ**

● Սահմանել պարզ կանոններ, ցանկալի վարք դրսևորելիս անմիջապես գովել երեխային:

- Սահմանել նպատակներ և միասին քննարկել քայլերը:
- Դերային խաղի միջոցով ցույց տալ իրադրություններ և ցանկալի վարքի դրսևորումներ՝ նման իրավիճակները հաղթահարելու համար:

III ➔ **Ուսումնական ոլորտ**

Ցանկալի է, որ երեխան նստի դաստիարակի տեսադաշտում՝ ավելորդ գրգռիչներից զերծ մնալու համար:

● Խմբում կարելի է կիրառել մի շարք ազդանշային համակարգեր, օրինակ՝ գունավոր քարտեր (յուրաքանչյուր գույն ունի իր նշանակությունը, լրության գույնը կարմիրն է և այլն):

● Ոչ խոսքային (վերբալ) խրախուսանք՝ ժեստեր:

● Երբ երեխան անուշադիր է, ցանկալի է կենտրոնացնելու համար թեթև դիպչել ուսին կամ ականջին ասել, որ քիչ առաջ ինչ լավ էր ամեն ինչ ստացվում:

- Ավելի շատ ժամանակ տրամադրել առաջադրանքն ավարտելուն:
- Առաջադրանքները բաժանել փոքր մասերի:
- Օգտագործել վայրկենաչափ կամ ավազի ժամացույց:

III ➡ Վարքային ոլորտ

- Հստակ ու պարզ բացատրել արարքների հետևանքները:
- Գտնել մեխանիզմ (կառուցակարգ) ակտիվությունը սպառելու համար:
- Կանխել մղումային վարքը («Մեկ շրջան վազիր, ապա նստիր, անելիքդ շարունակիր»):
 - Դեր տալ:
 - Ընդառաջել («Տեսնում եմ՝ հոգնած ես, գնա՛ հանգստի անկյուն»):

III ➡ Հուզական ոլորտ

- Քննարկել՝ ի՞նչ կարող է անել բարկանալու փոխարեն:
- Քննարկել՝ ի՞նչ է «առողջ բարկություն» ասվածը:
- Բարկությունը կառավարելու խորհուրդներ (տե՛ս վարժանքների մեջ):
- Օգնել, նպաստել բռնեղով արտահայտելու զգացմունքները («Ի՞նչ ես դու զգում հիմա»):

Վարքագծային միջամտությունների և վարժանքների օրինակներ՝ նախատեսված մանկավարժների և ծնողների համար

ՆՈՒՀ-ի մանկավարժների համար կարող են օգտակար լինել վարքագծային միջամտությունների ներքոնշյալ երեք տարբերակները.

- անախորժությունների կառավարում,
- թերապիայի գնդակ,
- ինքնակառավարում:

III ➡ Անախորժությունների կառավարում

Վարքագծային այս միջամտության միջոցով երեխային կարելի է սովորեցնել կառավարել անցանկալի վարքը:

Միջամտության նպատակն է ամրապնդել վարքի դրական և ցանկալի դրսևորումները՝ դրանց հաճախությունն ավելացնելու նպատակով:

Այս միջամտությունը կարող է ներառել մի քանի բաղադրիչներ՝

- ժետոնային համակարգ,
- բանավոր կամ գրավոր խրախուսանք,
- առեղծվածային շարժառիթ, երբ խրախուսանքն ակնհայտ է դառնում երեխայի վարքի դրական դրսևորումից հետո:

Միջամտությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ մանկավարժը՝

- պարզաբանի և ցուցադրի ցանկալի վարքը,
- քննարկի վարքի ընդունելի ձևերը և խրախուսանքի արժանանալու տարբերակները,
- պլանավորի խրախուսանքն աստիճանաբար նվազեցնելու ռազմավարությունը,

● ներկայացնի պարզ ուղեցույցներ միջամտության կիրառման անհրաժեշտության և տևողության վերաբերյալ:

➡ **Թերապիայի գնդակ**

Սովորական աշակերտական նստարանի փոխարեն երեխան նստում է փչովի մարզական գնդակի վրա, որը նրան հնարավորություն է տալիս կառուցողական ձևով թոթափելու շարժողական ակտիվությունը:

➡ **Ինքնակառավարում**

Անհատականացված այս միջամտության ընթացքում երեխան ինքն է գնահատում և գրանցում իր ցանկալի վարքի դրսևորումները: Մանկավարժը երեխայի հետ ընտրում է վարքի մեկ կամ երկու դրսևորում, որոնք նա պետք է կառավարի և հաջողությունները գրանցի ժպտացող տիպերի օգնությամբ: Մանկավարժը ևս գրանցում է երեխայի վարքը, և երկուսի գրանցումները համեմատվում են:

Անցանկալի վարքն ու անհամապատասխանությունները քննարկվում և շտկվում են: Աստիճանաբար, երբ երեխան սովորում է դիտարկել սեփական վարքը և այն կառավարել, մանկավարժը դադարեցնում է գրանցումները՝ երեխային ընձեռելով լիարժեք ինքնուրույնություն:

➡ **Վարժանքներ երեխաների հետ աշխատող մանկավարժների համար**

Վարժանքները կիրառելի են հուզական, վարքային ոլորտներում, փոխհարաբերություններում առկա խնդիրների դեպքում, դժվար կիրառելի են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում: Վարժանքների կիրառմանը չեն ներկայացվում նեղ մասնագիտական պահանջներ, ուստի, լրացուցիչ աջակցության պայմաններում, կարող են կիրառվել երեխաների հետ աշխատող տարբեր մանկավարժների կողմից, որոշակի աջակցության պայմաններում՝ նաև ծնողների կողմից:

1. Խոսենք զգացմունքներից

Երեխայի հետ խոսում ենք զգացմունքներից՝ պարզելով, թե ինչ գիտի զգացմունքների մասին: Գրանցում ենք բոլոր զգացմունքներին վերաբերող բառերը: Զգացմունքները համադրում ենք համապատասխան նկարներով:

Երեխայի հետ քննարկում ենք, թե օրվա ընթացքում երբ է ապրում այդ զգացմունքը, ինչից առաջ և հետո, ինչ կուզենար փոխել զգացմունքի ապրման մեջ և ինչհի:

2. Դրական արձագանք

Այս վարժանքն օգնում է դրականորեն ամրապնդել երեխայի վարքը:

Երեխային ուղղված բոլոր անդրադարձները սկսել դրական արտահայտությամբ, օրինակ՝

- Ինձ դուր է գալիս, երբ դու....., սակայն.....
- Ինձ շատ օգնում է, երբ դու....., բայց կարելի է շտկել.....

- Մենք շատ լավ աշխատեցինք, կարծում եմ՝ մեզ միայն պետք է.....

3. Ինչպես ընկերանալ

Այս վարժանքի նպատակն է օգնել երեխային հասկանալ, թե հասակակիցների հետ ընկերանալու և ընկերությունը պահպանելու համար ինչ հատկանիշներ են պետք: Հատկանիշները համատեղ աշխատանքում վերհանելուց հետո, երեխան գնահատում է իր սեփական ունակություններն ընկերական հարաբերությունները պահպանելու հարցում:

Վարժանքը կիրառելի է նաև խմբային աշխատանքում: Եթե վերհանված հատկանիշների ցանկը մեծ է, ապա քննարկման համար ընտրվում են 3-5 հատկանիշ, որոնք ամենակարևորն են և ցանկալի է զարգացնել՝ հարաբերությունները բարելավելու նպատակով:

4. Խաղի հրավեր

Այս վարժանքի նպատակը շփման հմտություններ, հանդուրժողականություն, համբերատարություն սովորեցնելն է: Խաղի կանոններն են՝ չխփել, չքաշքշել, չնեղանալ:

- Նախ որոշիր, թե ինչ խաղ ես խաղալու:
- Պատրաստիր խաղի համար անհրաժեշտ պարագաներ:
- Համոզվիր, որ նա, ում հետ ուզում ես խաղալ, պատրաստ է, և այլն:

Այսպիսով, վերոնշյալ մոտեցումները, ինչպես նաև վարժանքները, կիրառելի են անցանկալի վարքի բոլոր դրսևորումների դեպքում: Որոշ մոտեցումներ՝ լայն կիրառելիություն ունեն, և նեղ մասնագիտական մոտեցում չեն պահանջում: Մանկավարժի և ծնողի համագործակցության շնորհիվ հնարավոր է համապատասխանեցնել ՈւՊԳՀ ունեցող երեխայի խնդիրն և արդյունավետ կիրառել:

ԲԱԺԻՆ 4. ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արմենուհի Ավագյան, լրագրող, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սույն բաժնում անդրադարձ կկատարվի վարքագծի կառավարման հիմնահարցին, անցանկալի վարքագծին՝ որպես մանկավարժական հիմնախնդրի, վարքի կառավարման մոտեցումներին, կանոնների սահմանման սկզբունքներին:

Մանկավարժները կփաստեն, որ ուսումնական գործընթացում ամենահաճախ հանդիպող դժվարություններից մեկը, որի դեպքում կիրառվող միջոցները ոչ միշտ են արդյունավետ, անցանկալի վարքագիծն է: Պատմականորեն ընդունված է նման վարքագծի հանդիպելիս, երեխային պատժել, նախատել, խրատել, օրինակ բերել նրա իսկ՝ առավել «լսող» ու «խելոք մնացող» ընկերներին: «Խելոք մնացող» երեխաներն էլ ավելի հաճախ մյուսներին օրինակ են բերվում, քան՝ խրախուսանքի արժանանում: Հետազոտությունները վկայել են, որ դպրոցների մեծ մասում աշակերտները իրենց արարքների համար 4-10 անգամ ավելի շատ նախատինք են լսում, քան՝ խրախուսանք:

Իրականում այսօր նման մոտեցումները հնացած են ու վաղուց չեն դիմանում ժամանակակից մոտեցումների քննադատությանը: Այսօր, առավել ևս՝ ներառող կրթության համատեքստում, սաներին միմյանց հետ համեմատելը ավելի շատ խնդիրներ, քան դրանց հաղթահարում է առաջ բերում: Խրատը, պատիժն ու նախատինքը ավելի շատ բացասական նախատրամադրվածության, քան ցանկալի վարքագիծ դրսևորելու առիթներ են դառնում (Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., 2019):

Հայտնի է, որ անցանկալի վարքագծի դրսևորման հավանականությունը նվազում է, եթե՝

1. Գործընթացը հստակ պլանավորված ու լավ կազմակերպված է,
2. Ապահովված է երեխաների ներգրավվածությունը գործընթացում, և առկա է համագործակցություն,
3. Կազմակերպված է արդյունավետ աշխատանքային միջավայր:

Գործընթացի հստակ պլանավորում ու լավ կազմակերպում

Վերջինս ենթադրում է ժամանակի հստակ պլանավորում և ուսումնառությանը նպաստող նյութերի նախապատրաստում: Հաշվի առնելով բազմազան առանձնա-

հատկություններ ունեցող երեխաների առկայությունը յուրաքանչյուր նախադպրոցական խմբում, նման միջոցներից խորհուրդ է տրվում օգտագործել՝

● Ժամանակի վիզուալիզացիան (տեսողականացումը), ժամանակի ավարտի նախազգուշացումը: Օրինակ՝ աստղիկների միջոցով երեխաներին ցուցադրվում է պարապմունքի տևողությունը: 25 րոպե տևողությամբ պարապմունքը ներկայացվում է կայչուն ժապավենով ստվարաթղթին փակցվող աստղիկների միջոցով: Յուրաքանչյուր 5 րոպեի ավարտին մեկ աստղիկ կպցվում է ժապավենին (տես նկար 1):



Նկար 1. Ժամանակի վիզուալիզացիայի համար օգտագործվող քարտի նմուշ


● Կատարվելիք գործողությունների, դրանց հաջորդականությունում նախատեսվող փոփոխության նախապատրաստում: Օրինակ՝ երեխաներին նկարների միջոցով ցուցադրվում են այդ օրվա պարապմունքների հաջորդականությունն ու անելիքները: Որևէ փոփոխության անհրաժեշտության դեպքում, միառժամանակ առաջ իրականացվում է որոշակի նկարի հեռացում նկարների շարքից (եթե տվյալ գործողությունը չի կատարվելու) կամ նկարների տեղափոխում (եթե տվյալ գործողությունների հաջորդականությունը փոփոխվելու է):

Իրերի դասավորվածության կարևորում, անհրաժեշտ փոփոխությունների իրականացում

Երբեմն իրերի դասավորվածությունը կարող է որոշակի երեխաների դրդել որոշակի կրկնվող անցանկալի վարքագծի: Օրինակ՝ պահարաններում մեծ թվով դիդակտիկ նյութերի ու խաղալիքների առկայությունը կարող է խթանել, որ երեխան անընդհատ շրջի սենյակում ու դժվարությամբ կենտրոնանա: Այս դեպքում, կարելի է իրերի դիրքերը փոխել (շրջել) կամ պահարանները բեռնաթափել՝ սենյակում թողնելով միայն այդ օրվա պարապմունքների համար անհրաժեշտ պարագաները:

● Առաջադրանքը քայլ առ քայլ կատարելու համար ցուցումների ներկայացում:
Կան գործողություններ, որոնք բազմաքայլ են: Դրանց կատարումը որոշ երե-

խաների մեջ առաջացնում է լարվածություն՝ խթանելով անցանկալի վարքի դրսևորումը: Այդ դեպքում երեխաներին կարելի է ներկայացնել քայլերի հաջորդականությունը պատկերող նկարներ: Անհրաժեշտության դեպքում կարելի է ավարտված գործողության նկարը շրջել:



Նկար 2. Առաջադրանքի քայլերը նկարներով ներկայացնելու նմուշ

Նկարում պատկերված նմուշով աշխատելիս, կաչուն ժապավենը փակցվում է վրացարանի վերևում: Երեխային սովորեցնում ենք յուրաքանչյուր գործողությունը կատարելիս այն մատնանշել ու անվանել: Կարելի է նաև առաջարկել պոկել ավարտած գործողության նկարը:

Ներգրավվածության և համագործակցության կազմակերպում

Ներգրավվածության և համագործակցության առկայությունը անցանկալի վարքագծի կանխարգելման պայմաններից է: Այս նպատակով անհրաժեշտ են՝

➡ **Յուրաքանչյուրի նկատմամբ տարբերակված մոտեցման ցուցաբերում:**

Հայտնի փաստ է, որ գործընթացից դուրս մնացող երեխան ծանձրանում է, իսկ ծանձրացող երեխան դրսևորում է անցանկալի վարքագիծ: Ուստի, բազմազան առանձնահատկություններ ունեցող երեխաների առկայության դեպքում, էական է տարբերակված մոտեցում ցուցաբերելը: Այն կարող է դրսևորվել հանձնարարությունների տարբերակմամբ (օրինակ՝ մի սանին հանձնարարվում է նկարել մարդուկ, մյուսին տրվում է մարդուկի նկարը, որի միայն ոտքերը նկարված չեն, ու հանձնարարվում է նկարել միայն ոտքերը, երրորդին հանձնարարվում է նկարել մարդուկ և նրա տունը): Այս դեպքում հանձնարարության տարբերակները երեխաներին կտրվեն՝ ըստ նրանց հնարավորությունների ու ընդունակությունների: Կարևորն այն է, որ, ըստ էության, հանձնարարության թեման նույնն է, և երեխաները չեն զգում խտրականություն:

➡ **Նախասիրությունների հաշվի առնում:**

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ երեխաների նախասիրությունները տարբեր են, կարևոր է դրանք հաշվի առնելը: Օրինակ՝ եթե երեխան սիրում է Դիսնեյի

¹⁸ Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

մուլտֆիլմերի հերոսներին, կարելի է գունավորելու համար նրան տալ իր սիրելի հերոսի նկարը (Sam A., 2016): Նախասիրությունները կարելի է հաշվի առնել նաև երեխաներին խրախուսելիս: Նշված դեպքում, տիպերի միջոցով խրախուսելու ժամանակ, մանկավարժը կարող է օգտագործել այդ մուլտֆիլմերի հերոսների նկարներով տիպեր:

||> Միմյանց օգնության դիմելու մշակույթի հիմնում:

Երեխաները սովորաբար իրենց բոլոր հարցերով, խնդրանքներով դիմում են մանկավարժին: Կարելի է սահմանել կանոն, ըստ որի՝ յուրաքանչյուր երեխա, նախքան հարցը կամ օգնության խնդրանքը մանկավարժին հայտնելը, պետք է դիմի երեք հասակակցի: Սրանով մենք կդրդենք երեխաներին դիմելու միմյանց, հաղորդակցվելու և համագործակցելու:

||> Արդյունավետ աշխատանքային միջավայրի կազմակերպում

Աշխատանքային միջավայրի արդյունավետության չափանիշները բազմազան են՝ մանկավարժի ճայներանգը (Савостьянов А. И., 2001), հանգստի գոտու առկայությունը, դրանից օգտվելու ընթացակարգը, և այլն (Evanovich L., Kern L., 2018):

Աշխատանքային միջավայրի արդյունավետությունը կարելի է ապահովել նաև՝ խմբային աշխատանքի ժամանակ երեխային թույլ տալով, որ աշխատի մեկ ընկերոջ, ոչ թե ամբողջ խմբի հետ: Կան երեխաներ ում համար եռուզեռն ու աղմուկը հանդիսանում են կենտրոնանալու լուրջ խոչընդոտներ: Այս դեպքերում երեխաներին պետք է ոչ թե մեկուսացնել, այլ՝ թույլ տալ աշխատել ենթախմբով՝ շեղող, ուստի ներգրավվածությանը խանգարող ու անցանկալի վարքագծի դրսևորմանը նպաստող հանգամանքներից խուսափելու համար:

Արդյունավետ աշխատանքային միջավայրի կազմակերպման կարևոր նախապայմաններից է նաև անաղմուկ միջավայրի ապահովումը: Խնդիրը ոչ թե լռության պահպանման, այլ ցածրաձայն խոսելու ու անաղմուկ աշխատելու մասին է:

Սաների ներգրավվածությունը ապահովելու համար երբեմն կարիք է լինում փոփոխելու անելիքների հաջորդականությունը: Եթե մանկավարժը նկատում է, որ զբոսանքից հետո երեխաները դժվարությամբ են կենտրոնանում, ավելի ճիշտ կլինի կենտրոնացում պահանջող պարապմունքները տեղափոխել՝ դրանով իսկ կանխելով անցանկալի վարքագծի դրսևորումը:

||> Լավ կազմակերպված պարապմունքի բնութագրիչներն են՝

1. Սաները ներգրավված են աշխատանքում:
2. Սաները գիտեն, թե ինչ է իրենցից ակնկալվում և ընդհանուր առմամբ հաջողակ լինելու զգացողություն ունեն:
3. Ժամանակի վատնումը, հիասթափությունը և շեղվելու առիթները հասցված են նվազագույնի:
4. Մթնոլորտը աշխատանքային է, հանգիստ ու հաճելի:

Մանկավարժները սաներին իրենց անելիքը ներկայացնելիս ոչ միշտ են հաշվի առնում, որ ոչ բոլոր երեխաներն են խոսքային հրահանգները լիարժեք ընկալում: Անելիքը հստակ չպատկերացնելը հաճախ առաջ է բերում ոչ ցանկալի վարքագիծ: Ուստի կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի ընկալման մակարդակը և տեղեկատվության ընկալման ձևի նախապատվությունը: Օրինակ՝ շատ երեխաներ առավել լիարժեք ընկալում են տեսողական վերլուծիչի կիրառմամբ փոխանցվող տեղեկատվությունը, և նրանց հետ աշխատելիս, անելիքները ցանկալի է ցուցադրել նկարներով, քայլ առ քայլ:

Հաջողակ լինելու զգացողությունը չափազանց կարևոր է անցանկալի վարքագծից խուսափելու համար: Հաճախ երեխային ասում ենք՝ «Կրկին սխալվեցիր», «Ինչ ցրվածն ես», «Ինչո՞ւ դա չես հիշում»: Փոխարենը պետք է ասել՝ «Այսօր կարճես թե դժվարությամբ ես կենտրոնանում», «Դու կարող ես ավելին», «Վստահ եմ, որ կարող ես հիշել»: Հաջողակ լինելու զգացողությանը նպաստում է նաև լավ մտածված ու պլանավորված առաջադրանքի ներկայացումը: Այն պետք է լինի մատչելի՝ ո՛չ պարզունակ, ո՛չ էլ երեխայի ուժերից վեր:

Աշխատանքային, հանգիստ ու հաճելի մթնոլորտ կարելի է ապահովել երեխաներին չափավոր ազատություն տալով, ավելորդ շտապողականության բացառմամբ, պարապմունքների երաժշտական ուղեկցությամբ: Ժամանակ առ ժամանակ կարելի է երեխաների ուշադրությունը հրավիրել սաներից մեկի վրա՝ մատնանշելով նրա կողմից դրսևորվող ցանկալի վարքագիծը: Օրինակ. «Երեխաներ, դուք զբաղված էիք ու հավանաբար չնկատեցիք, թե ինչպես Անահիտը օգնեց Արարատին: Կեցցեն, Անահիտ»:

Կանոնների դերը վարքագծի կառավարման գործում

Կանոններ ունենալը չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում: Դրանք կարգավորում են երեխաների վարքագիծը՝ նպաստելով անցանկալի վարքագծի կանխարգելմանը: Կանոնները պետք է լինեն հստակ, հակիրճ սահմանված, դրական ձևակերպմամբ ու իրագործելի: Մանկավարժը պետք է սովորեցնի, պարբերաբար կրկնի կանոնները՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում և կիրառելով երեխաների համար հասկանալի ձևակերպումներ:

Այժմ դիտարկենք ընդունելի և ոչ ընդունելի կանոնները՝ ելնելով վերը նշված սկզբունքներից:

«Եղի՛ր պատասխանատու», «Եղի՛ր բարեհամբույր», «Եղի՛ր ուշադիր» արտահայտությունները չեն կարող «աշխատող» կանոններ լինել, քանի որ առաջին երկուսը բարդ ձևակերպում ունեն, երրորդը՝ կախված է մանկավարժի կիրառած մեթոդներից, երեխայի ուշադրությունը կենտրոնացնելու ջանքերից և նյութի հետաքրքրական լինելու հանգամանքից:

«Միմյանց չխփել», «Խմբասենյակում չվազվզել», «Զգո՞ռալ», «Ընկերներին զիջել» կանոնները ընդունելի չեն, քանի որ առաջին երկուսն ունեն բացասական ձևակերպում, երրորդը միշտ չէ, որ անվերապահորեն ընդունելի է: Որոշ իրավիճակներում, օրինակ,

համաձայն Մոնթեսորի մանկավարժության, երեխան կարող է խաղալիքը չզիջել ուրիշին՝ մինչև խաղը՝ տրամաբանական ավարտին հասցնելը:

Ընդունելի չեն նաև սեռով պայմանավորված այնպիսի խտրական կանոններ, ինչպիսիք են՝ «Աղջիկները միշտ զիջում են տղաներին» (կամ հակառակը), «Խաղավար կարող է լինել տղաներից մեկը», «Առաջատար կարող է լինել տղաներից մեկը»:


Ընդունելի կանոններից են, օրինակ, «Խոսելուց առաջ ձեռք բարձրացրու և խոսիր թույլտվություն ստանալուց հետո», «Տեղափոխվիր, եթե ստացել ես թույլտվություն», «Սենյակում միշտ տեղաշարժվիր քայլելով», «Ցածրաձայն խոսիր», «Ձեռքերդ, ոտքերդ ու իրերդ պահիր քեզ մոտ»: Նշված կանոններից վերջինը «Ընկերներիդ մի հարվածիր» կանոնն է՝ դրական ձևակերպմամբ:

Նախադարձական տարիքի երեխաների հետ աշխատանքում, կանոնները ներկայացնելիս, կարևոր է նկարների կիրառումը (տես նկար 3):


խոսելուց առաջ ձեռք ենք բարձրացնում




ցածրաձայն ենք խոսում



տեղաշարժվում ենք քայլելով



պահպանում ենք լռություն



ուրիշների իրերը վերցնում ենք միայն խնդրելուց հետո



ձեռքերը մարմնի մոտ պահում



Նկար 3. Կանոնները նկարների օգնությամբ ցուցադրելու նմուշ¹⁹

Հետազոտություններով ապացուցվել է, որ նկարների կիրառումը կանոնների ընկալման գործընթացում բարելավվում է նրանց կատարման ցուցանիշն ու հետաքրքրություն մտցնում գործընթացի մեջ: Ինչպես երևում է նկարներից, հակառակ դրանցում արգելող նշագծերի առկայությանը, տեքստային մասն ունենում է բացառապես դրական ձևակերպում:

Այսպիսով՝ անցանկալի վարքագծի կանխարգելման ու հաղթահարման գործընթացը կարևոր է, քանի որ այն մանկավարժների կողմից ամենահաճախ նշվող դժվարությունն է կրթական գործընթացում: Վերջինիս կանխարգելումն ու հաղթահար-

¹⁹ Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

ման արդյունավետ մոտեցումների կիրառումը նպաստում են ինչպես խմբասենյակում տիրող մթնոլորտի բարելավմանը, այնպես էլ՝ կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Առաջարկություններ ընտանիքի հետ աշխատանքի վերաբերյալ

1. Ծնողներին բացատրեք, թե ինչպես կարելի է ժամանակը տեսանելի դարձնել: Հորդորեք աստղիկներով քարտի տեխնիկան կիրառել տանը:
2. Ծնողների հետ կազմեք ճիշտ ձևակերպմամբ կանոններ, որոնք անհրաժեշտ կլինեն տանը: ՆՈՒՀ-ում և տանը նույն սկզբունքներով սահմանված ու նույն կերպ կիրառվող կանոնների առկայությունը կմեծացնի դրանք հաջողությամբ օգտագործելու հավանականությունը:
3. Ծնողներին հորդորեք ուշադիր լինել երեխայի վարքագծի նկատմամբ: Միայն անցանկալի վարքագծի համար երեխային նախատելու փոխարեն, կարևոր է նկատել ցանկալի վարքագծի դրսևորումներն ու գովել նրան:

ԲԱԺԻՆ 5. ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմենուհի Ավագյան, լոգոպեդ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Այս բաժնում անդրադարձ կկատարվի կանխատեսելի անցանկալի վարքագծի կանխարգելման ժամանակակից մի ռազմավարության, կներկայացվեն վերջինիս քայլերը՝ օրինակներով: Կհիմնավորվի նախորալիստական (բնավար) մոտեցման կարևորությունը ցանկալի վարքագծի ձևավորման հարցում, կանդրադառնանք նաև վարքագծի գործառույթներին ու վարքագծի «այբուբենին»:

Անցանկալի վարքագիծը կարող է լինել ինչպես կանխատեսելի, այնպես էլ՝ ոչ: Հաճախ, այս կամ այն իրավիճակում մանկավարժներից ու ծնողներից լսում ենք. «Հիմա կսկսի ճչալ» կամ «Հիմա կկանգնի ու կթռվա»: Սրանք այն դեպքերն են, երբ երեխայի հետ առնչվողները (ծնողներ, մանկավարժ) կռահում են, թե ինչ վարք կհաջորդի այս կամ այն իրադարձությանը կամ միջավայրային գործոնին: Կանխատեսելով, ակնկալվող վարքագիծը նախապես անվանելով, փորձելով այն հաղթահարել նախատինքի, խրատի, պատժի միջոցով՝ մանկավարժն ու ծնողները հաճախ ամրապնդում են այն:

2018թ.-ին, Evanovich L., Kern L.-ը առաջարկեցին կանխատեսելի անցանկալի վարքագծի հաղթահարման բազմաքայլ մի մեթոդաբանություն, որը լայն կիրառում ստացավ ժամանակակից մանկավարժությունում: Մինչև քայլերին անդրադառնալը՝ դիտարկենք մի օրինակ:

Օրինակ

Մանկավարժը սաներին ամեն օր տանում է բակ՝ զբոսնելու: Նա նկատել է, որ բակից երեխաները վերադառնում են աշխուժացած ու ոգևորված: Նրանք հրմշտում են միմյանց, վիճում են ու ծիծաղում: Մանկավարժը դժվարանում է նրանց կենտրոնացնել զբոսանքին հաջորդող պարապմունքի վրա: Նա երեխաներին հորդորում է պահպանել լռություն, լինել ուշադիր, նստել, լսել, բայց փորձերը արդյունավետ չեն լինում: Ապարդյուն է լինում նաև երեխաների վրա բարկանալը:

Սաների անցանկալի վարքագիծը կանխատեսելի է, քանի որ մանկավարժը դա նկատում է ամեն անգամ՝ զբոսանքից վերադառնալուց հետո:

Կանխատեսելի անցանկալի վարքագծի հաղթահարման մեթոդաբանության քայլերն են.



- կանխատեսելի անցանկալի վարքագծի և դրա համատեքստի որոշում,
- ցանկալի վարքագծի սահմանում,
- համատեքստի փոփոխում՝ ցանկալի վարքագծի դրսևորումը խթանելու նպատակով,
- ցանկալի վարքագիծը փորձարկելու հնարավորության ընձեռում,
- ցանկալի վարքագիծ դրսևորելու խրախուսում,
- ցանկալի վարքագծի դրսևորման հուշումների ներկայացում,
- սաների վարքագծի մշտադիտարկում:

Ներկայացված օրինակում **անցանկալի վարքագիծը** սաների աղմկելն ու չկենտրոնանալն է, **համատեքստը** զբոսանքին հաջորդող պարապմունքն է:

Ցանկալի վարքագիծը սաների անաղմուկ մասնակցությունն է զբոսանքին հաջորդող պարապմունքին:

Ցանկալի վարքագծի դրսևորումը խթանելու նպատակով կարելի է իրականացնել **համատեքստի փոփոխություն**: Այս նպատակով սաների հետ տեղի է ունենում զրույց, որտեղ քննարկվում է նրանց վարքագիծը, առաջարկվում է վարքագծի այլ տարբերակ:

Կարևոր է զրույցի ժամանակ հետևել վարքագիծը դրականորեն խրախուսելու մոտեցմանը (Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., Խմբ., 2019) և, «Ներս մտնելիս չենք խոսում» արտահայտության փոխարեն ասել՝ «Ներս մտնելիս պահպանում ենք լռություն», կամ, «Վազելով ներս չենք մտնում» արտահայտության փոխարեն, ասել՝ «Խմբասենյակ ենք մտնում հանգիստ քայլելով»: Երեխաներին նաև ներկայացվում են անցանկալի ու ցանկալի վարքագծերի հետևանքները, այն է՝ «Երբ խմբասենյակ եք մտնում՝ աղմկելով ու վազելով, լինում ենք լարված, իսկ երբ խմբասենյակ եք մտնում հանգիստ քայլելով և պահպանում եք լռություն, բոլորս լինում ենք ուրախ ու գոհ»:

Կարևոր ու առանցքային հանգամանք է նաև այն, որ մանկավարժը նույնպես փոխում է իր վարքագիծը: Նախկինում նա մտնում էր խմբասենյակ, գրավում իր տեղը ու սաներին դիմավորում այնտեղից: Այժմ մանկավարժը սաներին դիմավորում է միջանցքում՝ ողջունելով յուրաքանչյուրին:

Ինչպես նշված է վերևում, հաջորդ քայլով մանկավարժը **սաներին ընձեռում է ցանկալի վարքագիծը փորձարկելու հնարավորություն**: Նա կազմակերպում է դերային խաղ, որում մոդելավորում է ցանկալի վարքագիծը՝ սաներին ցուցադրելով, թե ինչպես է պետք մտնել խմբասենյակ ու գրավել տեղը: Այնուհետև նա խնդրում է ամենաշատախոս ու ակտիվ սաներից մեկին ցուցադրել ցանկալի վարքագիծը՝ ստանձնելով խմբասենյակ մտնող երեխայի դերը: Երբ երեխան ցուցադրում է ցանկալի վարքագիծը, արժանանում է մանկավարժի ու ընկերների ողջույնին: Հայտնի փաստ է, որ ոչ ցանկալի վարքագիծը հաճախ դրսևորվում է մանկավարժի, ծնողների ու ընկերների ուշադրությունը գրավելու համար: Տեսնելով, որ այս տարբերակով նույնպես կարելի է դրան հասնել, սանը ստանում է նոր վարքագծի մոդել և մոտիվացված է լինում այն օգտագործելու:

Կարևոր է, որ երեխաներն ավելի հաճախ գովեստի արժանանան ցանկալի վարքագիծ դրսևորելու համար, քան՝ կշտամբանքի, խրատի ու նախատինքի՝ անցանկալի վարքագիծ դրսևորելու համար:

Դերային խաղից հետո ցանկալի վարքագիծը փորձարկվում է իրական իրավիճակում: Զբոսանքի գնալուց առաջ մանկավարժը աշակերտներին հիշեցնում է ցանկալի վարքագիծը, դրան առնչվող կանոնները: Զբոսանքից վերադառնալիս մանկավարժը դիմավորում է աշակերտներին դռան մոտ, նրանց ողջունում է ու հիշեցնում, թե ինչպիսի վարքագիծ է նրանցից ակնկալվում:

Մյուս քայլը մանկավարժի կողմից սաների **ցանկալի վարքագիծ դրսևորելու խրախուսումն է** (Cooper, J. O., Heron, T. E., & Heward, W. L., 2007): Վերը ներկայացված օրինակում մանկավարժը ցանկալի վարքագիծ դրսևորած յուրաքանչյուր երեխայի հանձնում է մեկ կտրոն, որը խորհրդանշում է ազատ խաղի, զբոսանքի, հանգստի գոտում անցկացնելու հավելյալ 1 րոպե: Երեխան ցանկալի վարքագծի համար հավաքած կտրոնները օգտագործում է իր համար ցանկալի գործունեությամբ ավելի երկար զբաղվելու նպատակով:


Խրախուսանքի մեկ այլ տարբերակ է խաղընկերոջ ընտրություն կատարելու իրավունք վաստակելը: Եթե սանը արժանացել է ցանկալի վարքագիծ խորհրդանշող կտրոնին, ապա նա է ընտրում, թե այդ օրվա խաղի ժամանակ ո՞վ կլինի իր խաղընկերը:

Առավել արտահայտված անցանկալի վարք դրսևորող երեխաներին սկզբնական շրջանում կարելի է առավել արտահայտված խրախուսել՝ գնահատելով նրանց ջանքերը և ոգևորելով: Ինչպես երևում է վերը շարադրվածից, մանկավարժը ոչ թե հանդիմանում, նախատում ու պատժում է առաջադրանքը չկատարողներին, այլ խրախուսում է կատարողներին: Կրկին գործ ենք ունենում վարքագիծը դրականորեն խրախուսելու մոտեցման հետ:

Որպես ցանկալի վարքագծի դրսևորման հուշումներ կարելի է օգտագործել տեսողական այնպիսի ազդակներ, ինչպիսին են նկարները, սիմվոլները (տես նկար 1), որոնցում պատկերված են սեղմված շուրթեր ու լռություն պահպանելու անհրաժեշտություն:

բերանը փակ ենք պահում

սենյակ ենք մրնում անաղմուկ



Նկար 1. Ծանկալի վարքագծի հուշումներ²⁰

²⁰ Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

Կարելի է նաև երեխաների ուշադրությունը հրավիրել մեր դեմքի վրա՝ ցուցադրելով դեմքի ակնկալվող արտահայտությունը: Հուշումը ներկայացվում է այն պահին, երբ սաները մտնում են խմբասենյակ:

Մանկավարժը կանգնում է դռան մոտ ու ձեռքով ցուցադրում իր փակ բերանը կամ ակնկալվող վարքագծի համապատասխան նկարը/սիմվոլը: Նա իր օրինակին հետևող և կանոնն ընդունող սաներին փոխանցում է խրախուսանքի կտրոններ: Զբոսանքին հաջորդող պարապմունքի ժամանակ, ակնկալվող վարքագծի նկարը/սիմվոլը փակցվում է երեխաների համար հասանելի վայրում: Ցանկալի վարքագծի տևական պահպանման նպատակով՝ կանոնին դժվարությամբ հետևող սաների համար տեսանելի վայրում կարելի է դնել տվյալ սիմվոլը:

Հուշումից պատշաճ օգտվող սաներին տրամադրվում են լրացուցիչ կտրոններ՝ նրանց ասելով. «Դուք հրաշալի հետևեցիք կանոնին ու ստանում եք լրացուցիչ կտրոններ»: Սխալ է կանոնին ոչ լիարժեք հետևող սաներին ասելը. «Դուք լրացուցիչ կտրոններ չեք ստանում, քանի որ կանոնին չեք հետևել»: Այս դեպքում մենք, նախ, չենք համեմատում սաներին, երկրորդը՝ ցուցաբերում ենք վարքագիծը դրականորեն խրախուսելու մոտեցումը: Այս երկու կարևոր հանգամանքները երեխաներին մոտիվացնում են ընդօրինակելու իրենց՝ կանոնին հետևող ընկերների վարքագիծը:

Դրական վարքագծի ձևավորմանն ուղղված միջամտության ու աջակցության ենթարկվող սաների **վարքի մշտադիտարկման միջոցով** հնարավոր է դառնում պարզել, թե ո՞ւմ նկատմամբ ձեռնարկված կանխարգելիչ, հաղթահարող աշխատանքներն են անարդյունավետ եղել, և ո՞ւմ համար ինտենսիվ միջամտությունների մշակման անհրաժեշտություն կա (Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., Խմբ., 2019): Ինտենսիվ միջամտությունների անհրաժեշտության դեպքում մանկավարժը համագործակցում է նեղ մասնագետների (հոգեբան, վարքային թերապիստ) հետ:

Նատուրալիստական մոտեցման կարևորությունը ցանկալի վարքագծի ձևավորման հարցում

Ժամանակակից մանկավարժությունում լայնորեն կիրառվում է նատուրալիստական մոտեցումը, որը շեշտադրում է հմտությունները բնական պայմաններում ձևավորելու անհրաժեշտությունը (Prizant B., Wetherby A., & Rydell P., 2000): Սոցիալական, հուզական մի շարք հմտություններ պետք է ձևավորվեն բնականում տեղի ունեցող իրավիճակներում: Անարդյունավետ է երեխային պարապմունքի ընթացքից դուրս, մասնագետի առանձնասենյակում, համատեքստից կտրված պայմաններում սովորեցնել, թե նա ինչպիսի վարք պետք է կամ չպետք է դրսևորի այլ իրավիճակում: Այս դեպքում անտեսվում են միջավայրային գործոններն, ու անարդյունավետ փորձ է արվում փոխելու երեխային ու բարելավելու նրա վարքը:

Դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունը իրականացվում է խմբասենյակում, բակում, պարապեյիս, խաղալիս, ուտելիս, զբոսնելիս, առօրյա անցուդարձում: Երեխաները պետք է ձեռք բերած վարքային հմտությունները կիրառեն ամենուրեք, տարբեր գործողությունների ժամանակ:


Վարքագծի գործառույթները և «այբուբենը»

Անցանկալի վարքագծի հանդիպելիս ծնողների ու մանկավարժների շրջանում հաճախ հարց է առաջանում. «Ինչ է անում երեխան»: Պատասխանը լինում է երեխայի վարքագծի նկարագիրը: Օրինակ՝ պարապմունքի ժամանակ չի կենտրոնանում, անընդհատ խոսում է, գոռգոռում է, տեղում չի նստում:

Անդրադառնալով վարքագծի գործառույթին՝ պետք է նշել, որ անցանկալի վարքագծի դեպքում ճիշտ կլինի, որ ծնողն ու մանկավարժը մտածեն ոչ թե «Ինչ է անում երեխան», այլ՝ «Ինչո՞ւ է երեխան դա անում»: Այս հարցի պատասխանն էլ հենց վարքագծի ֆունկցիան (գործառույթն) է: Պարապմունքի ժամանակ դժվարությամբ կենտրոնացող երեխայի վարքագծի ֆունկցիան (վարքագծի պատճառը, «Ինչո՞ւ» հարցի պատասխանը) կարող են լինել կողմնակի աղմուկը, մանկավարժի ձայնի բարձրությունը, քաղցի զգացումը, անտեսված լինելու զգացողությունը և այլն: Անհանգիստ շարժումներ անող, գոռգոռացող, իրերը անընդհատ գետնին թափող սանի վարքագծի ֆունկցիան կարող են լինել զուգարան գնալու կարիքը արտահայտելու դժվարությունը, ցավի զգացումը, ծանձրույթը, անուշադրության մատնված լինելը:

Վարքագծի ֆունկցիան պարզելը կարևոր է այն հաղթահարելու համար: Համաձայն անցանկալի վարքագծի հաղթահարման ժամանակակից տեսություններից մեկի՝ նախապայմանի վրա հիմնված միջամտության (Neitzel, J., 2009), անցանկալի վարքագծի պատճառը հիմնականում միջավայրային գործոններով է պայմանավորված (տե՛ս նկար 2): Այս մոտեցումը կարևորում է ոչ թե երեխայի խնդիրները գտնելն ու երեխային փոխելը, այլ՝ անցանկալի վարքագծի դրդող միջավայրային անբարենպաստ պայմանները բացահայտելը, կանխելն ու փոփոխելը (Sam, A., 2016): Ըստ այդմ՝ կարևոր է երեխայի վարքագծի նկատմամբ մեր արձագանքը: Պատժելու, նախատելու և բարկանալու փոխարեն մենք պետք է վերլուծենք վարքագծի առաջացման նախապայմանները, դրանց դրսևորման օրինաչափությունները: Ուստի մեր թիրախը ոչ թե երեխայի վարքն է, այլ՝ միջավայրային գործոնները:

Համաձայն այս մոտեցման՝ երեխայի անցանկալի վարքագիծը հաճախ ոչ թե հետևանք է նրա անձնային առանձնահատկությունների (չար է, անուշադիր է, ագրեսիվ է), այլև՝ միջավայրային գործոնների (պարապմունքը ծանձրալի է, մանկավարժի ձայնը հոգնեցնող է, հանձնարարությունը երեխայի ուժերից վեր է, երեխան ուշադրությունից դուրս է):



Նկար 2. Վարքագծի այբուբեն

- Այսպիսով՝ վարքագծի այբուբենը («Ի՞նչ»-ը, «Ինչո՞ւ»-ն ու «Ինչպե՞ս»-ը) հետևյալն է՝
 - Վարքագծի նախապայմանը (**A**ntecedent)
 - Ինչու՞ դրսևորվեց տվյալ վարքագիծը:
 - Բուն վարքագիծը (**B**ehaviour)
 - Ի՞նչ անցանկալի դրսևորում նկատվեց երեխայի վարքագծում:
 - Հետևանքը (**C**onsequence)
 - Ինչպե՞ս մենք արձագանքեցինք տվյալ վարքագծին:

Ըստ ներկայացվող մոտեցման՝ անցանկալի վարքագծի հանդիպելիս անդրադարձ է կատարվում «ինչո՞ւ» և «ինչպե՞ս» հարցերի պատասխաններին: Վերջիններս գտնելու և օրինաչափությունները նկատելու համար կարևոր է երեխայի ծնողների ու նրա հետ աշխատող այլ մանկավարժների համագործակցությունը:

Ինչպես ցույց է տալիս փորձը, միջավայրային գործոնի փոփոխությունը օգնում է կանխել ու հաղթահարել երեխայի տվյալ անցանկալի վարքագծի դրսևորումը:

Դիտարկենք երեխայի վարքագծի վրա միջավայրային գործոնի ազդեցության մեկ օրինակ: Պարապմունքի ժամանակ երեխան անընդհատ վազում է դեպի սենյակի անկյուններից մեկը, նստում հատակին, հրաժարվում այնտեղից վեր կենալ ու մոտենալ ընկերներին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ երբ երեխան մայրիկի հետ եկել է ՆՈՒՀ, առաջին հանդիպումը կայացել է սենյակի այդ հատվածում: Մայրիկը զրուցել է մանկավարժի հետ, իսկ երեխան նրանց կողքին խաղացել է: Սենյակի այդ հատվածը երեխայի մեջ հաճելի հուշեր է արթնացնում: Նշենք նաև, որ երեխան ունի հաղորդակցման դժվարություն ու չի խոսում: Տվյալ դեպքում երեխայի կրկնվող անցանկալի վարքագիծը մանկավարժին պետք է հուշի, որ, երեխային անընդհատ սենյակի մյուս հատված տանելու փոխարեն, կարելի է սենյակում կատարել փոփոխություն՝ այդուհետ պարապմունքներն անցկացնելով սենյակի տվյալ հատվածում:

Առաջարկություններ ընդհանրի հետ աշխատանքի վերաբերյալ

1. Կանխատեսելի անցանկալի վարքագծի հաղթահարման համար նկարների/ սիմվոլների կիրառումը ներկայացրեք ծնողներին ու հորդորեք դրանք կիրառել նաև տանը:
2. Ծնողներին ներկայացրեք, թե ինչպես է պետք նախ անցանկալի վարքագծի հանդիպելիս կենտրոնանալ դրա պատճառի ու միջավայրային գործոնների վրա, ապա՝ վերացնել տվյալ գործոնը կամ միջավայրում կատարել փոփոխություն:
3. Երեխայի ծնողների ու նրա հետ առնչվող այլ մանկավարժների հետ կազմակերպեք պարբերական հանդիպումներ, քննարկեք հաջողություններն ու դժվարությունները: Ականջալուր եղեք ծնողների դիտարկումներին ու մեկնաբանություններին: Նշեք ու գնահատեք նրանց ջանքերը:
4. Ծնողներին ներկայացրեք անցանկալի վարքագծի կանխարգելման ու հաղթահարման համար կիրառվող վարքագիծը դրականորեն խրախուսելու մոտեցումը, հորդորեք այն կիրառել տանը:

ԲԱԺԻՆ 6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ

Սյուզաննա Պետրոսյան, սոցիալական մանկավարժ

Այս բաժնում ներկայացված են կարճ տեղեկություն սոցիալական հմտությունների ուսուցանման նպատակների և գործնական մոտեցումների մասին, ինչպես նաև պարզ տեխնիկաներ՝ հմտությունների ուսուցանումը հեփաքրքրաշարժ և մասնակցային դարձնելու համար:

Երեխային պաշտպանելու և սոցիալականացնելու ամենաարդյունավետ միջոցն ամուր և ընդունելի սոցիալական ցանց ստեղծելն է:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունը ընտանիքից հետո առաջին սոցիալական միջավայրն է, որտեղ երեխաները ձեռք են բերում անհրաժեշտ սոցիալական հմտություններ, սոցիալապես ընդունելի վարքաձևեր և ձևավորվում որպես սոցիալական էակներ: Այս առումով կարևոր է ուշադրություն դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում սոցիալական հմտությունների ձևավորման ու ամրապնդմանը, ընդ որում՝ բազմաթիվ հետազոտությունները փաստում են, որ այսօր սոցիալական հմտությունների ձևավորման կարիք ունեն ոչ միայն զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաները, այլ՝ առհասարակ շատերը:

Սոցիալական հմտությունների ձևավորումը համալիր գործընթաց է, որը իր մեջ ներառում է արժեքներ, գիտելիքներ ու հմտություններ: Երեխաներին սոցիալական հմտություններ սովորեցնելու տարբեր մոտեցումներ իմանալը և կիրառելը խիստ էական են, քանի որ մի միջոցը կարող է արդյունավետ լինել մի երեխայի պարագայում և անարդյունավետ՝ մեկ այլ երեխայի առնչությամբ: Տիրապետելով մի քանի մոտեցումների՝ մանկավարժը կարող է մեծ հաջողություն ունենալ բոլոր երեխաների հետ աշխատանքում²¹:

Մասնագետները պնդում են, որ եթե մեթոդը ճիշտ է ընտրված, ապա 4-6 շաբաթվա ընթացքում արդյունքն արդեն նկատելի կլինի, իսկ եթե այդ ժամանակամիջոցում երեխան արդյունք չի գրանցել, ուրեմն պետք է փոխել մոտեցումը: Ընդհանուր առմամբ՝ սոցիալական հմտությունների ձևավորման հիմնական նպատակն է զարգացնել հետևյալ կարողություններն ու որակները²².

²¹ Sharon Vaughn Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems, 2012, page 112

²² Eileen K. Allen, Glynnis Edwards The Exceptional Child: Inclusion in Early Childhood Education, 2014, 2012, page 386



➡ որոշումներ կայացնելու՝ ընտրություն կատարելու, որոշելու և պլանավորելու կարողությունը,

➡ ինքնատիրապետելու՝ ինքն իրեն վերահսկելու, հույզերը հասկանալու, գայթակղություններին և հասակակիցների ճնշումներին դիմակայելու կարողությունը,

➡ միջանձնային հարաբերություններ ստեղծելու՝ ընկերանալու, այլ երեխաների հետ սեփական պահանջմունքների, զգացմունքների, զգացումների և գաղափարների մասին խոսելու կարողությունը,

➡ սեփական անձի հանդեպ դրական վերաբերմունք ձևավորելու՝ ինքնավստահ լինելու, սեփական անձն արժևորելու կարողությունը,

➡ սոցիալական արժեքները՝ պատասխանատվության զգացումը, հոգատարությունը այլ մարդկանց նկատմամբ, ազնվությունը և հարմարվողականությունը:

Սոցիալական հմտությունների ձևավորումն ու սոցիալականացումը երեխայի զարգացման հիմնական ուղղություններն են, որոնք շարունակվում են ողջ կյանքի ընթացքում, ուստի որքան վաղ սկսվի երեխայի կողմից հմտությունների յուրացումը, այնքան շուտ նա կհաջողի հասակակիցների հետ արդյունավետ շփման, հաղորդակցման և հարաբերությունների կերտման գործընթացում:

➡ *Սոցիալական հմտությունների ձևավորումն ուղղված գործնական մոտեցումներ և խորհուրդներ, որոնք ձեզ կօգնեն սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատանքում:*

➡ Երեխային ներգրավեք ընդհանուր գործունեության մեջ՝ հաշվի առնելով անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները,

➡ օգնեք երեխային ստեղծել իր սոցիալական հարաբերությունների համակարգը՝ սովորեցնելով անհրաժեշտ սոցիալական հմտություններ,

➡ ստեղծեք իրավիճակներ, որպեսզի երեխան բնական միջավայրում կիրառի սովորած սոցիալական հմտությունները, օրինակ՝ բարևի, հարցեր տա ընկերներին, խաղալիք խնդրի, շնորհակալություն ասի,

➡ կազմակերպեք դերային խաղեր,

➡ փորձեք խաղի միջոցով խթանել հաղորդակցումը, օրինակ՝ սովորեցնելով, որ ընկերոջն ասի. «Իմ հերթն է...քո հերթն է»,

➡ տարբեր իրավիճակներ մոդելավորելով՝ սովորեցրեք տարբեր հասարակական վայրերում ընդունելի սոցիալական նորմերը, օրինակ՝ տոմսարկղի մոտ հերթ կանգնել, թատրոնում լուռ նստել, հյուր գնալիս բարևել և այլն,

➡ օգտագործեք սոցիալական պատմություններ, տարբեր խաղերի և երգերի միջոցով փորձեք զարգացնել երեխայի՝ նմանակելու հմտությունը,

➡ այնպիսի խաղալիքներ տվեք, որ երեխան դժվարանա օգտագործել և ստիպ-

վաճ լինի խնդրելու ձեզ, որ օգնեք իրեն ,


➡ ներգրավեք երեխային տարբեր միջոցառումներում, էքսկուրսիաներում, զբոսանքներում՝ հաշվի առնելով վերջինիս հետաքրքրություններն ու զգայունակությունը տվյալ միջավայրի նկատմամբ:

➡ Սոցիալական պատմություններ

Աուտիզմ և վարքային խանգարումներ ունեցող երեխաներին, ինչպես նաև սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաներին սոցիալական հմտություններ սովորեցնելու համար լայնորեն օգտագործվում են սոցիալական պատմությունները: Այս փոքրիկ պատմությունները քայլ առ քայլ նկարագրում են տարբեր իրավիճակներ և օգնում երեխաներին՝ նախնական պատկերացում կազմել համապատասխան միջավայրում ընդունված վարքերի և սոցիալական նորմերի մասին:


Սոցիալական պատմություն քաղաքավարության կանոնների վերաբերյալ

Ես միշտ լավ բառերով եմ խոսում ընկերներիս և մեծահասակների հետ:



Վատ բառերից մարդիկ վիրավորվում են և տխրում:

*Երբ ընկերներիս հետ ինչ-որ բան ենք կառուցում, ու հանկարծ քանդվում է, կարող եմ ասել. «Լավ, էլի...», «Տես՜ր», «Է...»:
Սրանք վատ բառեր չեն:*



Երբ ինչ-որ բան իմ ուզածով չի լինում կամ ինձ զայրացնում է, կարող եմ ասել.

«Թո՛ւ...», «Վայ՛», «Է...»

Սրանք ևս վապ բառեր չեն:




Երբ ինչ-որ փեղից վապ հոպ է գալիս, կարելի է ասել.

«Ինչ վապ հո՛ւ է», «Ֆո՛ւ», «Օ՛յ»

Սրանք ևս վապ բառեր չեն:

Իմ ընկերները երբեմն ծիծաղում են, երբ ինչ-որ մեկը վապ բառեր է ասում, բայց ես միշտ պիտի հիշեմ, որ գեղեցիկ չէ վապ բառերով խոսելը:

Ես միշտ կարող եմ այլ կերպ ծիծաղեցնել իմ դասընկերներին, օրինակ՝ հումոր անելով, դեմքեր նմանակելով, զվարճալի նկարներ նկարելով:



Ես միշտ լավ եմ խոսում ընկերներիս, ուսուցիչներիս հետ և դրանից ինձ լավ եմ զգում:

Ես միշտ քաղաքավարի եմ խոսում ընկերներիս հետ, և նրանք սիրում են ինձ հետ շփվել: Երբ ինչ-որ բան եմ ուզում, գեղեցիկ խնդրում եմ, օրինակ, ասելով՝ «Կարելի՞ է...», «Ես կարո՞ղ եմ...», «Կթողնե՞ս»:



Վերջում միշտ ասում եմ շնորհակալություն²³:

➡ Մոդելավորում

Սոցիալական ուսումնառության (Social Learning) տեսության համաձայն՝ մարդիկ սովորում են՝ նայելով ուրիշներին: Ուսումնառության այս տեսության հիմքում ընկած են **մոդելավորումն** ու **նմանակումը**: Մոդելավորումը ցանկալի հմտության ցուցադրումն է սովորողին, որը յուրացնում է այն՝ նմանակելու միջոցով: Օրինակ՝ մանկավարժը տեսանյութի միջոցով ցույց է տալիս, թե ինչպես են երեխաները իրենց պահում հյուր

²³Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

գնալիս, հասարակական տրանսպորտում, խանութում, պոլիկլինիկաներում, դպրոցում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ տեսանյութերի միջոցով իրականացվող մոդելավորումը լավ արդյունքներ է ապահովում աուտիզմ կամ զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաներին սոցիալական հմտություններ ուսուցանելու գործընթացում²⁴:

Մոդելավորման համար կարելի է օգտագործել նաև ուսուցողական մուլտֆիլմեր, սոցիալական գովազդներ, մանկավարժի կողմից պատրաստված տեսանյութեր:

Սոցիալական հմտությունների ուսուցանմանն ուղղված տեխնիկաներ

II ➔ Խմբային ձևացնող խաղ

Նպատակը. Օգնել երեխաներին՝ վերահսկելու սեփական հույզերը և խուսափելու վեճերից:

Ընթացքը. Առաջարկեք երեխաներին խմբով ձևացնել, թե իբր իրենք գոյություն չունեցող կենդանիների ընտանիք են: Դերային խաղի միջոցով առաջարկեք, որ հերթով արձաններ դառնան և մնան նույն դիրքով, առանց փոխելու դեմքի արտահայտությունը, իսկ մյուսներին առաջարկեք փորձել տեղաշարժել արձան դարձած ընկերներին:

Հետազոտությունը պարզել է, որ այս խաղը երեխաներին օգնում է ավելի լավ վերահսկել սեփական հույզերը:

II ➔ Ես այսպեղ նոր եմ²⁵

Նպատակը. Օգնել նոր երեխաներին՝ հարմարվելու մանկապարտեզին, քանի որ շատ երեխաների համար այն մեծ դժվարություն կարող է իրենից ներկայացնել:

Ընթացքը. Դաստիարակը մի խումբ սոցիալապես ակտիվ և շփվող երեխաների հետ աջակցող խումբ է ստեղծում, որի նպատակն է օգնել նոր երեխային՝ հարմարվել նոր միջավայրին և արագ ձեռք բերելու ընկերներ: Աջակցող խմբի երեխաները կարող են նոր երեխային հաճախակի հրավիրել միասին խաղալու, ինչպես նաև, նրանք կարող են նույն սեղանի շուրջ նստել հաց ուտելու ժամին. դա կօգնի երեխային՝ հաղթահարելու նոր իրավիճակի հետ կապված դժվարությունները և մտերմանալու խմբի երեխաների հետ:

II ➔ Գնդակի փոխանցում²⁶

Այս խաղն առաջարկել է Ս. Վայթը:

Նպատակը. Զարգացնել հաղորդակցման հմտությունները:

Անհրաժեշտ պարագաներ. Գնդակ:

Ընթացքը. Երեխաները կանգնում են շրջանով, երեխաներից մեկը սկսում է խաղը՝

²⁴ Jiyeon Park, MEd, Emily C. Bouck, PhD, Ana Duenas, MA, Using Video Modeling to Teach Social Skills for Employment to Youth With Intellectual Disability. <https://doi.org/10.1177/2165143418810671>

²⁵ Sandra Stroud, Sharon Vaughn Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems, page 119

²⁶ <https://www.parentingscience.com/social-skills-activities.html>

խոսելով կողքինի հետ, և փոխանցում գնդակը, հաջորդը շարունակում է երկխոսությունը և փոխանցում խմբի մեկ այլ անդամի: Այս խաղում պարտադիր պայման է, որ խաղացողները հետևեն մեկմեկու և գնդակի փոխանցման ժամանակ նայեն միմյանց աչքերին: Հեղինակը խորհուրդ է տալիս ուսուցիչներին մասնակցելու այս խաղին և ընդգրկելու այն երեխաներին, ովքեր ակտիվ չեն:

▶▶ *Ես իմ փոքրիկ տանն եմ*²⁷

Նպատակը. Օգնել երեխաներին՝ ճանաչելու ինչպես իրենց, այնպես էլ այլ մարդկանց անձնական տարածքը, չխանգարելու ընկերներին ու նրանց չդրդելու, որ իրենցից խուսափեն:

Անհրաժեշտ պարագաներ. Աթոռներ, գունավոր կավիճ կամ մարկեր (մականշիչ):

Ընթացքը. Մանկավարժը այնպես է կազմակերպում սենյակը, որ երեխաները նստեն իրարից մոտ 1 մետր հեռավորության վրա, և յուրաքանչյուր երեխայի աթոռի շուրջը շրջան է գծում: Այնուհետև նա պատմում է երեխաներին մի երեխայի մասին, ով շատ էր ուզում իր անձնական փոքրիկ տնակն ունենալ, որ ոչ ոք չմտներ այնտեղ և չդիպչեր իր իրերին: Այդ տնակը միայն իր տնակն էր, և քանի որ նա արդեն ուներ իր տնակը, հասկանում էր, որ մյուս երեխաներն էլ են ուզում ունենալ իրենց տնակները, և չի կարելի խանգարել նրանց: Վերջում մանկավարժը բացատրում է, որ գծված շրջանները իրենց փոքրիկ տնակներն են, և որ միշտ պետք է հիշել դրանց մասին:

Առաջարկություններ ընտանիքի հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողների հետ համագործակցությունը սոցիալական հմտությունների արդյունավետ ուսուցանման գործընթացում ամենակարևոր պայմաններից է: Անհրաժեշտ է ծնողին ներգրավել նպատակների սահմանման և ընտրված մոտեցումների կիրառման գործընթացում: Երեխան շատ ավելի հեշտ կյուրացնի նոր հմտությունները, եթե հասկանա, որ բոլորն իրենից նույն բանն են պահանջում: Խրախուսեք ծնողներին, որ հնարավորինս հաճախ երեխայի հետ այցելեն տարբեր սոցիալական վայրեր, կազմակերպեն երեխայի շփումը հասակակիցների հետ և ներգրավեն երեխային նրա իսկ նախասիրություններին համապատասխան խմբակներում:

²⁷ Sandra Stroud, Sharon Vaughn Candace S.Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems, page 119

ԲԱԺԻՆ 7. ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՆԿԱՐՆԵՐԻ/ՍԻՄՎՈԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Արմենուհի Ավագյան, լոգոպեդ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Այս բաժնում անդրադարձ կկատարվի հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների կրթության կազմակերպման առանձնահատկություններին ու նախադպրոցական ուսումնական հաստատություններում այլընտրանքային հաղորդակցման տեխնիկաների, նկարների, սիմվոլների կիրառմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում շատ են խոսքի ու հաղորդակցման դժվարություններ ունեցողները:

Հաղորդակցումը տեղեկատվության փոխանակման ակտիվ գործընթաց է, որը ներառում է ինչպես արտահայտվելը, այնպես էլ՝ խոսքը ընկալելը: Այն կարող է իրականացվել ինչպես խոսքով, այնպես էլ՝ ոչ խոսքային միջոցներով՝ ժեստեր, մարմնի շարժումներ, նկարներ, սիմվոլներ, գրավոր խոսք, խոսող սարքեր, մատնախոսություն (Beukelman, D. & Mirenda, P., 2013):

Հաղորդակցումը նման է փուչիկով խաղի: Նախ մի խաղընկերը պետք է հարվածի փուչիկին, ապա՝ երկրորդը: Շնորհիվ երկուսի համատեղ գործունեության՝ փուչիկը գետնին չի ընկնում (տես նկար 1):



Նկար 1. Հաղորդակցման համեմատությունը փուչիկով խաղի հետ

ՆՈՒՀ հաճախող երեխաների շրջանում կան այնպիսիք, որոնց հնչարտասանությունը, բառապաշարը չեն համապատասխանում տարիքային նորմին, որոնք քերականորեն սխալ են խոսում, չեն կարողանում արտահայտել մտքերը և ունեն շփվելու, հաղորդակցվելու դժվարություններ: Քիչ չեն երեխաները, որոնց բառապաշարում առկա են ոչ միայն հայերեն, այլև օտար լեզուներով բառեր, արտահայտություններ, որոնք,

սակայն, ոչ միշտ են ծառայում հաղորդակցմանը, արտասանվում են մեխանիկորեն ու երեխաների բառապաշար են մուտք գործել օտարալեզու համակարգչային խաղերից ու մուլտֆիլմերից: Ավելորդ չէ նշել, որ էկրանների հետ երկարատև ու շարունակական շփման արդյունքում դրսևորվում են նաև խոսքի ընկալման, կենտրոնանալու, հաղորդակցման, սոցիալականացման դժվարություններ, հուզական, շարժողական խնդիրներ, խոսքի զարգացման հապաղում, հոգեբանական, վարքային առանձնահատկություններ: Ինչ խոսք՝ դժվար է կազմակերպել խոսքի ու հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների նախադպրոցական կրթությունը:

Խոսքի ու հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ՝

- որքանով է պահպանված երեխայի խոսքի ընկալումը,
- որքանով է զարգացած երեխայի բանավոր խոսքը,
- արդյո՞ք երեխան օգտվում է հաղորդակցման այլընտրանքային ձևերից. եթե այո,

ապա որից (ժեստեր, նկարներ և այլն):

Երեխայի խոսքի ընկալման տարիքային նորմերը մանրամասն ներկայացված են «Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներում» (ՅՈՒՆԻՍԵՖ, 2019): Օրինակ՝ համաձայն չափորոշիչի, 2-3 տարեկան երեխան պետք է կատարի պարզ հրահանգներ: Պարզ կոչվում է մեկ գործողության կատարում պարունակող հրահանգը («Դուռը բացիր», «Խաղալիքը բեր», «Կոշիկներդ հագիր»): Հաճախ, մանկավարժները և ծնողները հրահանգները ուղեկցում են ժեստերով: Օրինակ՝ «Դուռը փակիր» ասելիս ձեռքով ցույց են տալիս դուռն ու փակելու շարժում կատարում: Այս դեպքերում հնարավոր չէ օբյեկտիվորեն գնահատել երեխայի՝ **խոսքի** ընկալումը, քանի որ հրահանգը կատարելիս նա կարող է կողմնորոշվել ցուցադրված ժեստով ու իրենից պահանջվածը կռահել: Խոսքի ընկալման դժվարություն ունենալու դեպքում երեխան չի կարող լիարժեքորեն ներգրավվել ուսումնական գործընթացում ու դրանից օգուտ քաղել:

Եթե պարզվում է, որ երեխայի խոսքի ընկալումը չի համապատասխանում տարիքային նորմին, ապա աշխատանքի մեջ պետք է ներգրավվի լոգոպեդը: Մանկավարժը կարող է երեխային օգնել հետևյալ եռաքայլ տեխնիկայի միջոցով.

1. Ժեստը զուգակցել խոսքային հրահանգով: Սա օգնում է երեխային ժեստի միջոցով կռահել իրենից ակնկալվողը:

2. Ժեստն անել խոսքային հրահանգից մի քանի վայրկյան հետո, եթե երեխան դժվարանում է խոսքն ընկալել: Սա օգնում է երեխային ապավինել խոսքի ընկալմանը: Ժեստն, այնուամենայնիվ, արվում է, եթե մանկավարժը երեխայի վարքից հասկանում է, որ նա խոսքային հրահանգը չի ընկալել: Ամեն դեպքում, ուշացած ժեստը նպաստում է երեխայի՝ խոսքի ընկալման զարգացմանը և օգնում պատկերացնել երեխայի՝ խոսքի ընկալման օբյեկտիվ վիճակը:

3. Հրահանգը ներկայացնել բացառապես խոսքով: Սա արդեն արվում է այն դեպքերում, երբ երեխան դադարում է ունենալ ոչ խոսքային հուշման կարիք: Մի քայլից մյուսին անցնում ենք այն դեպքում, երբ նախորդը լիովին յուրացվում է երեխայի կողմից:

Ինչ անել, եթե երեխան չի խոսում և ունի հաղորդակցման դժվարություններ

Եթե սաների շրջանում կան խոսքի ու հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաներ, ապա օգտակար է խմբասենյակում ունենալ «հաղորդակցման տախտակ» (նմուշը տես նկար 2-ում): Այն փակցվում է բոլորի համար տեսանելի վայրում, պարունակում է սենյակի տվյալ հատվածին համապատասխանող առարկաների ու այդ հատվածում կատարվող գործողությունների նկարները: Խոսելուն, պատմելուն, հարցեր տալուն զուգահեռ մանկավարժը ցույց է տալիս համապատասխան նկարները՝ հեշտացնելով իր խոսքի ընկալումն ու մոդելավորելով այդ ձևով մտքերն արտահայտելու տարբերակը: Հաղորդակցման դժվարություն ունեցող երեխային ուղղորդելով նկարները մատնացույց անելու միջոցով արտահայտվելուն, մանկավարժը ապահովում է երեխայի ներգրավվածությունը պարապմունքներում ու որևէ գործունեության մեջ, կանխարգելում է անցանկալի վարքագծի դրսևորումները:



Նկար 2. Հաղորդակցման տախտակի նմուշ²⁸

²⁸Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

Ներկայացված «հաղորդակցման տախտակի» նմուշի օգնությամբ երեխան կարող է արտահայտել նկարելու, ներկելու, տիկնիկով խաղալու և այլ ցանկությունները: Այս հնարն, իրականում հետաքրքրում է բոլոր երեխաներին ու նպաստում նրանց՝ խոսքի ընկալման բարելավմանը: Կարևոր է, որ այն օգտագործելիս չթիրախավորեք հաղորդակցման դժվարություն ունեցող երեխաներին ու դրանով չդրսևորեք անտեղի տարբերակված մոտեցում նրանց նկատմամբ:

Նկարները լայնորեն ու արդյունավետորեն կիրառվում են նաև օրվա անելիքները, «դասացուցակը» երեխաներին ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՆՈՒՀ-երում «Օրվա անելիքները» փակցված են լինում միջանցքում և նախատեսված են ծնողի համար: Երեխան, առավոտյան մանկապարտեզ գալով, տեղյակ չէ, թե ինչ պարապմունքների է մասնակցելու, ինչնով է զբաղվելու: Բացի դրանից, երեխան նաև չունի պատկերացում ժամանակի, դրա տևողության մասին, ինչը, անորոշություն պատճառելով, նպաստում է անցանկալի վարքագծի դրսևորմանը: Երեխան կարող է անընդհատ հարցնել, թե երբ են գնալու բակ, երբ են նկարելու կամ երբ են իրեն տուն տանելու: Խմբասենյակում, կաչուն ժապավենի վրա օրվա ռեժիմի ներկայացումը երեխային պատկերացում է տալիս տվյալ օրվա անելիքների մասին: Այն աշխատում է հետևյալ կերպ: Առավոտյան, երեխաներին ողջունելով, մանկավարժը ներկայացնում է օրվա անելիքները՝ մատնացույց անելով համապատասխան նկարները: Երբ այս կամ այն գործողությունը/պարապմունքը ավարտվում է, համապատասխան նկարը հեռացվում է ժապավենի վրայից: Ժապավենի ներքևի հատվածում կարելի է ունենալ գրպանիկ՝ ավարտված գործողությունների նկարների համար: Նկարը ժապավենից հեռացնելու և նոր գործողության նկարը փակցնելու հարցում մանկավարժը կարող է դիմել երեխաների օգնությանը՝ ամեն անգամ ընտրելով մի սանի: Կարելի է ընտրել նրանց, ովքեր առավել շատ են դժվարանում ռեժիմային մի պահից մյուսին անցնելու հարցում:

Ստորև ներկայացված է օրակարգի հնարավոր նմուշ: Խորհուրդ է տրվում նկարները դասավորել մի շարքով, հորիզոնական կամ ուղղաձիգ:

1 ճաշել 	2 խաղահրապարակ 	3 նկարել 	4 հաշվել
5 ավազով խաղալ 	6 քնել 	7 քարտերով խաղալ 	8 գնալ փուն

Նկար 3. Օրվա անելիքները նկարներով ներկայացնելու նմուշ²⁹

²⁹ Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzingler

Ինչպե՞ս երեխային/երեխաներին սովորեցնել սպասել

Հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաները հաճախ դժվարությամբ են սպասում: Նրանք սպասելիս դրսևորում են շարժողական անհանգստություն, երբեմն՝ ագրեսիա և ինքնաագրեսիա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում սպասելու անհրաժեշտություն կարող է առաջանալ ամենուրեք և անընդհատ. խաղալիս, հանվելիս ու հագնվելիս, օգնության անհրաժեշտության դեպքում, զուգարան գնալիս, խաղահրապարակում: Հաճախ է կարիք լինում, որ երեխան սպասի իր հերթին:

Հերթին սպասելու ներքոնշյալ տեխնիկաները կարող են օգտակար լինել մանկավարժների համար.


1. Այն վայրերում, որտեղ երեխաները առավել հաճախ են հերթ կանգնելու անհրաժեշտություն ունենում (օրինակ՝ հանդերձապահարանի մոտ՝ բակ գնալուց առաջ) հատակին կատարվում են գծանշումներ (օրինակ՝ նկարվում են շրջաններ, որոնք կարող են նաև համարակալված լինել): Երեխաները կանգնում են յուրաքանչյուրը մի շրջանի մեջ ու, առաջինի՝ հանդերձապահարանին մոտենալուն պես մեկական քայլ առաջ են ցատկում՝ օրինակ՝ 6 համարի շրջանից տեղափոխվելով 5 համարի շրջանի մեջ, և այդպես շարունակ:

Իր հերթին սպասելիս, ունենալով տեսողական ուղենիշ ու տեղյակ լինելով, թե որքան սպասելու անհրաժեշտություն կա, երեխան շատ ավելի հստակ է ընկալում իր անելիքն ու հեշտ ենթարկվում սպասելու անհրաժեշտությանը:

2. Այն իրավիճակներում, երբ առկա է սպասելու անհրաժեշտություն, կարելի է օգտագործել ժետոնային համակարգը: Այն սովորաթղթից ուղղանկյունաձև քարտ է, որի մի անկյունում կաչուն ժապավենով փակցվում է երեխայի համար ցանկալի գործողության նկարը, իսկ ստորին հատվածում, նույն կերպ ամրացվում են ժետոնները՝ խորհրդանշելով որոշակի ժամանակահատված (նմուշը տե՛ս նկար 4-ում): Օրինակ՝ երեխան ուզում է ճոճանակ նստել, բայց նախ պետք է ավարտի նկարչությունը և դրա համար դեռևս 10 րոպե ունի:

Տվյալ դեպքում երեխային ներկայացվում է ճոճանակ նստելու նկարը, իսկ յուրաքանչյուր ժետոնը խորհրդանշում է 2 րոպե: Երկու րոպեն անցնելուն պես մանկավարժը փակցնում է առաջին ժետոնը, երեխային ցույց է տալիս նկարը՝ ասելով. «Մնաց, որ այսքան նկարես, ու գնանք ճոճանակ նստելու»:

Այսպես՝ յուրաքանչյուր երկու րոպեն մեկ մանկավարժը փակցնում է հերթական ժետոնը: Եթե երեխան ժամանակի մասին պատկերացում չունի, կարելի է անգամ չնշել մնացած րոպեների քանակը և խոսքը ուղեկցել՝ ժետոնների դեռևս դատարկ հատվածները ցուցադրելով: Այս դեպքում երեխան հստակ տեսնում է ժամանակի անցնելը և հասկանում, որ ժետոնների ավելանալուն զուգընթաց մոտենում է ցանկալի գործողությամբ զբաղվելու պահը:



Նկար 4. Ժեպոնային համակարգի քարտի նմուշ

Երբեմն կարելի է սպասող երեխային փոխանցել սպասելը խորհրդանշող սիմվոլը (տես նկար 5): Մանկավարժը երեխային է տալիս նկարն ու ասում. «**Սպասիր**»:

Պայմանն այն է, որ երեխան պետք է սպասի այնքան ժամանակ, քանի դեռ սիմվոլն իր ձեռքում է: Սկզբնական շրջանում տեխնիկան կիրառվում է շատ կարճ ժամանակահատվածով, որպեսզի երեխան պատկերացնի հրահանգի ու իր կողմից ակնկալվող գործողության կապը:



Նկար 5. «Սպասիր» հրահանգի սիմվոլը

Այսպիսով, նկարները և սիմվոլները՝ ուղեկցվելով խոսքով, բարելավում են խոսքի ընկալումն ու առավել իրատեսական են դարձնում հրահանգների կատարումը: Դրանք նպաստում են խոսքի ու հաղորդակցման զարգացմանը և կանխում են անցանկալի վարքագծի դրսևորումները:

Առաջարկություններ ընտանիքի հետ աշխատանքի վերաբերյալ

1. Երեխայի՝ խոսքի ընկալման վերաբերյալ ձեր հետևությունները ներկայացրեք նրա ծնողներին, մեկնաբանեք ժեստերի հետզհետե նվազեցման տեխնիկան ու հորդորեք այն կիրառել տանը:

2. Հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների հետ աշխատելիս ծնողներին հորդորեք նկարները կիրառել նաև տանը:

3. Ընտանիքին օգնեք պատրաստելու և կիրառելու սպասել սովորեցնող քարտը:

4. Ծնողներին բացատրեք ժեստային համակարգի մեխանիզմը: Օգնեք պատկերացնել, թե տանը կատարվող իր գործողությունների ժամանակ այն կարող է օգտակար լինել:

ԲԱԺԻՆ 8. ՏԱՐԻՔԱՅԻՆ ՎԱԽԵՐ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԴՐԱՏՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Թագուհի Մակարյան, հոգեբան

Սույն բաժնում ներկայացված են վախի սահմանումը, տեսակները, «վախ» և «տագնապ» հասկացությունների ընդհանրություններն ու տարբերությունները, տարիքային վախերը՝ իրենց դրսևորումներով: Հատուկ անդրադարձ է արվում՝ ինչպես տարբերել սովորական վախերը ոչ սովորական՝ ներուրիկ բնույթի վախերից: Բաժնում առաջարկվում են առօրյայում վախի հաղթահարման մեթոդներ և հնարներ, որոնք կիրառելի են և մասնագետների, և ծնողների համար:

Վախը մարդու կյանքին և բարօրությանը սպառնացող վտանգին տրվող պատասխան հակազդումն է: Այն հիմնված է ինքնապաշտպանական բնազդի վրա և ուղեկցվում է բարձրագույն նյարդային գործունեության որոշակի ֆիզիոլոգիական փոփոխություններով: Վախի զգացումը բնորոշ է նաև կենդանիներին: Այն տարբերությամբ, որ կենդանին վախենում է կոնկրետ վտանգից, իսկ մարդը, պայմանավորված իր հոգեկանի զարգացածությամբ, իր երևակայելու առանձնահատկությամբ, կարող է վախենալ իր իսկ հորինած՝ գոյություն չունեցող վտանգից:

Վախերի դասակարգումը և տեսակները

Վախերը կարելի է դասակարգել՝ ելնելով տարբեր օրինաչափություններից (Захаров А.И., 2010): Ըստ տարիքային առանձնահատկությունների՝ վախերը բաժանվում են **մանկական և մեծահասակների** վախերի:

Տարբերում ենք **բնական (կենսաբանական), ներքին և սոցիալական վախեր:**

Բնականի հիմքում ընկած են այն վախերը, որոնք վտանգ են սպառնում մարդու կյանքին:

Ներքին վախերը պայմանավորված են անձի ներքին վիճակներով:

Սոցիալական են այն վախերը, որոնք պայմանավորված են անձի սոցիալական դերի փոփոխմամբ:

Կենսաբանական վախից սոցիալականի անցումը տեղի է ունենում աստիճանաբար: Նորածին երեխան վախենում է բարձր ձայնից, մթությունից, մենակությունից: Երբ նա պատահաբար հայտնվում է հիվանդանոցում, սկսում է վախենալ սպիտակ խալաթով բոլոր մարդկանցից, որոնք, իր պատկերացմամբ, ցավ են պատճառում: Դպրոց հաճախելուն պես ծագում են վախի նոր օբյեկտներ՝ ուսուցիչ, չսովորած դասեր, ուշացում:

Սոցիալական վախերը, կարող են բխել կենսաբանական վախերից, թեև դրանք

միշտ էլ պայմանավորված են սոցիալական գործոնով: Սոցիալական վախերի բնույթն ու դրսևորումները մեծապես կախված են տվյալ ժամանակաշրջանից և հասարակական պայմաններից: Ինչպես վերևում նշեցինք, երևույթի բնույթը, այդ թվում՝ դրանց դրսևորումները, որոնք անհանգստացնում և վախեցնում են մարդկանց, օրինաչափորեն փոփոխվում են տարիքի հետ: Երեխաների անձնային զագացմանը զուգընթաց, կենսաբանական վախերը մղվում են երկրորդ պլան՝ իրենց տեղը զիջելով սոցիալական վախերին: Սոցիալական վախերի շարքին են պատկանում վախը պատասխանատվությունից, վախը քննադատությունից, վախը՝ պայմանավորված ամաչկոտությամբ, և այլն:

Տարբերում ենք վախի հետևյալ տեսակները. **իրավիճակային, անձնային, իրական, երևակայական, սուր, քրոնիկական, գիտակցված, չգիտակցված** (Захаров А.И., 2010):

Իրավիճակային վախերը ծագում են անսպասելի իրավիճակներում, օրինակ՝ շան հանկարծակի հայտնվելուց, բնական աղետների ժամանակ, կոնֆլիկտային (բախումնային) իրավիճակներում և այլն:

Անձնային վախերը պայմանավորված են անձի բնավորությամբ, տագնապայնության մակարդակով: **Իրական և սուր** վախերը պայմանավորված են իրադրությամբ, իսկ **երևակայական և քրոնիկ** վախերը՝ անձի առանձնահատկություններով:

Կան վախեր, որոնք ինքնին ակնհայտ են և պարզ են մեզ՝ իրենց առաջացման պատճառների հետ միասին. դրանք **գիտակցված վախերն** են: Օրինակ՝ մենք վախենում ենք փողոցում թափառող շներից, որոնք կարող են մեզ վնասել, այսինքն՝ մենք ճանաչում և ընդունում ենք այն օբյեկտը, որը կարող է մեր մեջ վախ առաջացնել: Բայց երբեմն լինում է այնպես, որ մարդը վախենում է ինչ-որ բանից, թեև չի կարողանում պարզել, թե՞ որն է իր անհանգստության պատճառը. վերջինիս շարքին են պատկանում **չգիտակցված վախերը**:

Վախ և տագնապ

Վախը և տագնապը, որպես հոգեվիճակներ, ունեն իրենց ընդհանրություններն ու տարբերությունները: Այս երկու հոգեվիճակների հիմքը **անհանգստության զգացումն** է: Ըստ էության, վախը, որպես երևույթ, նույնքան տարածված է, որքան տագնապը: Փորձենք տարբերակել վախ և տագնապ հասկացությունները.

- Տագնապը վտանգի ազդանշանն է, իսկ վախը՝ պատասխան ռեակցիան:
- Տագնապը կանխազգացում է, իսկ վախը՝ վտանգի զգացում:
- Տագնապը գրգռող ազդեցություն ունի հոգեկանի վրա, վախը՝ արգելակող:
- Տագնապի դրդապատճառներն առավել անորոշ, վերացական և ընդհանուր բնույթ ունեն, իսկ վախը՝ առավել կոնկրետ է, որոշակի:

● Տագնապը, որպես վտանգ ակնկալող զգացողություն ուղղված է դեպի ապագան, վախի աղբյուրը, որպես տեղի ունեցած տրավմատիկ (վնասաբեր) իրողության ապրման փորձ, կապվում է անցյալի հետ:



- Չնայած իր անորոշությանը՝ տագնապը առավել կոգնիտիվ (իմացական), ռացիոնալ երևույթ է, իսկ վախը՝ հուզական, իռացիոնալ:
- Տագնապը, որպես հոգեկան հակազդման տեսակ, պայմանավորված է սոցիալական գործոններով, իսկ վախը՝ կենսաբանական գործոններով:

Որո՞նք են վախի առաջացման պատճառները

Մանկական վախերի առաջացման պատճառները բազմազան են: Թե որքանով է դրսևորվում այս կամ այն վախը և արտահայտվում է այն արդյոք. պայմանավորված է ոչ միայն երեխայի հոգեկան զարգացման առանձնահատկություններով, այլ նաև՝ այն միջավայրով, որտեղ տեղի է ունենում երեխայի անձի ձևավորումը:

Վախերի առաջացման հնարավոր պատճառներ կարող ենք դիտարկել՝

- ծնողական մոտեցումների առանձնահատկությունները,
- կոնֆլիկտային (բախումնային) իրավիճակները,
- հղիության ընթացքում տարաբնույթ խնդիրները,
- ծնողների տարիքը,
- մոր գերակայությունը ընտանիքում,
- գերհոգատարությունը երեխայի հանդեպ,
- միակ երեխայի գործոնը,
- ուշացած կամ սպասված երեխայի հանգամանքը:

Որո՞նք են փարիքային վախերը և դրանց դրսևորումները

Թերևս վիճելի է այն հարցը, թե որ տարիքում է առաջին անգամ դրսևորվում վախը, և այդ հարցի շուրջ տեսակետները բազմազան են:

Հոգեբան Պ. Լեշլին գտնում է, որ արդեն 3 ամսականից երեխայի մեջ դրսևորվում է մենակության և անձանոթներից վախի զգացումը (Захаров А.И., 2010): Ըստ Ջախարովի՝ վախի զգացումը ձևավորվում է 6 ամսականից, քանի որ այն ենթադրում է մի շարք ճանաչողական գործընթացների զարգացածության որոշակի մակարդակ, նաև փորձ՝ կանխատեսելու արդեն իսկ ծանոթ սպառնացող վտանգը:

Միանգամայն հասկանալի է, որ խոսքը գնում է ենթադրությունների մասին, քանի որ 3 ամսական երեխայի ներաշխարհը այնքան էլ ուսումնասիրված չէ:

Ստորև ներկայացնում ենք **փարիքային վախերի դրսևորումներն՝ ըստ Ա. Ջախարովի** (Захаров А.И., 2010).

- 3 ամսականում՝ վախ մենակությունից, անձանոթներից,
- 6 ամսականում՝ մենակության վախ, վախ կողմնակի մարդկանցից,
- մեկ ու կես տարեկանից՝ վախ մոր բացակայության հանդեպ,
- մեկից երկու տարեկան՝ վախ մթությունից, մենակությունից և անձանոթներից,
- երկու տարեկանից՝ վախ կենդանիներից, սրսկումներից, պատժվելուց,
- երեք տարեկանից՝ վախ հեքիաթների հերոսներից,

- չորս տարեկանից՝ վախերի եռանկյունի՝ մենակություն, փակ տարածություն, մթություն,
- երեքից հինգ տարեկանից՝ սոցիալական վախեր,
- հինգ տարեկանից՝ մահվան հետ կապված վախեր,
- յոթ տարեկանից՝ վախ պատասխանատվությունից և սխալվելուց:

Երբ են տարիքային վախերը մասնագիտական աջակցություն պահանջում

Որքան էլ որ տարիքային վախերը դիտարկվում են որպես երեխայի զարգացման օրինաչափ դրսևորումներ, այնուամենայնիվ՝ անհրաժեշտ է տարբերակել դրանց բնական դրսևորումը սահմանային դրսևորումներից: Վերջիններիս դեպքում գիտակցության կողմից վախի կառավարումը թուլանում է՝ իր բացասական ազդեցությունն ունենալով երեխայի բնավորության, միջանձնային հարաբերությունների և ընդհանրապես սոցիալական գործունեության ոլորտներում նրա հարմարման գործընթացի վրա: Այսինքն՝ ոչ թե գիտակցությունն է կառավարում վախը, այլ վախը՝ գիտակցությանը: Ստորև ներկայացված են, թե որ դեպքերում են տարիքային վախերը դիտարկվում սովորական վախեր, որ դեպքերում՝ արտահայտված կամ սուր վախեր, որոնք հոգեբանական աջակցություն են պահանջում:

Բոլոր այն իրավիճակներում, երբ վախերն ուղեկցվում են տարբեր ներուժիկ բնույթի դրսևորումներով՝ տիկեր (ջղակծկում), կակազություն, գիշերամիզություն, կաչուն սովորություններ, նպատակահարմար է ուղղորդել համապատասխան մասնագետների մոտ (մանկական նյարդաբան, մանակական հոգեբան) (Քրոֆտ Վ., 2008):

Ներոտիկ կարող են համարվել այն վախերը, որոնք կամ չեն արդարացվում կոնկրետ վտանգով, կամ չեն համապատասխանում վերջինիս ապրմանը՝ ըստ նշանակալիության աստիճանի, թեև իրենց ծագման հիմքում միշտ ունեն որոշակի հոգեբանական ֆոն:

Ներոտիկ և տարիքային վախերի տարբերություններն են՝

- Տարիքային վախերը, ի տարբերություն ներոտիկ վախերի, դրսևորվում են կոնկրետ արտաքին վտանգի դեպքում՝ հանդիսանալով ինքնապաշտպանական հակազդեցություն:
- Ներոտիկ բնույթի վախերի դեպքում դրսևորվում է վախերի քանակական աճ՝ ի տարբերություն տարիքային վախերի:
- Ներոտիկ բնույթի վախերի դեպքում վախերը հուզականորեն հագեցած են՝ ի տարբերություն տարիքային վախերի:
- Ներոտիկ բնույթի վախերը կարող են դրսևորվել այն տարիքում, որին դեռևս կամ արդեն բնորոշ չեն համապատասխան տարիքային վախերը:

● Ներուտիկ բնույթի վախերը կարող են շարունակվել այն տարիքում, երբ նրանք հաղթահարված պետք է լինեն:

● Ներուտիկ բնույթի վախերը նորմալից ավելի են և արտացոլում են ծնողների վախերը:

● Ներուտիկ բնույթի վախերը հիմնականում կապված են ընտանիքում կոնֆլիկտային հարաբերությունների և շփման մեջ ձախողումներ ունենալու հետ (սնուցող օջախ է համարվում հուզական խոցելիությունը, անհանգստանալու հակվածությունը, անվստահությունը սեփական անձի հանդեպ և այլն):

● Տարիքային վախերի դեպքում վախերն ինքնաբերաբար մարում են:

Ինչպե՞ս հաղթահարել տարիքային վախերը

Տարիքային վախերը հեշտ հաղթահարելի են, եթե դրանք փորձում ենք հաղթահարել համապատասխան տարիքում՝ պարզելով վախ առաջացնող պատճառը: Օրինակ՝ գայլից երևակայական վախի դեմ պայքարելու համար, պետք է վերլուծել վախի առաջացման հնարավոր պատճառները, դրսևորումները, ինչից առաջ և հետո է դրսևորվել վախը, ո՞ր իրավիճակներում է այն արտահայտվում, ինչպե՞ս է այն արտահայտվում և այլն:

Վախի հաղթահարման կանխարգելիչ և շտկողական միջոցները բազմազան են: Կան հաղթահարման բազմաթիվ հնարներ, որոնք առօրյայում կիրառելի են և ծնողների, և երեխայի հետ աշխատող այլ մասնագետների կողմից ու լրացուցիչ մասնագիտական աջակցություն չեն պահանջում:

ՆՈՒՇ-ում առավել կիրառելի կարող են լինել վախի կանխարգելման և հաղթահարման հետևյալ տեխնիկաները.

1. նկարչությունը, ծեփումը, ապլիկացիան,

2. պատմություններ հորինելը, հեքիաթներ շարունակելը, հեքիաթներ բեմականացնելը կամ խաղարկելը,

3. խաղը (համապատասխան ուղղորդման դեպքում):

Նկարելով կամ պատկերներ ստեղծելով, այնուհետև դրանք աստիճանաբար փոփոխության ենթարկելով՝ երեխան աշխատում է իր վախի հետ: Երեխայի չհաղթահարված վախի մասին հաճախ խոսում է այն հանգամանքը, որ նա հրաժարվում է իր վախը նկարելուց, իսկ եթե նկարում է՝ նշանակում է, որ երեխան իր վախը հաղթահարելու ռեսուրսներ ունի: Տարածված ձևերից է վախեցնող պատկերին հակակշիռ հերոս նկարելը կամ ստեղծելը: Օրինակ՝ «վախկոտ Աննան» պատմում է՝ ինչից է վախենում և ինչպե՞ս է վախենում, իսկ «քաջ Աննան» օգնում է նրան հաղթել իր վախին: Երկու «Աննաներ»-ի դերից հանդես գալով՝ երեխան կարողանում է գիտակցել, թե ի՞նչ ռեսուրս է իրեն պետք սեփական վախը հաղթահարելու համար, և որո՞նք կարող են լինել վախի հաղթահարման ուղիները:

Աշխատանքի ընթացքում արդյունավետ է հետևյալ հարցերի կիրառումը.

- Ի՞նչ պետք է ունենա հերոսը, որ հաղթի:
- Ի՞նչն է վախեցնող այս նկարի մեջ:
- Ի՞նչը կարող ես փոխել, որ այն ծիծաղելի դառնա:

Պատմություններ շարադրելը ևս դիտարկում ենք վախի հաղթահարման միջոց:

Պատմությունների ներքո երեխան արտահայտում է իր չհաղթահարված վախերը՝ պատմելով հենց այդ վախերի մասին. վերջինս կարող է օգնել մանկավարժին կամ ծնողին՝ ճանաչել դրանք և համապատասխան իրավիճակներում նպաստել հաղթահարմանը: Տվյալ դեպքում մանկավարժի (նաև ծնողի) խնդիրն է երեխային մոտեցնել իրականությանը, որպեսզի նա գիտակցի իր վախի՝ իմաստ չունենալը կամ վերացական լինելը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս երեխային առանձնանալու սեփական խնդրից, կողքից՝ ուրիշի աչքերով դիտարկելու այն, հետևաբար՝ ունենալու ազդեցություն խնդրի վրա: Նախապես երեխային ասվում է, որ պատմությունը խաղարկվելու է պատմությունն արտահայտող նկարներով, դիմակներով, քանդակներով: Առաջադրանքը երեխայից պահանջում է վերանայել իր վախը, այն կապել որևէ սյուժեի հետ, ստեղծել դրա խաղարկման համար որոշակի պայմաններ, կատարել դերերի բաշխում: Երեխայի վախի հաղթահարման ողջ գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ծնողի կամ մանկավարժի կառուցողական ուղղորդումներից:

Նկարելը, երևակայելը, պատմություններ շարունակելը պարունակում են խաղային տարրեր, ինչը ոգևորում է երեխային՝ նպաստելով ապահով և բնական միջավայրում անկաշկանդ, ինքնաբուխ արտահայտվելուն:

Հեքիաթի միջոցով երեխան սովորում է ճանաչել կյանքն իր տարբեր իրավիճակներով: Նա, հանդես գալով գլխավոր դերում, հաղթում է չար ուժերին, պարտության մատնում նրանց և միևնույն ժամանակ լուծում է սեփական վախի հետ կապված իր խնդիրները:

Ինչ վերաբերում է **խաղին**, երեխայի ինքնաբուխ խաղը դիտելը բավականաչափ տեղեկատվական կարող է լինել թե՛ ծնողի, թե՛ մասնագետի համար: Երեխայի վախի մասին կարող է հուշել նույնիսկ այն հանգամանքը, թե ի՞նչ խաղալիք է ընտրում նա: Երեխան հաճախ խուսափում է այն խաղալիքներից, որոնք իրեն վախ են ներշնչում: Օրինակ՝ նա կարող է խաղի ընթացքում համառորեն չնկատել գայլը, այլ՝ փոխարենը ընտրել մկնիկը, կապիկը: Աստիճանաբար ներգրավվելով խաղի մեջ՝ երեխան սկսում է իրեն ազատ և անկաշկանդ դրսևորել, և ականայից կարող է օգտագործել այն տիկնիկներն ու խաղալիքները, որոնք արտացոլում են իր վախը: Հենց այստեղ էլ մեծահասակի համապատասխան միջամտության ժամանակն է: Էական չէ, թե մեծահասակը խաղում ի՞նչ դեր կխաղարկի. գլխավորը նրա վերաբերմունքն ու մասնակցությունն է խաղի սցենարին, որը պետք է դիտել երեխայի տեսանկյունից: Մեծահասակը, լինի ծնող, թե մանկավարժ, ելնելով դերից՝ խաղի ընթացքում կարող է

խաղարկել երեխայի որևէ վախ, որը երեխային կդրդի արտահայտելու դրա հետ կապված հույզեր և ապահով, խաղային միջավայրում գտնելու դրա հաղթահարման երևակայական ելքեր, որոնք, անշուշտ, կտեղափոխի դեպի իրական աշխարհ և իրավիճակներ: Շատ կարևոր է խրախուսել երեխային իր հաղթանակների համար: Խրախուսանքն ամրապնդում է հաղթանակի զգացումը և ցանկալի վարքը՝ ներշնչելով ինքնավստահություն և հավատ սեփական ուժերի հանդեպ: Օրինակ՝ «քաջ Աննան» այսօր վաստակեց ժպտացող արև, քանի որ չվախեցավ մուգ սենյակից:

Վախի հաղթահարման շրջանակներում երեխայի հետ աշխատող մանկավարժներին ներկայացվում են հետևյալ **պահանջները**.

- Մեծահասակը չպետք է միջամտի խաղի ընթացքին կամ ընդհատի այն՝ երեխային ավելորդ հարցեր ուղղելով և «բավական է» արտահայտությամբ:
- Խաղը պետք է կիրառվի այն ժամանակ, երբ երեխան ցանկություն կունենա բախվելու իր վախին և հաղթահարելու այն, այսինքն՝ պատրաստ լինի դրան:
- Ցանկալի է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխան ապահով կզգա:
- Նպատակահարմար չէ երեխային պատմել խաղի նպատակի մասին, թելադրել նրան ինչ անել և ինչ ասել:

Այսպիսով՝ վախը, որպես հոգեբանական երևույթ, ունի իր առաջացման, ձևավորման ու զարգացման տարիքային դինամիկան, և յուրաքանչյուր փուլում նրա առաջացման պատճառները, դրսևորումները կամ արտահայտման ձևերը, բացահայտման ու հաղթահարման ուղիները խիստ տարբեր են:

Տարիքային վախերը, դրսևորվելով համապատասխան տարիքային փուլում և հանդես գալով որպես երեխայի զարգացման բնականոն ընթացք, կրում են ժամանակավոր բնույթ և համապատասխան մոտեցումների արդյունքում, տարիքի հետ հաղթահարվում, անհետանում են:

Մեզանում տարածված են բազմաթիվ խաղեր, որոնց թերապևտիկ /շտկող/ ազդեցության մասին հաճախ տեղեկացված չլինելով՝ այնքան էլ չենք կարևորում: Այնուհանդերձ, դրանք մեծապես նպաստում են մի շարք վախերի հաղթահարմանը: Այդպիսիք են երեխաների կողմից սիրված որոշ շարժախաղերը, որոնք համապատասխան ուղղորդմամբ, բազմաթիվ վախերի կանխարգելման և հաղթահարման միջոց կարող են ծառայել: Այս խաղերի շարքին են դասվում «Պահմտոցի», «Աչքակապուկ», «Թեժ աթոռ», «Արագ պատասխան», «Հակամարտություն» և այլ խաղեր, որոնք բազմաֆունկցիոնալ (գործառական) են և լայն կիրառություն ունեն (տես հավելված 2): Վախերի հաղթահարման հնարավոր տարբերակներ են բոլորիս քաջածանոթ այնպիսի խաղեր, ինչպիսիք են թենիսը, վոլեյբոլը, բադմինտոնը, թռչող ափսեն կամ ուղղակի գնդակի նետումը, որոնք նպատակահարմար է ուղեկցել մրցակցությանը խթանող արտահայտություններով (Захаров А.И., 1995):

Խաղեր՝ ուղղված վախերի հաղթահարմանը

Այս խաղերը վախերի հաղթահարման նպատակով կիրառելու գաղափարը ներկայացրել է Ա. Չախարովը (Захаров А.И., 1995): Ներկայացվող տարբերակները մեր կողմից վերամշակվել և հարմարեցվել են:

▶▶▶ «ԱԶՔԱԿԱՊՈՒԿ»

Խաղի նպատակը. Խաղը նպաստում է մթության, փակ տարծության հանդեպ վախի հաղթահարմանը: Ձևավորում է հետևողականություն, շուտ կողմնորոշվելու կարողություն, խնդրահարույց իրավիճակներում լուծումներ գտնելու, արագ կողմնորոշվելու հմտություն:

Անհրաժեշտ պարագաներ. աթոռներ՝ անկանոն դասավորվածությամբ, կտոր՝ աչքերը փակելու համար: Ցանկալի է սենյակում ստեղծել անսովոր միջավայր (կարելի է խաղալ մթության մեջ):

Ընթացքը. Խաղի սկզբում գլխավոր մասնակցի աչքերը պինդ փակվում են, և նա երեք անգամ պտտվում է իր շուրջը, ինչը դժվարացնում է շրջապատող տարածությունում կողմնորոշվելը: Նա, աչքերը բացելուն պես փորձում է գտնել ու բռնել մյուս խաղընկերներին: Եթե գլխավոր մասնակիցը գնում է ոչ ճիշտ ուղղությամբ, մասնակիցները հատուկ հնարներով նրան հուշում են ճիշտ ուղղությունը: Գլխավոր մասնակիցը՝ «բռնողը», ստեղծում է այնպիսի տպավորություն, որ, ինչ էլ պատահի, բոլորին կգտնի, և նրանք ոչ մի տեղ չեն փախչի իր ձեռքից: Նա հանդես է գալիս «չար կերպարի» դերում: Խաղի բոլոր մասնակիցներից պահանջվում է լռություն պահպանել, նույնիսկ՝ այն դեպքում, երբ բռնողն արդեն մոտենում է իրենց: Այլապես նրանք հեշտությամբ կմատնվեն և խաղից դուրս կգան: Եթե խաղը ձգձգվում է, և խաղացողները դժվարությամբ են գտնվում, նրանք կարող են դիմել այլ միջոցների, օրինակ՝ բռնողի ականջին ձայներ հանել և վերադառնալ իրենց տեղերը: Խաղացողին բռնելուն պես, պետք է անվանել նրան:

Խաղը տևում է 20-30 ր., և սովորաբար մասնակիցներից յուրաքանչյուրը հասցնում է հանդես գալ «բռնողի» դերում:

Հաղթում է նա, ով բոլորից հեշտ է գտնում խաղընկերներին:

Եթե որոնումները երկարաձգվում են, ապա արդեն գտնվածները և խաղից դուրս գտնվողները կարող են հաշվել մինչև 10-ը, որպեսզի ոգևորեն «բռնեղին»՝ ավելի ակտիվ և ճկուն հանդես գալու: Տասը հաշվին նա հանում է աչքակապը և մատնանշում է չգտնվածներին:

▶▶▶ «ՊԱՀՄՏՈՑԻ»

Խաղի նպատակը. Խաղը օգնում է խաղացողներին հաղթահարելու մթության, մենակության, փակ տարածության հանդեպ վախերը, անվճռականությունը:



Անհրաժեշտ պարագաներ. լուսամփոփ:

Խաղի ընթացքը. Խաղը պետք է խաղալ առնվազն 3 հոգով: Անհրաժեշտ է երեխաներին ներգրավել խաղի մեջ՝ հետաքրքրություն ու դժվարություններ հաղթահարելու ցանկություն առաջացնելով:

Խաղը նկերներից մեկը դառնում է փնտրող, մյուսները՝ թաքնվողներ: Նախապես պայմանավորվում են, թե որտեղ չի կարելի թաքնվել: Լույսն անջատվում է, միացված է լինում միայն լուսամփոփը: Նա, ով փնտրում է թաքնվածներին, պետք է գործողությունն ուղեկցի «հիմա կգտնեմ ու կբռնեմ» արտահայտությամբ: Փնտրողը չի կարող լույսը միացնել: Նա պետք է փնտրի շոշափելով: Թաքնվածները որոշ ժամանակ մնում է միայնակ, հուզականորեն լարված, սպասումային իրավիճակում: Նրանք ցուցաբերում են համբերություն և ինքնատիրապետում, ձգտում են ոչնչով չմատնվել՝ չխոսել, չշարժվել: Փնտրողը սենյակում շրջում է, ասելով՝ «այստեղ էլ ոչ ոք չկա», «որտեղ են բոլորը անհետացել»: Կարևոր է, որ թաքնվածները լուռ մնան: Նա ով անհամբերություն ցուցաբերելով բացականչում է՝ «Ես այստեղ եմ», լքում է խաղը:

Խաղը ավարտվում է, երբ փնտրողը գտնում է բոլորին: Խաղը վերսկսելու դեպքում, պետք է թաքնվել նոր տեղում:

▶▶ «ԹԵՃ ԱԹՈՒ»

Խաղի նպատակը. Խաղի նպատակը անսպասելի ազդեցությունների հետ կապված վախի հաղթահարումն է:

Անհրաժեշտ պարագաներ. 2 աթոռ, թմբուկ կամ սուլիչ:

Խաղի ընթացքը. Խաղը նպատակահարմար է խաղալ՝ սկսած 2 տարեկանից: Խաղին մասնակցում են 3-ից ավելի մասնակիցներ, բաժանվում են 3 հոգանոց խմբերի: Սենյակի կենտրոնում դրվում են երկու աթոռներ, որոնց միջև պահպանվում է դժվարանցանելի հատված՝ 1 հոգու համար նախատեսված: Մեկնարկի հրահանգը հնչելուն պես սկսվում է խաղը: Ազդանշանը կարող է լինել թմբուկի հարվածի, խաղալիքատրճանակի պարպման, սուլոցի տեսքով: Խաղացողները, ինչպես մարզական մրցությունների ժամանակ, պետք է լինեն մեկնարկային վիճակում, իսկ ժամանակից շուտ յուրաքանչյուր շարժում համարվում է խախտում. սկզբում նախազգուշացում է արվում, իսկ երկրորդ անգամ կրկնվելու դեպքում խաղացողը որոշ ժամանակով դուրս է գալիս խաղից:

Խաղացողների խնդիրն է աթոռների միջով անցնել, դիպչել պատին և վերադառնալ: Նա, ով առաջինն է դա անում, համարվում է հաղթող:

▶▶ «ԱՐԱԳ ՊԱՏԱՍԽԱՆ»

Խաղի նպատակը. Խաղի նպատակն է հաղթահարել անսպասելի ծագող իրավիճակներում առաջացած վախը, անհանգստությունը: Նպաստում է արագ կենտրոնանալու, կողմնորոշվելու կարողության, ինքնաբուխ (սպոնտան) մտածողության և

ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Խաղի ընթացքը. Խաղային տարածքը նախապես բաժանվում է երկու մասի, որի մի կողմում կանգնում է վարողը, իսկ մյուս կողմում՝ մասնակիցները: Վարողը մասնակիցներից յուրաքանչյուրին հերթով առաջարկում է հարցեր, որոնք իրենց տարիքի համեմատ փոքր-ինչ բարդ են: Մասնակիցները պետք է հարցին պատասխանեն խաղավարի՝ մինչև երեքը հաշվելուն պես: Ժամանակի սահմանափակումը ստեղծում է սթրեսային իրավիճակ, քանի որ երեք հաշվից հետո պատասխաններ չեն ընդունվում: Հարցերը կրում են տարիքին համապատասխան և հումորային բնույթ (օրինակ՝ վեց տարեկանին տրվող հարցերից է. «Որտեղ են ապրում ամենակարճահասակ մարդիկ»): Ճիշտ պատասխանի դեպքում խաղի մասնակիցը մեկ քայլ առաջ է գալիս: Խաղավարը պետք է աննկատ ձևով խաղին այնպիսի ընթացք տա, որ մյուս մասնակիցները շատ հետ չմնան: Վերջինս բարձրացնում է խաղի հանդեպ հետաքրքրությունը, քանի որ ոչ ոք նախապես չի կարող իմանալ՝ ինքը կհաղթի, թե՞ ոչ:

Խաղում պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ յուրաքանչյուր մասնակից որևէ փուլում հանդես գա հաղթողի դերում: Արդյունքում երեխան սկսում է հավատալ սեփական ուժերին և դիմակայել իրական և երևակայական վտանգներին:

▶▶ «ԿՈՒՎ-ԿՈՒՎ»

Խաղի նպատակը. Խաղը օգնում է հաղթահարել ցավի, անսպասելի իրադարձությունների հանդեպ վախերը: Համատեղ խաղի շնորհիվ կարգավորում է ծնող-երեխա հարաբերությունները, նպաստում է հարաբերություններում լարվածության հաղթահարմանը, առողջ փոխհարաբերությունների ձևավորմանը:

Անհրաժեշտ պարագաներ. փոքրիկ, թեթև գնդակներ, փուչիկներ, աթոռներ:

Խաղի ընթացքը. Խաղացողները բաժանվում են երկու հակառակորդ խմբերի՝ ծնողներ և երեխաներ: Հակառակորդ խմբերը միմյանց «հայտարարում են պատերազմ»։ Կողմերը որոշակի հեռավորության վրա դրված աթոռների ետևից իրար վրա են նետում ոչ ծանր, անվտանգ առարկաներ (փոքրիկ, թեթև գնդակներ, փուչիկներ): Ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որը խթանում է մրցակցությանը: Նա, ով նետում է իր ձեռքի տակ եղած բոլոր առարկաները, «կռվի դաշտից» դուրս է գալիս: Խաղն ընթանում է գրոհով և հակամարտությամբ, ավարտվում է համաձայնությամբ, զինադադարով և միմյանց ձեռք սեղմելով:

▶▶ «ՇՐՋԱՆՈՎ ԳՆԴԱԿ»

Խաղի նպատակը. Խաղի նպատակը մանկապարտեզում, նաև կրտսեր դպրոցում հանդիպող տարածված վախերի (արագ պատասխանել, չսխալվել և այլն) հաղթահարումն է: Խաղը նպաստում է նաև ծնող-երեխա հարաբերությունների կարգավորմանը:

Անհրաժեշտ պարագաներ. գնդակներ:

Խաղի ընթացքը. Խաղի ժամանակ մեծահասակներն ու երեխաները գնդակները

նետում են միմյանց վրա: Յուրաքանչյուր երեխա կանգնում է ծնողի դեմ-դիմաց: Նախքան գնդակ նետելը՝ պետք է որսալ մասնակցի հայացքը և, որևէ բառ ասելով, փոխանցել գնդակը (Օրինակ՝ «վերցրու՛», բռնիր»): Նա ո՛վ մոլորվում է, չի կարողանում արագ գտնել բառը, ամեն դեպքում ստանում է գնդակը, քանի որ հայացքների փոխանակումը շարունակվում է: Գնդակի որսումը և դրա արագ փոխանցումը նպաստում են խաղի ակտիվության բարձրացմանը: Խաղը բարդացնելու անհրաժեշտության դեպքում, նախապես ձեռք է բերվում գնդակը նետելուց առաջ որոշակի բառեր ասելու պայմանավորվածություն: Այսինքն, երեխան գնդակը նետելիս պետք է ասի կամ ծաղիկների, կամ կենդանիների, կամ հեքիաթի հերոսների անուններ:

III ➡ «ՀԱՅՏՆՎԵԼ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԱՆՀԵՏԱՆԱԼ»

Այս խաղը բաղկացած է երկու հաջորդական փուլերից:

I փուլ

Փուլի նպատակը. Խաղը օգնում է հաղթահարել խնդրահարույց իրավիճակներում լուծումներ գտնելու, անսպասելի ազդեցությունների հանդեպ վախը:

Փուլի ընթացքը. Մեծերը և երեխաները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում: Նրանցից մեկը մնում է դրսում: Շրջան կազմած մասնակիցները փակում են իրենց աչքերը և հայտարարում. «Ոչ ոք չի կարող մուտք գործել մեր կայսրություն՝ առանց մեր գիտության: Նույնիսկ ամենախելացի ու ճարպիկ աղջիկներն ու տղաները»: Շրջանից դուրս գտնվող մասնակիցը քայլում է շրջանի կողքերով և փորձում ներս մտնել: Բայց պաշտպաններն անմիջապես հակազդում են յուրաքանչյուր կասկածելի աղմուկի, և շրջան սողոսկելը բավական բարդանում է: Եթե երեխային հաջողվում է ներս մտնել շրջան, ապա ընկերները բացում են աչքերը, ծափահարում և շնորհավորում են նրան:

II փուլ

Փուլի նպատակը. Խաղը օգնում է հաղթահարել վախը փակ տարածությունից:

Փուլի ընթացքը. Մեծերը և երեխաները ձեռք ձեռքի բռնած շրջան են կազմում: Նրանցից մեկը մնում է ներսում: Բոլորը նորից փակում են իրենց աչքերը և կրկնում կախարդական խոսքերը. «Ոչ ոք չի կարող դուրս գալ մեր կայսրություն՝ առանց մեր գիտության: Նույնիսկ ամենախելացի ու ճարպիկ աղջիկներն ու տղաները»: Ներսում գտնվողի խնդիրն է դուրս գալ շրջանից: Եթե դա հաջողվում է, ընկերները նրան շնորհավորում են ու ծափահարում:

III ➡ «ՖՈՒՏՐՈԼ»

Խաղի նպատակը. Խաղերը նպաստում են խորության, բարձրության, ցավի, փակ տարածության, անսպասելի ազդեցությունների, պարտվելու հանդեպ վախերի հաղթահարմանը, ինչպես նաև՝ ճկունության, արագ կողմնորոշվելու ունակության զարգացմանը:

Խաղերի ընթացքը. Ֆուտբոլ խաղալու համար նպատակահարմար է, ըստ մաս-

նակիցների ցանկության, բաժանվել երկու խմբի. ծնողներ և երեխաներ: Նախապես դրվում են դարպասներ: Եթե խաղացողների թիվը թույլ է տալիս, կարելի է նշանակել նաև դարպասապահ: Խաղում են ֆուտբոլ դասական կանոններով՝ կիրառելով հումորային արտահայտություններ (օրինակ՝ «քանի ուշ չէ, այն կողմ անցիր» և այլն): Խաղի ընթացքում կարևորվում է ոչ թե հաշվի մեջ առաջ անցնելը, այլ հումորով շփվելը:

III ➡ «ՄՐՋՅՈՒՆՆԵՐ»

Խաղի նպատակը. Խաղը նախատեսված է խորության, հրեշների հանդեպ վախը հաղթահարելու համար:

Անհրաժեշտ պարագաներ. աթոռներ

Խաղի ընթացքը. Մեկ քայլ հեռավորության վրա՝ տարբեր ուղղություններով, օձաձև գծի տեսքով դասավորվում են աթոռներ, որոնց միջև հեռավորությունը աստիճանաբար մեծացվում է խաղի ընթացքը բարդացնելու նպատակով: Աթոռները իբրև ջրից ցցված քարեր են: Ձևավորվում են խմբեր՝ կազմված ծնողներից և երեխաներից: Գլխավոր խնդիրը մյուս ասի անցնելն է: Նա ով «ընկնում է ջուրը», իրավունք ունի վեր կենալ և շարունակել ճանապարհը: Ծնողները և երեխաները կանգնում են աթոռների երկու կողմերում և խաղարկում են մի իրավիճակ, թե որքան բարդ է մյուս ասի անցնելը: Վերջինս ուղեկցվում է՝ «ավելի լավ է հետ գնանք», «բա որ ընկնենք ջուրը» և այլ արտահայտություններով: Առանց ընկնելու «ջուրն անցնելը»՝ համարվում է հաղթանակ: Հաղթող խմբին ծափահարում են:

Այսպիսով, սովորական թվացող և շատ կիրառելի շարժախաղերը նպատակաուղղված կիրառման դեպքում հնարավորություն են ստեղծում երեխաների բազմաթիվ վախերի կանխարգելման և հաղթահարման համար: Ծնողների մասնակցությունն ու ներգրավվածությունը խաղին նպաստում են ծնող-երեխա հուզական կապի ձևավորմանը և հարաբերությունների կարգավորմանը: Խաղերը կիրառելի են նաև մանկապարտեզում:

ԲԱԺԻՆ 9. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՍՈՑԻԱԼ-ՀՈՒՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ալինա Մանուկյան, հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու

Ձեռնարկի այս բաժնում կանդադարենք նախադարձականի վարքի դժվարություններին ու դրանց կարգավորմանը՝ սոցիալ-հուզական խնդիրների համապեքստում:

Սոցիալ-հուզական ոլորտի հետ կապված խնդիրները կարող են արտահայտվել³⁰

- հուզական արտահայտչականության,
- հուզական արտահայտման ոճի,
- հոգեվիճակի և զգացողությունների կարգավորման,
- վարքի կարգավորման,
- ինքնության գիտակցման,
- խաղի զգայականության,
- սոցիալական հարաբերությունների հետ կապված դժվարություններում:

Շատ հաճախ, հուզական խնդիրներ ունեցող երեխայի վարքը կարող է դառնալ խնդրահարույց՝ պայմանավորված նրա վարքի կարգավորման դժվարություններով: Բոլոր այն դեպքերում, երբ մենք արձագանքում ենք երեխայի վարքին, պատկերացում չունենալով այն պատճառների մասին, որոնց հետևանքով ծագել է այդ վարքը, իրավիճակը կարող է ոչ միայն չտրվել, այլև բարդանալ: Ուստի, մի շարք դեպքերում, որոշ վարքագծային դրսևորումների իմացությունը կարող է օգնել մեզ բացահայտելու երեխայի հուզական խնդիրները .

- հաղորդակցման դժվարություններ,
- մեկուսացման ձգտում,
- տխրություն, երբեմն՝ չնչին պատճառներով պոռթկումներ կամ լաց,
- տրամադրության հաճախակի անբացատրելի փոփոխություններ,
- չափազանց անհանգիստ կամ վշտացած վիճակ՝ արտահայտված մանկապարտեզ գնալու, քնելու, իր տարիքին համապատասխան գործունեության մասնակցելու դժկամությամբ և մերժմամբ:

Երբեմն վերը նշված դժվարությունները արտահայտվում են նաև այլ ձևերով.

- հարկադրաբար կրկնվող վարքագծերը կամ գործողությունները՝ ինչպես, օրինակ, ձեռքերն անընդհատ լվանալը կամ ինչ-որ բան կրկին ու կրկին ստուգելը,
- չափազանց ակտիվ լինելը՝ անտեղի վազելը կամ մագլցելը, անընդհատ շարժվելը,

³⁰ Geyh S, Peter C, Müller R, Bickenbach JE, Kostanjsek N, Ustün BT, Stucki G, Cieza A. The Personal Factors of the International Classification of Functioning, Disability and Health in the literature — systematic review and content analysis // Disabil Rehabil. — 2011. — 33 (13—14). — P. 1089—1102. — doi: 10.3109/09638288.2010.523104. — PMID: 20925452.

- կենտրոնացման դժվարությունը,
- գոռալու, բողոքի պողթկումները, անբացատրելի գրգռվածությունը կամ լացը, հաճախակի անհնազանդությունը կամ ագրեսիան (երբեմն՝ ամիսներ տևող) և արտահայտված ընդդիմադիր կեցվածքը հեղինակությունների նկատմամբ:

Անցանկալի վարքի դրսևորումներ. ինչո՞ւ են դրանք տեղի ունենում և ինչպե՞ս արձագանքել

Մանկահասակ երեխաները այս կամ այն բարդ զգացողություններին և խնդիրներին հաճախ արձագանքում են զայրույթի, կամակորության կամ ցուցադրական բնույթ կրող այս կամ այն անցանկալի վարքով: Անցանկալի վարքի հնարավոր դրսևորումները տարաբնույթ և տարատեսակ են լինում:

Նրանք կարող են ունենալ զայրույթի բուռն դրսևորումներ, հիասթափություն և անկանոն վարքագիծ, երբ կորցնում են ինքնատիրապետումը: Դա կարող է դրսևորվել լացով, ճիչով, ոտքերը գետնին խփելով, մարմնով հետ գնալով, ցած ընկնելով, ճոճվելով կամ փախչելով: Որոշ դեպքերում երեխաները պահում են շունչը, փսխում, իրեր ջարդում կամ ագրեսիա և ինքնաագրեսիա դրսևորում:

Վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական հմտություններն այս փուլում դեռ զարգացման ընթացքում են: Երեխաները հաճախ բավարար բառեր չունեն՝ արտահայտելու իրենց ապրումները: Նրանք ավելի շատ ազատություն են ցանկանում, սակայն վախենում են մեծահասակից հեռանալ, սկսում են հասկանալ, որ կարող են փոխել այն ինչ տեղի է ունենում իրենց շուրջը³¹:

Այսպիսով, երեխայի վարքի՝ մեծահասակների համար հաճախ դժվար կառավարելի դրսևորումները, նրա զգացմունքներն ու հույզերն արտահայտելու և կառավարելու միջոցներից են, և նա փորձում է այդ կերպ հասկանալ այն, ինչ կատարվում է իր շուրջը:

Ավելի մեծ տարիքի երեխաները նույնպես կարող են նմանատիպ վարք դրսևորել: Այս խնդիրը ծագում է այն պատճառով, որ նրանք չեն սովորել հասկանալ և կառավարել իրենց հույզերը կամ կարող են ունենալ ինքնակառավարման զարգացման ավելի դանդաղ ընթացք:

Թե՛ նախադպրոցական, թե՛ ավելի մեծ տարիքի երեխաների համար կարող են լինել բացասական վարքի դրսևորումներ հրահրող իրավիճակներ կամ գործոններ, որոնցից մի քանիսին կանդրադառնանք ստորև.

- Խառնվածքը. սրանով է պայմանավորվում, թե ինչ արագությամբ և ուժգնությամբ են երեխաներն արձագանքում իրենց հիասթափեցնող իրադարձություններին: Հեշտությամբ հիասթափվող երեխաների զայրույթի պողթկումները ավելի հավանական են:

³¹ Փոփոխություններն իրականացնում են ընտանիքները (ծնողավարման ուղեցույց), Երևան 2019թ., 90 էջ

● Սթրեսը, քաղցը, հոգնածությունը և գրգռվածությունը կարող են խոչընդոտել երեխաներին արտահայտելու և կառավարելու հույզերը և վարքը:

● Իրավիճակներ, որոնք երեխաները պարզապես ունակ չեն կառավարել/վերահսկել: Օրինակ՝ երեխան կարող է տագնապել, եթե ավելի մեծ երեխան վերցնի իր խաղալիքը:

● Բացասական հույզեր. անհանգստությունը, վախը, ամոթը և զայրույթը կարող են ճնշող լինել երեխաների համար:

Մեծահասակներն իրենց խոսքով և երեխայի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքով ևս հաճախ հրահրում են երեխայի հուզական պոռթկումները, դիմադրությունն ու բացասական վարքը:

Այս առումով կարևոր է հնարավորինս զերծ մնալ բացասական շեշտադրումներ պարունակող արտահայտություններից՝ փոխարինելով դրանք այլ, առավել արդյունավետ և դրական ուղղորդումներ պարունակող արտահայտություններով (այս մասին առավել մանրամասն տե՛ս ձեռնարկի «Անցանկալի վարքագծի կիրառումը նախադպրոցական հաստատություններում» բաժնում):

Այլընտրանքային արտահայտություններ, որոնք կարող են առավել արդյունավետ լինել.

➡ Մի վարիդ հեծանիվդ այդքան արագ ⇒ Խնդրում եմ՝ դանդաղեցրո՛ւ հեծանիվիդ ընթացքը

➡ Մի նետիր տիկնիկդ ⇒ Խնդրում եմ՝ խաղալիքներդ հանգիստ դիր հատակին

➡ Ինձ հետ այդպես չխոսեն ⇒ Խնդրում եմ հանգիստ խոսիր

➡ Գնդակով մի՛ խաղա սենյակում ⇒ Խնդրում եմ գնդակով միայն դրսում խաղա

➡ Դուռը մի՛ շրխկացրո՛ւ ⇒ Խնդրում եմ՝ դուռն անաղմուկ փակիր

➡ Դադարեցրո՛ւ այդ հիստերիան ⇒ Ես լսում եմ քեզ, ասա՛, թե ի՞նչ է պատահել

➡ Մի՛ ընդհատիր ինձ ⇒ Խնդրում եմ՝ սպասի՛ր մինչև ավարտեմ խոսքս

➡ **Արդյունավետ կարող է լինել նաև համապատասխան նկարների կիրառումը, որոնք հարկապես օգտակար կարող են լինել այն երեխաների համար, ովքեր լրացուցիչ աջակցության կարիք ունեն իրեն ուղղված խոսքն ընկալելու հարցում:**

Ստորև ներկայացված են մի քանի այդպիսի նկարների նմուշ-օրինակներ:


Մի վազիր



Խնդրում եմ քայլիր:



Մի բղավիր



Մի նեցրիր




Մի հրիր




Մի ցատկիր



Խնդրում եմ խոսիր ցածրաձայն:



Իրերդ հանգիստ դիր հատակին:



Խնդրում եմ նուրբ վարվիր:



Խնդրում եմ դանդաղ իջիր:



Նկար 1. Արգելող և դրական ուղղորդում պարունակող արտահայտություններ³²

Երեխայի վարքի կարգավորման արդյունավետ ուղիները և մոտեցումներ

Երեխաների անցանկալի կամ բացասական վարքի կարգավորման արդյունավետ ուղիները մշակման համար առաջնային կարևորություն ունի այն բացասական գործոնների ազդեցությունը, որոնք կարող են սրել երեխայի բացասական վարքը:

- ▶▶ Նվազեցնել սթրեսաձին գործոնները. հոգնած, քաղցած և գրգռված երեխաներն ավելի են հակված բացասական վարքի դրսևորումների:
- ▶▶ Կարգավորել երեխաների զգացմունքները: Եթե տեղյակ եք, թե տվյալ պահին ի՞նչ հույզեր ու զգացմունքներ է ապրում երեխան, ապա կկարողանաք կանխազգալ, թե երբ

³²Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

են հնարավոր բռնկումները: Կարող եք խոսել այն մասին, թե ի՞նչ է կատարվում, օգնել երեխային հաղթահարել տագնապը: Կարևոր է նաև կարողանալ շեղել երեխային:

➡ **Ճանաչել տագնապի նշանները:** Օրինակ՝ երեխան տագնապում է, երբ գնում եք դահլիճ, կամ երբ մայրն ուշանում է: Դուք կարող եք կանխատեսել դա և նախապես փոխել միջավայրը կամ համապատասխան բացատրություն տալ՝ խուսափելու համար երեխայի խնդրահարույց վարքից: Նույնիսկ այն դեպքերում, երբ երեխան դեռևս չի կարող հաղորդակցվել խոսքային միջոցներով, նա, միևնույն է, կարող է հասկանալ իրեն ուղղված ձեր խոսքն ու համապատասխան մեկնաբանությունները:

➡ **Կարևոր է երեխայի հետ խոսել իր ապրումների մասին:** Երբ երեխան անհանգստանում է որևէ բանից, խոսե՛ք նրա հետ, քաջալերե՛ք նրան խոսել իր անհանգստության մասին և նշել պատճառը: Օրինակ. «Դու նետեցիր խաղալիքդ, որովհետև բարկացար, որ այն չի աշխատում: Այլ կերպ ինչպե՞ս կարող էիր վարվել»: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան չի կիրառում խոսքային հաղորդակցման միջոցներ, մեկնաբանե՛ք իրավիճակի՝ ձեր ընկալումը, օգնելով երեխային զգալ, որ դուք հասկանում եք իր հույզերն ու ընդունում դրանք:

Երեխաների անցանկալի կամ բացասական վարքի կարգավորման արդյունավետ ռազմավարությունների շարքում մեծ նշանակություն ունեն նաև հանգստացնող վարժություններն ու խաղերը, որոնք օգնում են երեխաներին խաղաղվել և վերագտնել հուզական հավասարակշռությունը, ինչի շնորհիվ, բնականաբար, նաև կարգավորել սեփական վարքը³³: Ստորև ներկայացվող մի քանի վարժություններն ընդամենը օրինակներ են, սակայն դրանք կիրառելիս անհրաժեշտ է ընտրել ճիշտ պահը՝ հնարավոր բացասական ամրակայումներից խուսափելու համար: Օրինակ՝ առաջարկել երեխային հանգստանալ՝ իր համար ցանկալի խաղը խաղալու նպատակով:

Հանգստացնող հպումներ. Շատ երեխաներ հավում են տարբեր առարկաների, որպեսզի հանգստանան: Զայրույթի պողոթման, տագնապների, անհանգստության ժամանակ հանգստացնող հպումները շատ արդյունավետ կարող են լինել: Այս առումով կարելի է օգտագործել հատուկ լցանյութով հակասթրեսային բարձեր, կտորներից լաթիկներ, ձավարեղենով լցված մեծ թաս, որի մեջ կարելի է մտցնել ձեռքերը, զգայական խաղալիքներ, փափուկ խաղալիքներ-կենդանիներ կամ նույնիսկ իսկական կենդանիներ, որոնց կարելի է շոյել:

Մարմնամարզական գնդակ. Ֆիթնեսի համար նախատեսված գնդակը ևս կարելի է օգտագործել խոր ճնշում ապահովելու և ավելորդ բացասական էներգիան պարպելու նպատակով: Փորձե՛ք գնդակը գլորել երեխայի մարմնի վրայով, միայն ուշադիր հետևե՛ք, որ դա չճնշի երեխային և չընկալվի երեխայի կողմից որպես զայրույթի կամ ագրեսիայի դրսևորում: Խուսափե՛ք դա անել այն պահին, երբ երեխան բուռն հույզեր է արտա-

³³ Сара Ньюмен: Игры и занятия с особым ребенком. Руководство для родителей. Издательство: Теревинф, 2018 г., ISBN: 5-901599-22-5, 236 стр.

հայտում: Նման դեպքերում երեխան դա կարող է ընկալել որպես ոչ թե խաղ, այլ՝ պատիժ:

Շնչառության կարգավորում. Շնչառության կարգավորումը կարևոր նշանակություն ունի երեխայի հուզական և վարքային կարգավորման հարցում: Փորձեք գտնել խաղի շրջանակներում խորը շնչելու որևէ եղանակ, որը հնարավոր է սովորեցնել երեխային (այդ նպատակով կարող եք օգտագործել նաև երեխաների համար նախատեսված նկարներ): Իսկ եթե երեխայի համար դժվար է հասկանալ, թե ինչպես խորը շնչել-արտաշնչել, ապա նա կարող է փչել օճառե պղպաջակներ, տեղաշարժել բամբակե գնդիկներ՝ փչելով դրանց վրա խմելու ձողիկից, կամ ուրիշ խաղ խաղալ, որը խորը ներշնչում և երկարատև արտաշնչում է պահանջում:

Հենահարթակ-ճոճանակներ. Շատ երեխաների դուր են գալիս ճոճանակները, որոնց վրա հնարավոր է պառկել փորի վրա և կախել գլուխը, ինչը ապահովում է ընդհանրապես այլ զգայական խթանում, քան՝ ճոճանակի վրա ուղղակի նստելը: Առհասարակ՝ ցանկացած ճոճում կարող է հանգստացնող լինել, օրինակ՝ ճոճվելը ճոճաթռոխի վրա, իսկ ահա ճոճանակով պտտվելը, ընդհակառակը, կարող է ակտիվացնել: Եթե հենահարթակ-ճոճանակ չկա, ապա երկու մեծահասակ կարող են պահել մեծ ծածկոց հակառակ ծայրերից և օրորել երեխային:

Առաջարկություններ ընտանիքի հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողներն ու ընտանիքի անդամները հաճախ նշում են, որ երեխաները բացասական վարք կարող են դրսևորել՝ անկախ նրանից, թե իրենք ինչ են ձեռնարկել այն կանխելու համար: Նման դեպքում առաջարկեք նրանց հետևյալ մոտեցումները.

- Աշխատեք հանգստություն պահպանել: Մի պահ կենտրոնացեք, եթե դրա կարիքն ունեք: Զայրույթի պոռթկումներն ավելի կբարդացնեն իրավիճակը թե՛ ձեր, թե՛ երեխայի համար: Եթե, այնուամենայնիվ պետք է խոսեք, ապա ձայնը մի՛ բարձրացրեք և գործեք հանգիստ և հավասարակշռված:

- Փորձեք հասկանալ երեխայի ապրումներն ու զգացողությունները: Օրինակ. «Ես հասկանում եմ. շատ տխրեցնող է, երբ քո կառուցած բուրգը քանդվում է, այնպես չէ»: Դա կօգնի երեխային մի պահ կանգ առնել, կանխել վարքի բացասական դրսևորումը և կառավարել հույզերը:

- Սպասեք՝ մինչև երեխան դադարեցնի հուզական պոռթկումը: Եղեք նրա կողքին, որպեսզի տեսնի, որ դուք իր կողքին եք: Սակայն մի՛ փորձեք քննարկել իր հետ կամ շեղել: Դա ուշացած է, եթե պոռթկումն արդեն սկսվել է:

- Միջամտեք, երբ զգում եք, որ դրա կարիքը կա: Եթե երեխան չի ցանկանում ինչ-որ բան անել, ապա արեք այն, ինչ նախատեսել էիք: Օրինակ. եթե երեխան չի ցանկանում իջնել ճոճանակից, ապա նախ կանգնեցրեք այն, այնուհետև գրկեք երեխային, իջեցրեք և ներս տարեք:

- Ձեր մոտեցումների մեջ հետևողական և հանգիստ եղեք: Եթե վարքի բացասական

դրսևորումներից մեկի ընթացքում երեխային տաք այն, ինչ ուզում է, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ, ապա դրանով ավելի կարեք իրավիճակը:

Կարևոր է հետևել, որ պատահաբար չխրախուսեք երեխայի անցանկալի վարքը: Օրինակ՝ եթե երեխան հիստերիա է սարքում այն պատճառով, որ իրեն չեն տալիս իր ցանկացած խաղալիքը, և դուք, այդ իրավիճակը շտկելու նպատակով, տալիս եք նրան ուզած խաղալիքը, ապա այդպիսով խրախուսում եք հետագա հիստերիաները: Բղավելը կամ համոզելն այն ժամանակ երբ նա բացասական վարք է դրսևորում, նույնպես խրախուսել է, քանզի այդպիսով նա ուշադրության է արժանանում:

Անցանկալի վարքի դրսևորումների հաղթահարումը

Երեխայի բացասական վարքին առնչվելը կարող է բավական հյուծող և սթրեսային լինել: Մենք կարող ենք մտածել, որ ավելի լավ է զիջել՝ բացասական վարքին վերջ տալու համար: Սակայն երբ ապահով է, օգտակար կլինի շունչ քաշել և որոշել, թե ինչպես արձագանքել: Ստորև ներկայացված են երեխայի վարքի կարգավորման մի քանի եղանակներ, որոնք, հուսով ենք, կօգնեն ձեզ հանդարտ մնալ և իրավիճակը կառավարելի դարձնել:

➡ Մշակեք բացասական վարքի հաղթահարման ձեր ռազմավարությունը: Հստակ պլանավորեք/մտածեք, թե ինչպես կարձագանքեք տարբեր իրավիճակներում վարքի անցանկալի դրսևորումներին: Կենտրոնացեք ձեր պլանն իրագործելու վրա, երբ երեխան բացասական վարք է դրսևորում:

➡ Ընդունեք, որ չեք կարող անմիջականորեն վերահսկել երեխայի հույզերը և վարքը: Դուք միայն կարող եք ապահովել երեխայի անվտանգությունն ու ուղղորդել վարքը, որպեսզի բացասական վարքի դրսևորումները հնարավորինս բացառվեն ապագայում:

➡ Ընդունեք, որ փոփոխության համար ժամանակ է անհրաժեշտ: Երեխան դեռ պետք է զարգանա՝ վարքի անցանկալի դրսևորումները լիարժեք հաղթահարելու համար:

➡ Պահպանեք հումորի զգացումը: Բայց մի՛ ծիծաղեք երեխայի անցանկալի վարքի վրա, քանզի դրանով կխրախուսեք երեխային ձեր ուշադրությամբ: Ձեր ծիծաղը կարող է ավելի հիասթափեցնել նրան:

➡ Հետևողական եղեք ձեր պահանջներում, բայց միաժամանակ որևէ բացասական հույզ մի՛ դրսևորեք և վերահսկեք նաև ձեր խոսքային (օգտագործած բառերը չպետք է պարունակեն սպառնալիք, ամոթանք և այլն) և ոչ խոսքային դրսևորումները (դիմախաղ, ժեստեր): Երբ երեխայի վարքագիծն անընդունելի է, կարող եք ընտրել՝ արձագանքել, թե՛ անտեսել այն: Եթե որոշում եք, որ արձագանքն անհրաժեշտ է, ապա հիշեք, որ լավագույնը նվազագույն արձագանքն է:

Սոցիալ-հուզական խնդիրների դեպքում երեխայի համար կարևոր նշանակություն ունի հոգեբանական և մանկավարժական աջակցությունը: Այդ աջակցությունը կարող է արդյունավետ լինել այն դեպքում, երբ մենք ոչ միայն կարողանում ենք ճանաչել երեխայի հուզական խնդիրներն ու դրանց վարքային դրսևորումները, այլև հասկանում ենք դրանց հիմքում ընկած պատճառներն ու շարժառիթները:

ԲԱԺԻՆ 10. ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՆ

Մարինա Հովհաննիսյան, հատուկ մանկավարժ

Այս բաժնում ներկայացված են հակիրճ տեղեկություններ **հենաշարժողական խնդիրների** մասին և գործնական խորհուրդներ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցին նախապատրաստելու վերաբերյալ:

Հենաշարժողական խանգարումներ են համարվում հենաշարժողական ապարատի հետևյալ խանգարումներով պայմանավորված բնածին կամ կյանքի ընթացքում ձեռքբերված հիվանդությունները՝

- նյարդային համակարգի խանգարումները (մանկական ուղեղային կաթված, պոլիոմիելիտ, վնասվածքներ),
- բնածին խանգարումները (վերջույթների կամ ողնաշարի խնդիրներ),
- ձեռքբերված խանգարումները (գլխի կամ ողնուղեղի վնասվածքներ)³⁴:

Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների 89%-ը մանկական ուղեղային կաթված ունի: Վերջինիս հիմնական պատճառը գլխուղեղի առանձին հատվածների ախտահարումն է³⁵:

Հենաշարժողական դժվարություններ ունեցող երեխաները հաճախ կարող են դժվարանալ.

- տեղաշարժվելիս
- տարբեր չափերի առարկաներ բռնելիս,
- տարբեր չափերի առարկաները փոխանցելիս/նետելիս,
- նուրբ շարժողականության հետ կապված գործողություններ կատարելիս (գրել, նկարել, մանր առարկաներով խաղալ և այլն),
- շոշափելով առարկաները ճանաչելիս,
- աչքերի և ձեռքերի կոորդինացիա պահանջող աշխատանք կատարելիս,
- խոսելիս,
- տարածության մեջ կողմնորոշվելիս,
- հաղորդակցվելիս:

³⁴ Хрестоматия 6.1. Печатается по изданию: Специальная дошкольная педагогика // Под ред. Е.А. Стребелевой. М., 2002, О.Г. Приходько, Воспитание и Обучение Детей Раннего и Дошкольного Возраста с Нарушениями Опорно-Двигательного Аппарата, //Стр 183–204

³⁵ Людмила Шипицына, Ирина Мамайчук, ДЕТСКИЙ ЦЕРЕБРАЛЬНЫЙ ПАРАЛИЧ, Лицензия Код 221 Серия ИД № 03873 от 30 января 2001 г., Издательство «Дидактика Плюс», Москва Институт общегуманитарных исследований

Երեխային դպրոցին նախապատրաստելու ոլորտները³⁶

Հայաստանում նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործառույթներից է երեխաներին դպրոցին պատրաստելը: Այս առումով շատ կարևոր է երեխաների հետ, այդ թվում՝ տեղաշարժման դժվարություններ ունեցող, իրականացնել բազմակողմանի միջոցառումներ՝ ուղղված նրանց ֆիզիկական, մտավոր, անձնային ու սոցիալ-հոգեբանական և հուզականային ոլորտների զարգացմանը: Պետք է հաշվի առնել այն դժվարությունները, որոնց բխվում են երեխաները, և, հենվելով նրանց ուժեղ կողմերի վրա, հետևողական աշխատանք ծավալել՝ այդ դժվարությունները հաղթահարելու և երեխային դպրոցին նախապատրաստելու նպատակով:

➡ **Ֆիզիկական ոլորտ**

Բնութագրում է երեխայի գործառական (ֆունկցիոնալ) հնարավորությունները, ընդհանուր ֆիզիկական զարգացումը և առողջությունը:

➡ **Մտավոր ոլորտ**

Ենթադրում է ճանաչողական գործընթացների զարգացման անհրաժեշտ մակարդակ (ընկալում, մտածողություն, խոսք, հիշողություն, ուշադրություն, երևակայություն):

➡ **Անձնային և սոցիալ-հոգեբանական ոլորտ**

Անձնային զարգացումը ներառում է երեխայի սոցիալական դերեր ստանձնելու ունակությունը (օրինակ՝ լինելու դպրոցական, ունենալու նոր իրավունքների և պարտականությունների շրջանակ): Սոցիալ-հոգեբանական առումով դպրոցին պատրաստ լինելը ենթադրում է հասակակիցների և մեծահասակների հետ սոցիալական կապերի ձևավորման, հաղորդակցման կարողությունների զարգացման բավարար մակարդակ:

➡ **Հուզականային ոլորտ**

Ներառում է հույզերի ճանաչման, կառավարման, արտահայտման կարողությունների ձևավորումը, նպատակներ նախանշելու, որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու, դժվարություններ հաղթահարելու կարողությունները:

Վերոնշյալ բոլոր ոլորտներում էլ տեղաշարժման դժվարություններ ունեցող երեխաները կարող են այս կամ այն չափով դժվարությունների հանդիպել, ուստի, չափազանց կարևոր է նախադպրոցական ուսումնական հաստատությունում բոլոր ուղղություններով հետևողական աշխատանքների կազմակերպումը:

³⁶ Образовательная программа дошкольного образования «Развитие» /Под ред. Булычевой А.И.– М: ЧУ ДПО «УЦ им. Л.А. Венгера «РАЗВИТИЕ», 2016 г. 220 с. Рецензия № 125 от 31.05.2016 г. ФГАУ «ФИРО»

Ստորև ներկայացվում են վարժություններ, որոնք կնպաստեն երեխայի համապատասխան հմտությունների ու կարողությունների զարգացմանը՝ օգնելով դպրոցին նրա արդյունավետ նախապատրաստմանը:

➡ Ֆիզիկական ոլորտի զարգացմանը նպաստող խաղեր և վարժություններ (մանր շարժողականության զարգացում)


Ֆիզիկական զարգացման ցուցիչներն են երեխայի շարժողական հմտությունների զարգացածության մակարդակը, ֆիզիկական ակտիվությունը, կեցվածքը, ընդհանուր և մանր մոտորիկայի զարգացածությունը:

➡ Ձեռքերի մկանները զարգացնելու համար օգտակար են հետևյալ վարժություններն ու խաղերը.

- պլաստիլինով, խմորով, կավով ծեփելը,
- մատներով նկարչությունը (ալյուրի վրա, ջրաներկով և այլն),
- խճանկարի պատրաստումը,
- փոքր մասերով «կոնստրուկտոր»-ի հավաքումը (3 տարեկանից փոքր երեխաների հետ անհրաժեշտ է խստագույնս պահպանել անվտանգության կանոնները),
- թելերի, կոճակների, պարանների կապումն ու արձակումը,
- մկրատով կտրատելը:

➡ Գծանկարչական (գրաֆիկական) վարժություններ.


Այս վարժությունների շարքը զարգացնում է ձեռքի մկանները, շարժողական ունակությունները, օգնում է գրելու ժամանակ ամրակայել (ֆիքսել) մատների ճիշտ դիրքը: Այս նպատակով կարող եք կիրառել երեխային առաջարկվող այսպիսի խաղեր և վարժություններ. միացնել կետերը, ներկել պատկերը, ընդգծել համապատասխան պատկերը և այլն: Ստորև ներկայացված են մի քանի նկար-նմուշներ, (տես նկար 1):



Նկար 1. Գծանկարչական հմտությունները զարգացնող առաջադրանքների նմուշներ

➡ **Ձեռքի և աչքի կոորդինացիա.**

Այս վարժությունները կօգնեն երեխային զարգացնել ուշադրությունը և ձեռքի ու աչքի կոորդինացիան (տեսաշարժողական կոորդինացիան): Այս նպատակով կարող եք օգտագործել լաբիրինթոսները, երկու ձեռքով միաժամանակյա նկարչությունը և այլն (տես նկար 2):




Նկար 2. Ձեռքի և աչքի կոորդինացիան զարգացնող առաջադրանքների նմուշներ

➡ **Ձեռքերի ու մատների մերսում**


Հաշվի առնելով երեխաների ձեռքերի մկանների լարվածությունը, կարևոր է պարբերաբար ուշադրություն հատկացնել մկանային լարվածության կարգավորմանը: Երեխայի ձեռքի մկանները և մատները կարող են արագ հոգնել և լարվել նկարելիս, ուտելիս, գրելիս կամ որևէ բան պատրաստելիս: Նման դեպքերում արդյունավետ կարող է լինել մատների և ձեռքերի փերի մերսումը՝ մկանների լարվածությունը թուլացնելու նպատակով: Մերսումը կարելի է կատարել մատիտով, գնդակով կամ կարող եք օգտագործել խմոր, պլաստիլին, կավ և այլն: Ստորև ներկայացնում ենք ձեռքերի և մատների մերսման տարբերակները արտացոլող նկարներ, (տես նկար 3):



Երեխայի ձեռքը դրված է սեղանին, մատները շարժում ենք աջ-ձախ



Մերսում փոքրիկ գնդակով



Մերսում մատիտով

Նկար 3. Ձեռքերի և մատների մերսման և վարժությունների օրինակներ

➡ Մտավոր ոլորտի զարգացում

Մտավոր զարգացման ցուցիչներն են երեխայի իմացական ոլորտի (հիշողություն, ուշադրություն և այլ) մակարդակը, երեխայի կենտրոնանալու կարողությունները, նոր գիտելիքների ընկալման և հմտությունների ձեռքբերման կարողությունների մակարդակը:

Ուշադրության զարգացում

➡ **Նպատակը.** վարժությունները միտված են բարելավելու երեխայի կենտրոնանալու կարողությունը, ուշադրությունը, զարգացնելու վերլուծական հմտությունները:

Խաղի ընթացքը. երեխային տալիս են որևէ սյուժետային նկար և առաջարկում են գտնել՝

- պատկերված նկարում այս կամ այն առարկան (տե՛ս նկար 4),
- երկու նույնական (միատեսակ) առարկաները (տե՛ս նկար 6),
- երեք տարբերություն (տե՛ս նկար 5) և այլն:




Նկար 4



Նկար 5

Ուշադրությունը կենտրոնացնելու ունակությունը զարգացնող վարժություններ:



Նկար 6

➡ Հիշողության զարգացում

Տարբերում են հիշողության հետևյալ տեսակները. տեսողական, լսողական, շոշափողական, համային, հոտառական³⁷: Երեխայի զարգացման աշխատանքներն առավել

³⁷ <https://sch1561uz.mskobr.ru/files/games-pre-school.pdf>

արդյունավետ կլինեն, եթե դրանք միտված լինեն հիշողության բոլոր տեսակների զարգացմանը: Այս նպատակով կարող ենք կիրառել այնպիսի պարզ խաղեր, ինչպիսիք են հիշողությամբ նկարչությունը, առօրյա զբոսանքի կամ առօրյա գործողությունների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների շղթան խաղային իրավիճակում հիշողությամբ վերարտադրելը, տեքստի պատմումը կամ վերապատմումը:

Ստորև ներկայացված են հիշողության զարգացմանը նպատող խաղեր, որոնք կարող են կիրառվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների ընթացքում:

▶▶ «ՏԱՍԸ ՆԿԱՐ»

Նպատակը. Երեխայի կարճաժամկետ և երկարաժամկետ հիշողության զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ. Նկարներ

Խաղի ընթացքը. Երեխայի առջև տեղադրվում է իրեն լավ ծանոթ 10-15 նկար և առաջարկվում 2-3 թույլ դիտել, մտապահել: Այնուհետև դրանք հավաքվում են:

Տասը թույլ անց երեխան պետք է թվարկի նկարները:

5-6 տարեկան երեխան պետք է կարողա թվարկել 6-7 նկար:

Կարելի է մեկ ժամ հետո նորից խնդրել, որ նա թվարկի առարկաները:

▶▶ «ԻՆՉ Է ՓՈԽՎԵԼ»

Նպատակը. Երեխայի կարճաժամկետ հիշողության զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ. Խաղալիքներ կամ դրանց նկարները:

Խաղի ընթացքը. Երեխայի առջև դրվում է 5-8 խաղալիք կամ դրանց նկարները: Երեխան պետք է դրանք մտապահի: Այնուհետև առաջարկվում է, որ նա շրջվի կամ փակի աչքերը:

Այդ ընթացքում 1-2 խաղալիք կամ տեղափոխվում է, կամ էլ շարքից հանվում: Երեխան պետք է հետ շրջվի ու ասի, թե ինչ է փոխվել:

Սեփական անձի և շրջապատող աշխարհի վերաբերյալ պատկերացումների ձևավորում

Գաղտնիք չէ, որ երեխայի մտավոր զարգացման ցուցիչներից մեկը սեփական անձի և շրջապատող աշխարհի մասին համակարգված գիտելիքների և պատկերացումների առկայությունն է: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ անհրաժեշտ է երեխայի հետ պարբերաբար կազմակերպել զրույցներ, քննարկումներ, որոնք միտված են իր և շրջապատող աշխարհի մասին պատկերացումների և գիտելիքների ընդարձակմանը: Քննարկման կամ զրույցի համար հարցերն ընտրելիս նպատակահարմար է հաշվի առնել երեխայի անհատական և տարիքային առանձնահատկությունները:

Նախադպրոցական տարիքի երեխայի հետ զրույցի հարցերի օրինակները (տես շրջանակ 1):

Շրջանակ 1. Նախադպրոցական տարիքի երեխայի հետ զրույցի հարցեր

1. Նշիր քո անունը, ազգանունը, հայրանունը:
2. Նշիր մայրիկի և հայրիկի անունը, ազգանունը, հայրանունը:
3. Քանի՞ տարեկան ես: Ե՞րբ ես ծնվել:
4. Ո՞ր քաղաքում/գյուղում ես ապրում, ասա հասցեդ:
5. Որտե՞ղ են աշխատում քո ծնողները:
6. Դու ունե՞ս քույր կամ եղբայր:
7. Դու ունե՞ս ընկերներ: Ի՞նչ են նրանց անունները:
8. Ի՞նչ խաղեր եք խաղում ընկերներով ամռանը և ձմռանը:
9. Նշիր շաբաթվա օրերը, տարվա եղանակները:
10. Տարվա ի՞նչ եղանակ է հիմա:
11. Ինչո՞վ է տարբերվում ամառը ձմեռվանից:
12. Տարվա ո՞ր եղանակին է ծառերի վրա տերևներ աճում:
13. Ի՞նչ է մեր մոլորակի անվանումը:
14. Ընտանի ի՞նչ կենդանիներ գիտես:
15. Ինչո՞վ են տարբերվում ընտանի կենդանիները վայրի կենդանիներից:
16. Ի՞նչ ենք անվանում շան, կատվի, ձիու ձագերը:
17. Ինչո՞վ է տարբերվում քաղաքը գյուղից:
18. Ի՞նչ մասնագիտություններ գիտես:
19. Ի՞նչ են անում բժիշկը, վաճառողը, ուսուցիչը:
20. Ի՞նչ ես ուզում դառնալ:

➡ Անձնային և սոցիալ-հոգեբանական ոլորտի զարգացում

Անձնային և սոցիալ-հոգեբանական ոլորտի զարգացումը ներառում է երեխայի հարաբերությունները մեծահասակների, հասակակիցների հետ և վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ: Այն պահանջում է դրդապատճառային ոլորտի զարգացման որոշակի մակարդակ³⁸:

Դպրոցին երեխայի սոցիալ-հոգեբանական նախապատրաստումը հնարավոր է իրականացնել այնպիսի խաղերի և վարժությունների միջոցով, որոնք նպաստում են երեխայի հաղորդակցման հմտությունների զարգացմանը, հաղորդակցման շրջանակի ընդարձակմանը, ապրումակցման կարողության զարգացմանը:

³⁸ А.М. Щетинина - ДИАГНОСТИКА СОЦИАЛЬНОГО РАЗВИТИЯ РЕБЕНКА, Учебно-методическое пособие Великий Новгород 2000

Ստորև ներկայացված են շփման հմտությունների զարգացմանը նպաստող խաղերը:

▶▶ **«Որտե՞ղ ենք եղել՝ չենք ասի, ինչ ենք արել՝ ցույց կպանք»**

Նպատակը. Հաղորդակցման հմտությունների զարգացում

Խաղի ընթացքը. Երեխաներից մեկը դուրս է գալիս սենյակից, մյուսները պայմանավորվում են կատարել մեկ գործողություն միասին (հավաքում են սունկ, դնում զամբյուղի մեջ կամ ուտում են պաղպաղակ և այլն):

Սենյակից դուրս եկած երեխան՝ խումբ վերադառնալով պետք է դիտարկի և անվանի մյուս երեխաների կատարած գործողությունը:

▶▶ **«Գուշակիր պատկերը»**

Նպատակը. Հաղորդակցման հմտությունների ձևավորում, շփվելու հոգեբանական դժվարության հաղթահարում:

Խաղի ընթացքը. Երեխաները կանգնում են զույգերով: Մի երեխան մյուսի մեջքին մատով մի պատկեր է նկարում (օրինակ, գնդակ, տուն, օձ և այլն): Վերջինս պետք է ձեռքերով բացատրի մյուս երեխաներին, թե ինչ պատկեր է նա կռահել: Հաղթում է այն զույգը, որը կարողանում է առավել հստակ բացատրել պատկերը:

▶▶ **Հուզականային ոլորտի զարգացում**

Երեխայի հուզականային ոլորտի զարգացման ցուցիչներն են իրավիճակին համապատասխան հույզերի ներապրումը, հույզերի կառավարումը, դրանք սոցիալապես ընդունելի տարբերակով արտահայտելու կարողությունը, կանոնների ընդունման և դրանց հետևելու կարողությունը, նոր միջավայրում անվստահության և այլ դժվարությունների հաղթահարումը, նպատակի սահմանումը, որոշումներ կայացնելը, խնդիրների լուծումը³⁹:

Տեղաշարժման դժվարություններ ունեցող երեխաները իրենց ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունների պատճառով կարող են ունենալ մի շարք հոգեբանական բարդույթներ, որոնք կարող են խոչընդոտել նրանց հուզականային պատրաստությանը դպրոցին: Ուստի, նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժների կողմից հուզականային ոլորտի զարգացմանը միտված աշխատանքների արդյունավետ կազմակերպումը էական նշանակություն ունի տեղաշարժման դժվարություններ ունեցող երեխայի ինչպես դպրոցի ուսուցմանը պատրաստ լինելու, այնպես էլ ներդաշնակ զարգացման համար:

Այնպիսի վարժությունների կիրառումը, ինչպիսիք են «Գուշակիր հույզը»,

³⁹ <https://39frspb.caduk.ru/p123aa1.html>

«Նկարում ենք հույզեր», «Հայելի», «Ո՛վ կպատմի լավ բաներ իր մասին», նպաստում է երեխայի կողմից սեփական և այլոց հույզերի և դրանց արտաքին դրսևորումների ճանաչմանը, սեփական հույզերի կառավարմանն ու ընդունելի եղանակներով դրանք արտահայտելու կարողության զարգացմանը:

Ստորև ներկայացված են հույզերի հետ ծանոթացնող և հույզերի ընկալմանը նպաստող խաղերը⁴⁰:

II ➡ «Նկարում ենք հույզեր»

Նպատակը. Հասկանալ օրվա հույզերը, քննարկել հույզի պատճառը և հնարավոր փոփոխությունը:

Խաղի ընթացքը. Երեխաներին առաջարկվում է նկարել «Իմ տրամադրությունը հիմա» թեմայով: Ամեն երեխա նկարում է մեկ զգացողություն, հետո միասին քննարկում են, թե ինչ կարող են անել, կամ ինչ կարող է լինել, որ իրենց նկարած հույզը փոխվի հակառակ հույզի:

II ➡ «Հայելի»

Նպատակը. Արտահայտել և հասկանալ հույզերը, հաղթահարել ամաչկոտությունը:

Խաղի ընթացքը. Մի երեխան «հայելի» է մյուս երեխայի համար: Երեխաները նստում են մեկը մյուսի առջև: Մեկը ցույց է տալիս «բարկություն», «ուրախություն», և այլ հույզեր, իսկ «հայելին» կրկնում է:

II ➡ «Ով կպատմի լավ բաներ իր մասին»

Նպատակը. Բացասական հույզերի վերացում, շտկում, սեփական դրական կողմերի բացահայտում:

Խաղի ընթացքը. Երեխաները նստում են շրջանաձև, ամեն երեխա ասում է մեկ կամ երկու լավ բան իր մասին: Օրինակ՝ «Ես գեղեցիկ եմ», «Ես օգնում եմ մայրիկին», «Ես հոգ եմ տանում իմ շան մասին» և այլն: Երեխաները պետք է ուշադիր լսեն միմյանց, մի քանի շրջանից հետո քննարկեն՝ ո՞վ ունի նմանատիպ լավ հատկություններ կամ ո՞վ է կատարում լավ գործողություններ:

Հույզականային ոլորտի զարգացմանը միտված վարժությունների կատարման ընդհանուր մոտեցումները

● Մինչ կոնկրետ վարժության անցկացումը ապահովեք խաղաղ և վստահելի մթնոլորտ, որը հնարավորություն կտա երեխային՝ իրեն զգալու ֆիզիկապես և հոգեբանորեն անվտանգ ու հանգիստ:

³⁹ http://a2b2.ru/methods/35840_psihologo_pedagogicheskie_igry_i_uprazhneniya_igry_i_uprazhneniya_na_razvitie_emocionalno-volevoy_sfery_shkolnikov

● Սկսեք այն վարժությունների շարքից, որոնք հեշտությամբ է կատարում երեխան, շարժվեք պարզից դեպի բարդը:

● Անհրաժեշտության դեպքում օգնեք երեխային իրականացնել առաջադրանքը, սակայն անընդմեջ մի ներազդեք այդ գործընթացի վրա, թույլ տվեք՝ երեխան ինքնուրույն կատարի առաջադրանքը:

● Օգնեք երեխային հասկանալ, որ ինքը նաև սխալվելու իրավունք ունի: Կարևոր է, որ երեխան չվախենա սխալվելուց և շարունակի փորձել հաջողության հասնել, նույնիսկ հերթական անհաջողությունից հետո:

● Եթե երեխան հոգնում է՝ առաջադրանքը դեռ չավարտած, մի՛ պնդեք, որ նա շարունակի: Երեխային հանգստանալու հնարավորություն տվեք, իսկ հետո վերսկսեք վարժությունը:

● Մի համեմատեք երեխայի առաջընթացը մյուս երեխաների առաջընթացի հետ (եթե նույնիսկ այդ համեմատությունը հոգուտ իրեն է): Նկատեք երեխայի ամեն ձեռքբերումը, օգնեք երեխային նույնպես նկատել դրանք ու առաջ գնալ: Երեխայի ուշադրությունը հրավիրեք նախորդ օրերի համեմատությամբ նրա իսկ առաջընթացի և ձեռքբերումների վրա:

● Ամեն անգամ, երեխային արդեն ծանոթ խաղերի ու վարժությունների մեջ նոր տարրեր մտցրեք՝ երեխայի հետ իրականացվող աշխատանքներն ավելի հետաքրքրական դարձնելու համար:

● Հաշվի առեք երեխայի նախասիրությունները:

● Խմբային վարժություններ կատարելիս հաշվի առեք յուրաքանչյուր երեխայի կարողությունները. եթե խմբում առկա է մանկական ուղեղային կաթված ունեցող երեխա, ընտրեք այնպիսի վարժություններ/խաղեր, որոնցում երեխան կարող է լիարժեք ներգրավված լինել:

● Խոսեք պարզ և հստակ, ժամանակ տվեք երեխային ընկալելու ձեր խոսքը և համապատասխան արձագանք տալու:

● Եղեք անկեղծ, ցույց տվեք ձեր դրական հույզերը՝ հաղորդակցման ոչ խոսքային միջոցներով (փոխեք ձայնի ելևեջները, կիրառեք համապատասխան դիմախաղ և այլն):

● Հաճախ խրախուսեք երեխային, շարժառիթներ տվեք նրան առաջ շարժվելու և զարգանալու:

● Հաճախ արտահայտեք Ձեր սերն ու ջերմ վերաբերմունքը երեխայի նկատմամբ, քանզի դրանք նպաստում են երեխայի արագ ու արդյունավետ զարգացմանը:

ԲԱԺԻՆ 11. ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Մարության Մարինե, տիֆլումանկավարժ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Այս բաժնում ներկայացված են տեսողության խանգարումների ձևերը, առաջացման պատճառները, հետևանքները, ինչպես նաև՝ դրանց հաղթահարման ուղիները, տեսողության խանգարումներ ունեցող նախադպրոցական տարիքի երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցելու ձևերը:

Չգայական համակարգեր:

Մարդու կենսագործունեությունը, շրջակա աշխարհի ընկալումը տեղի են ունենում զգայական համակարգերի միջոցով: Որո՞նք են այդ զգայական համակարգերը. տեսողություն, լսողություն, շոշափելիք, համ, հոտառություն, հավասարակշռություն, պրոպրիոցեպցիա կամ մարմնի գիտակցում:



Այս զգայական համակարգերի համաձայնեցված գործունեության խանգարման դեպքում կարող են առաջ գալ զարգացման լուրջ խնդիրներ: Չգայական համակարգերի տարբեր խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքները բազմաբնույթ են և պահանջում են համակարգային մոտեցումներ: Շատ կարևոր է այդ աշխատանքները սկսել նախադպրոցական տարիքից, քանզի որքան շուտ սկսենք միջամտությունը, որքան վաղ կազմակերպենք զարգացնող աշխատանքները, այնքան շուտ և հաջողությամբ կկանխարգելենք երկրորդային խանգարումների առաջացումը և կնպաստենք փոխհատուցող մեխանիզմների (կառուցակարգերի) զարգացմանը: Նաև խիստ էական է նախադպրոցական տարիքի երեխաներին դպրոցական կրթությանը նախապատրաստելը, այնպիսի կարողությունների և հմտությունների ձևավորումը,

որոնք կնպաստեն նրանց ինչպես ինքնուրույնությանը, այնպես էլ սոցիալականացմանը:

Տեսողության, լսողության, շոշափելիքի, համի և հոտառության մասին բազմիցս է խոսվել: Նախ անդրադառնանք պրոպրիոցեպցիային (մարմնի գիտակցում) և հավասարակշռությանը: Դրանք մեծ դեր են խաղում ինքնուրույնության, տարածական կողմնորոշման, ֆիզիկական զարգացման գործընթացում:

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաները ունեն մարմնի դիրքի, փոխհամաձայնեցված շարժումների, կոորդինացիայի, հավասարակշռության, տարածական կողմնորոշման որոշակի խնդիրներ՝ կախված խանգարման բնույթից և ձևից:

Պրոպրիոցեպցիայի շնորհիվ գլխուղեղը տեղեկույթ է ստանում մարմնի դիրքի, քաշի, շարժումների և դրանց փոփոխման մասին՝ հողերի, մկանների միջոցով: Բոլոր համակարգված շարժումները կախված են պրոպրիոցեպցիայից (նկար 1):



Նկար 1. Պրոպրիոցեպցիայի և հավասարակշռության զարգացման օրինակներ⁴¹

Հավասարակշռության (վեստիբուլյար) համակարգը գտնվում է ներքին ականջում և տեղեկույթ է ստանում մարմնի հավասարակշռության, մարմնի դիրքի փոփոխման մասին: Այս համակարգի խանգարման դեպքում երեխան կարող է ունենալ ուշադրության, տարածական կողմնորոշման, կոորդինացիայի և այլ դժվարություններ (Ayres J, 1974): Այս զգայական համակարգերը ունեն մեծ նշանակություն տեսողության խանգարում ունեցող երեխաների կյանքում (նկար 1):

Ինչ են տեսողությունը և տեսողության խանգարումը

Տեսողությունը տեսողական վերլուծիչի միջոցով պատկերները, շրջակա աշխարհը ընկալելու ունակությունն է: Երբ նկատվում են տեսողական տեղեկույթի ընկալման դժվարություններ, որոշակի խնդիրներ՝ կապված տեսողական ընկալման գործառույթների (տեսողության սրություն, գունաընկալում, լուսաընկալում, տեսադաշտ և այլն) հետ, կարող ենք ասել, որ առկա է տեսողության խանգարում (Ермаков В. П., 2017): Տեսողության խանգարումները բացասաբար են անդրադառնում շրջակա աշխարհի արտա-

⁴¹ Նկարների սկզբնաղբյուրը՝ Annette Kitzinger

ցլման կարողության, ճանաչողական գործունեության, շարժողական ակտիվության վրա, ինչպես նաև դժվարացնում են նախադպրոցական տարիքի երեխաների նախապատրաստումը ուսումնական գործընթացին: Տեսողության խանգարում ունեցող երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է իմանալ այս երեխաների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ մշակել այդ գործընթացը կազմակերպելու ռազմավարություններ և մոտեցումներ:

Տեսողության խանգարումների դրսևորումները (դասակարգումը)

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար պետք է հասկանալ, թե ինչպես են երեխաները տեսնում: Տեսողությունը բնութագրվում է մի շարք հատկանիշներով. սրություն, տեսադաշտ, գունաընկալում, լուսաընկալում, երկտեսություն և այլն: Կարող են հանդիպել տեսողության խանգարման տարբեր տեսակներ՝ կախված նրանից, թե այդ հատկանիշներից որն է խանգարված և որքանով: Մենք կքննարկենք ամենատարածված խանգարումները և դրանց դրսևորումները:

Ըստ տեսողության սրության խանգարման՝ դասակարգվում են երկու մեծ խմբեր՝ չտեսնողներ և թույլ տեսնողներ (Денискина В.З., 2012):

Չտեսնողները իրենց հերթին բաժանվում են հետևյալ խմբերի. տոտալ (ընդհանրապես) չտեսնողներ՝ տեսողության սրությունը 0 (0%) և մնացորդային տեսողություն ունեցող երեխաներ՝ տեսողության սրությունը մինչև 0,04 (4%): Մնացորդային տեսողություն ունեցող երեխաները կարող են տարբերակել լույսը ստվերից, տեսնել որոշ ուրվագծեր, աչքին շատ մոտ ձեռքի շարժումը, սակայն տեսողությունը ուսումնական գործընթացում չեն կարող օգտագործել:

Ուսումնական գործընթացում թույլ տեսնողները ըստ տեսողության սրության աստիճանի բաժանվում են երեք խմբի՝ (Денискина В.З., 2012)

1. Տեսողության սրության խորը խանգարում՝ 0,05-0,09-ը լավ տեսնող աչքում շտկող ապակիներով (ծանր աստիճան),
2. Տեսողության սրության արտահայտված խանգարում՝ 0,1-0,2-ը լավ տեսնող աչքում շտկող ապակիներով (միջին աստիճան),
3. Տեսողության սրության չափավոր խանգարում՝ 0,3-0,4-ը լավ տեսնող աչքում շտկող ապակիներով (թեթև աստիճան):

Տեսողության սրության խանգարումների դրսևորումները

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ նկատվում են հետևյալ երևույթները՝

- դժվարանում են տարբերակել պատկերի հատկանիշները, մանրամասները,




- տուժում է ընկալման ամբողջականությունը,
- չեն տարբերակում օբյեկտի հեռավորությունը,
- էապես երկարում է ընկալման տևողությունը,
- առաջանում է տեսողական հոգնածություն,
- նվազում է գունային կոնտրաստի (ցայտունություն) տարբերակումը և այլն:

Տեսողական ընկալման բնութագրիչներից է նաև տեսադաշտը: Դրա խանգարումները կարող են պայմանավորված լինել ցանցաթաղանթի, աչքի անոթային, նյարդային համակարգի, գլխուղեղի տարբեր խանգարումներով:

Կենտրոնական տեսադաշտի խանգարման դեպքում նկատվում են բարդություններ մանրամասները տեսնելիս, պատկերների թերի կամ աղավաղված ընկալում, տեսողական կոնտաստը պահելու դժվարություններ, տեսողական հոգնածություն (նկար 2):

Ծայրամասային տեսադաշտի խանգարման դեպքում նկատվում են տարածական ընկալման խանգարում, վատ են հարմարվում լույսին/մթությանը, առաջանում է տեսողական հոգնածություն (Денискина В.З., 2012) (նկար 3):



Նկար 2. Կենտրոնական տեսադաշտի խանգարում



Նկար 3. Ծայրամասային տեսադաշտի խանգարում

Այսպիսով՝ մանկավարժական միջամտության և երեխային ցուցաբերվող աջակցության ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է հստակ իմանալ երեխաների տեսողության խանգարումների դրսևորումները:

Տեսողության խանգարումների առաջացման պատճառները տարբեր են.

1. Բնածին՝ պայմանավորված ժառանգական գործոններով (ակնազնդի չափի փոփոխություններ, կատարակտ, աստիգմատիզմ և այլն),
2. Գլխուղեղի բնածին բարորակ գոյացություններ, որոնք դրսևորվում են երեխայի մեծանալուն զուգընթաց,
3. Հղիության ընթացքում մոր տարած մի շարք հիվանդություններ (վիրուսային և վարակիչ հիվանդություններ, նյութափոխանակության խանգարումներ),
4. Մանկական ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդությունների բարդացումներ (կարմրուկ, քութեշ, դիֆտերիա)
5. Ընդհանուր ինֆեկցիոն հիվանդությունների բարդացումներ (սիֆիլիս, աչքի

տուրերկույր, գլաուկոմա)

6. Ժառանգական նախատրամադրվածություն. սովորաբար դրսևորվում է նյարդային համակարգի գործունեության խանգարումների ժամանակ,

7. Սոցիալական և կենցաղային պայմաններ (վիտամիններով աղքատ սնունդ, շրջակա միջավայրի և կլիմայական անբարենպաստ պայմաններ),

8. Գլխուղեղի վնասվածքներ:

Երբ պետք է անհանգստանալ և դիմել մասնագետին

● Երբ երեխան բողբոջում է, որ աչքերը «հոգնել են», ասես «վառվում են», կամ ամեն ինչ երևում է երկակի պատկերով,

● Երբ երեխան տարբեր առարկաներին կամ նկարներին նայում է միայն հեռու պահելով կամ, ընդհակառակը՝ աչքերին շատ մոտ,

● Երբ առկա են գլխացավեր՝ որպես աչքերի լարվածության հետևանք,

● Երբ երեխան անընդհատ հարվածում է աչքերին կամ գլխին,

● Երբ բացակայում է տեսողական կոնտակտը,

● Երբ լույսի փոփոխություններին համապատասխան հակազդում չի տալիս (աչքերի կկոցում, դեմքի թեքում և այլն),

● Երբ փորձում է նայել առարկաներին՝ գլուխը որոշակի անկյան տակ թեքելով:

➡ Մանկավարժական արդյունավետ աշխատանքի կարևոր պայմանը մանկավարժ-ծնող-երեխա փոխհարաբերությունների ճիշտ կառուցումն է: Այն երեխայի ներդաշնակ զարգացման կարևոր գործոնն է:

Առաջարկություններ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժներին

Մանկավարժը պետք է իմանա երեխայի տեսողական համակարգի, տեսողական ընկալման անհատական բնութագրերը: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաները, ունենալով տեսողական վերլուծիչի միանման վիճակ (տեսողության միատեսակ սրություն, տեսադաշտ), տարբերվում են իրենց տեսողության օգտագործման հնարավորություններով. մեկը կարող է առաջադրանքը կատարել՝ հիմնվելով տեսողության վրա, մյուսը՝ շոշափելիքի, երրորդը՝ տեսողության և շոշափելիքի:

Լուսավորություն

● Պարապմունքների ընթացքում երեխայի աշխատանքային տարածքը պետք է լինի լուսավոր, ցանկալի է՝ պատուհանի մոտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է խուսափել արևի կուրացուցիչ ուղիղ ճառագայթներից: Աշխատանքային մակերեսի վրա լույսը պետք

է ընկնի ձախ կողմից, իսկ աչքերը՝ մնան ստվերում: Եթե երեխան խաղում է հատակին կամ լույսի աղբյուրից հեռու, անհրաժեշտ է ներառել սեղանադիր լամպը՝ պաշտպանելով աչքերը:

● Աշխատավայրի լուսավորության լամպերը, որպես լրացուցիչ լույսի աղբյուր, պետք է տեղադրվեն երեխայի ձախ կողմում, սեղանի մակերևույթից 30-35 սմ բարձրության վրա: Լույսի վերին աղբյուրը (ջահ) ամրացվում է 1 մ 30 սմ բարձրության վրա:

● Եթե երեխան ունի լուսավախություն, ապա նրան պետք է նստեցնել մեջքով դեպի պատուհանը կամ փակել պատուհանը վարագույրով:

Կեցվածք

● Աշխատանքի ընթացքում կարևոր է ճիշտ կեցվածքի պահպանումը սեղանի մոտ: Աչքերի և սեղանի աշխատանքային տարածքի միջև հեռավորությունը պետք է լինի 30 սմ:

● Նստած վիճակում երեխայի ոտքերը չպետք է կախված լինեն, այլ՝ հենված որևէ հենարանին այնպես, որ ազդրի և իրանի, ազդրի և սրունքի կազմած անկյունը լինի 90 աստիճան:

Աշխատանքային ռեժիմ

● Մանկավարժը պետք է իմանա, որ թույլ տեսնող երեխաների տեսողության օպտիմալ ծանրաբեռնվածությունը կազմում է 15-20 րոպեից ոչ ավելի՝ տեսողական ծանրաբեռնվածություն պահանջող շարունակական աշխատանքներ կատարելիս: Տեսողության խորը խանգարումներ ունեցող աշակերտների համար, կախված անհատական առանձնահատկություններից, այն չպետք է գերազանցի 10-15 րոպեն (Дружинина Л.А., 2006):

● Մանկավարժը պետք է հիշի, որ տեսողության խանգարում ունեցող երեխաների՝ տեսողական ծանրաբեռնվածություն պահանջող աշխատանքի տեմպը դանդաղ է: Անհրաժեշտ է նրանց տալ լրացուցիչ ժամանակ: Եթե ցուցադրվում է որևէ տեսողական նյութ, ապա այդ գործընթացը պետք է արվի դանդաղ, որ երեխաները մինչև վերջ կարողանան ընկալել այն: Տեսողական նյութը (առարկա, նկար և այլն), պետք է ցույց տրվի աչքի մակարդակին հավասար: Ցանկալի է, որ այն իր գունային երանգով չմիաձուլվի ուսուցչի հագուստին և շրջակա միջավայրի գունային երանգներին:

● Տեսողական ծանրաբեռնվածություն պահանջող յուրաքանչյուր աշխատանք (նկարչություն, կոնստրուկտորի հավաքում և այլն), պետք է պարբերաբար հերթագայվի ակտիվ հանգստով (ֆիզիկական վարժություններ, տեսողական վարժություններ, 3-5 րոպե) (Дружинина Л.А., 2006):

Պարապմունքների ընթացքում կիրառվող միջոցներ

- Պարապմունքների ընթացքում պետք է ուշադրություն դարձնել սեփական խոսքին. այն պետք է լինի հստակ, արտահայտիչ: Անհրաժեշտ է բանավոր մեկնաբանել այն ամենը, ինչ մանկավարժը կամ այլ երեխաներ անում են:
- Անհրաժեշտ է բառային աշխատանքներ իրականացնել յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում, քանի որ տեսողության խանգարում ունեցող երեխաներին բնորոշ է վերբալիզմը, ինչը բացատրվում է տեսողական փորձի պակասով, բռնի, հասկացության մասին կոնկրետ պատկերացման բացակայությամբ:
- Կարևոր է պարապմունքների ընթացքում կիրառել շոշափողական նյութեր: Յուրա-քանչյուր նյութ շոշափելիս գործընթացը պետք է ուղեկցել խոսքով:
- Ֆիզիկական դաստիարակության և երաժշտության պարապմունքների ժամանակ ցանկալի է, որ տեսողության խանգարում ունեցող երեխաները կանգնեն լավ տեսողություն ունեցող երեխաների հետևում՝ տարածության մեջ ավելի հեշտ կողմնորոշվելու համար:
- Պարապմունքի ընթացքում կիրառվող նկարները պետք է ունենան մեծ կոնտրաստ. ֆոնը և պատկերը հստակ տարբերվեն իրենց գունային երանգներով:

Շրջակա միջավայրի հարմարեցման պահանջներ

- Ցանկալի է պարզեցնել խմբասենյակի պատերի, պահարանների տեսողական ծանրաբեռնվածությունը, քանի որ այն առաջ է բերում ուշադրության, կենտրոնացման դժվարություն, ինչպես նաև՝ տեսողական հոգնածություն:
- Աշխատել չփոխել խմբասենյակի կահավորումը, իրերի տեղադրությունը, իսկ փոխելու դեպքում երեխային անպայման տեղեկացնել դրա մասին:
- Տեսողական տեղեկույթը հասանելի դարձնելու համար կիրառել գունային գծանշում, օրինակ՝ նկարը վերցնել դեղին շրջանակի մեջ, սեղանի անկյունները դեղին թղթով նշել և այլն:

Առաջարկություններ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքներին

Անհրաժեշտ է ընդգծել, որ տեսողության խանգարում ունեցող երեխան որքան վաղ տարիքում ձեռք բերի ինքնուրույն գործունեության հմտություններ, այնքան իրեն ավելի հեշտ կլինի հարմարվել կյանքի պայմաններին: Շատ հաճախ ծնողները ձգտում են առավելագույնս «թեթևացնել» երեխայի կյանքը՝ սահմանափակելով ինքնուրույնությունը և առաջարկելով իրենց օգնությունը: Մյուս ծայրահեղությունն այն է, որ ծնողները կարծես ուշադրություն չեն դարձնում երեխայի խնդիրներին՝ նրանից շատ բան պահանջելով: Եվ

առաջին և մյուս դեպքերը կարող են հանգեցնել տեսողական խանգարումների խորացմանը, նաև հոգեբանական բարդույթների առաջացմանը:

|| ➡ Այսպիսով՝ այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ է՝

- ➡ հետևել, որ երեխան անպայման ակնոց դնի.
- ➡ երեխաների ուշադրությունը հրավիրել մի շարք ձայների վրա, որպիսիք են մեքենայի աղմուկը, սառնարանի, ջրի, քամու ձայնը և այլն.
- ➡ երեխային որևէ գործողություն սովորեցնելիս անհրաժեշտ է բազմիցս այն կրկնել, հատկապես՝ չտեսնող երեխաների համար.
- ➡ տանը անընդհատ խաղալ երեխայի հետ ինչպես սեղանի, այնպես էլ՝ շարժողական խաղեր: Այս խաղերը երեխաներից պահանջում են գնահատել տարածության խորությունը, օբյեկտների հեռավորությունը և դրանց միջև եղած հեռավորությունը.
- ➡ տեսողական ծանրաբեռնվածություն պահանջող աշխատանք կատարելիս տանը ապահովել համապատասխան լուսավորություն.
- ➡ փոքր տարիքից, տարբեր խաղերով (ձայնային, շարժողական, շոշափողական և այլն) զարգացնել պահպանված զգայական համակարգերը, փոխհատուցող մեխանիզմները: Ակտիվացնել շոշափողական հմտությունները տարբեր խաղերի միջոցով, սովորեցնել երեխային ուսումնասիրել շրջապատող առարկաները ոչ միայն տեսողությամբ, այլ նաև շոշափելով: Բոլոր առարկաների ուսումնասիրումը երեխայի հետ կատարվում է հիմնականում ընդհանուրից դեպի մասնավորը.
- ➡ ուշադրություն դարձնել օբյեկտների տարբեր հատկանիշներին և հատկություններին (գույն, ձև, քանակ, կառուցվածքի առանձնահատկություններ, նյութ).
- ➡ սովորեցնել երեխային ճանաչել սեփական մարմինը՝ անվանել մարմնի մասերը, իմանալ դրանց տեղակայումը և այլն.
- ➡ հագնել վառ գունային երանգ ունեցող զգեստներ.
- ➡ տանը կահույքի, իրերի դասավորվածությունը թողել նույնը, իսկ փոխելու դեպքում դրա մասին տեղեկացնել երեխային:
- ➡ երեխայի հետ խոսել, մեկնաբանել գործողությունները, ծանոթացնել յուրաքանչյուր նոր առարկային: Տալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ի՞նչ ես անում հիմա», «Ի՞նչ է կոչվում այս առարկան», «Ինչի՞ համար է այն պետք»: Ծնողի խոսքը պետք է լինի հստակ, պարզ, հակիրճ: Երեխային հարց տալիս չշտապել, տալ ժամանակ, լսել պատասխանը:
- ➡ օբյեկտի հետ ծանոթացնելիս տալ ավելի շատ ժամանակ՝ տեսողականորեն ընկալելու, նորից զննելու համար:
- ➡ տանը առանձնացնել տեսողական աշխատանքի համար տարածք՝ համապատասխան գունային նշաններով, օրինակ՝ եզրագծել սեղանը դեղին գույնով:
- ➡ Կարևոր է ձեռք-աչք համաձայնեցված շարժումը: Շարժումները համակարգելու դժվարությունները, տեսողության խանգարման դեպքում ձեռքերի և աչքերի շարժումներ

րի անհամապատասխանությունը դանդաղեցնում են առաջադրանքների կատարման տեմպերը: Գրաֆիկական (գծագրական) առաջադրանքներ կատարելիս պետք է երեխային գովել ոչ թե առաջադրանքի կատարման ճշտության համար, այլ՝ ճիշտ հասկանալու համար:

⇒ ցանկալի է ձևավորել որոշակի հաջորդականությամբ տարբեր գործողություններ կատարելու հմտություններ, որոնք գործնականում կավտոմատացվեն:

⇒ Մի քանի խորհուրդ, թե ինչպես պետք է սովորեցնել երեխային հարմարվել ակնոցին՝

⇒ ակնոցը պետք է լինի հարմարավետ և համապատասխանի դեմքի կոնֆիգուրացիաներին և չափերին: Ակնոցը չպետք է ճնշում գործադրի քունքի և քթի վրա, հակառակ դեպքում երեխան կարող է գլխացավ ունենալ:

⇒ որպեսզի ակնոցը անընդհատ չընկնի կամ երեխան անընդհատ չհանի, անհրաժեշտ է ականջակալներին փակցնել ռետինալար, այդ դեպքում երեխան չի հանի այն:

⇒ ընտանիքի անդամները կարող են նախապես իրենք դնել ակնոց (որպես խաղ) և երեխայի համար օրինակ ծառայել:

⇒ խաղալիքներին (արջուկ, տիկնիկ) դնել ակնոց

Այսպիսով, աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար, անհրաժեշտ է դրանք սկսել է վաղ տարիքից: Կիրառելով վերոնշյալ միջոցները և համագործակցելով միմյանց հետ, մենք կնպաստենք տեսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացմանը:

ԲԱԺԻՆ 12. ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Լուսինե Բաբայան, սուրդոմանկավարժ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Այս բաժնում ներկայացված են մանկական ծանրալսության ձևերը, առաջացման պատճառները, հետևանքները, ինչպես նաև՝ դրանց հաղթահարման ուղիները, լսողության խանգարումներ ունեցող նախադպրոցական երեխաներին հագեցնող մանկավարժական աջակցման ձևերը:

Ի՞նչ են լսողությունը և լսողության խանգարումները

Լսողությունը ծայնային ազդակների ընկալումն է լսողական օրգանի միջոցով: Պահպանված լսողությունը խոսքի և հաղորդակցման զարգացման անհրաժեշտ պայման է: Դրա խանգարումը առաջացնում է անձի զարգացման բազմաբնույթ խնդիրներ՝ խոսքի, ճանաչողական գործունեության, ընդհանուր զարգացման, ուսումնառության, հաղորդակցման և այլն (Pediatric Management of Hearing Loss, 2019):

Վերջին տարիներին նկատվում է լսողության խանգարումների տարածման աճ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) վիճակագրական տվյալների՝ լսողության տարբեր խանգարումներ ունեցող մարդկանց թիվը մոտ 300 միլիոն է: Իսկ Աուդիոլոգիայի ամերիկյան ակադեմիայի տվյալներով ամբողջ աշխարհում ամեն տարի ծնվում է լսողության խանգարում ունեցող շուրջ 665 հազար երեխա: ԱՀԿ-ի տվյալները փաստում են նաև, որ յուրաքանչյուր 1000 նորածնից 1-3-ը ծնվում է լսողության տարբեր խանգարումներով, խլությամբ է ծնվում 1000 նորածիններից մեկը: Բացի դրանից՝ մինչև 3 տարեկանը ևս 2-3 երեխա ձեռք է բերում լսողության խանգարում (World Health Organization/Deafness and hearing loss, 2020):

Պահպանված լսողություն ունեցող երեխաների լսողական ընկալման և ծայնի վերլուծության նախադրյալները ձևավորվում են կյանքի առաջին տարիներին, սակայն լսողության խանգարումների մեծամասնությունը (85%) ի հայտ է գալիս կյանքի առաջին տարիներին՝ մինչև երեք տարեկանը, այսինքն զարգացման մինչխոսքային փուլը: Երեխայի այս տարիքը ուղեղի համակարգերի և գործառույթների կազմավորման և ձևավորման կարևորագույն շրջանն է: Ուստի այդ բացասական հետևանքները հաղթահարելու համար ամբողջ աշխարհում խիստ կարևորվում է վաղ և նախադպրոցական մանկավարժական աջակցման դերը: Լսողության խանգարումներ ունեցող երեխաներին և նրանց ծնողներին մանկավարժական աջակցումը ուղղված է երեխայի

լսողական ընկալման, արտաբերման ուսուցման և հոգեկան գործընթացների բնականոն զարգացմանը:

Ինչ ազդեցություն են գործում լսողության խանգարումները երեխայի զարգացման վրա

Լսողության խանգարումները հանգեցնում են բնությունից կամ հասարակությունից եկող տեղեկույթի ստացման, ընկալման և մեկնաբանության դժվարությունների, երբեմն էլ՝ անկարողության: Այսինքն՝ լսողական վերլուծիչի՝ հասարակական առավել կարևոր օրգանի ախտահարումը աղավաղում է հասարակությունից, ֆիզիկական աշխարհից և բնությունից բխող տեղեկատվական հոսքի ընդունումը, ինչի հետևանքով խանգարվում են միջանձնային փոխհարաբերությունները: Մարդու համար տեղեկույթի ընդունման և ընկալման հիմնական միջոցները լեզուն և հնչյունային խոսքն են: Առանձին դեպքերում տեղեկույթը կարելի է հաղորդել ժեստերի լեզվով, սակայն անհատի համաչափ զարգացման և հասարակության մեջ գործող հարաբերությունների ճիշտ ըմբռնման համար անհրաժեշտ է տիրապետել լեզվական միջոցներին:

Լսողության խանգարումներ ունեցող երեխաները բառային խոսքով հաղորդվող տեղեկույթը կարող են ընկալել միայն շրջանցիկ ուղիներով և հատուկ ուսուցման պայմաններում՝ հիմնվելով տեսողական և մաշկային ընկալումների վրա: Չլսող երեխաները անկարող են ընկալել խոսքի առոգանական կողմը: Նրանք հաղորդակցման ժամանակ հաճախ թույլ են տալիս սխալներ. խոսքի յուրացման վաղ փուլերում չեն տարբերում խոսքի մասերը և դրանք սխալ են կիրառում, դժվարությամբ են յուրացնում դերանունները և նախդիրները, սխալներ են կատարում ածանցները և վերջավորություններն օգտագործելիս: Սակայն ճիշտ կազմակերպված ուսուցման արդյունքում կոպիտ սխալները աստիճանաբար նվազում են (Մանուկյան Ա.Վ., 2012):

Հաղորդակցական դժվարությունները, խոսքում առկա սխալների քանակը մեծապես կախված են լսողության խանգարման ձևից:

Լսողության խանգարումները բազմազան են. դրանք տարբեր են թե՛ բնույթով, թե՛ դրսևորման աստիճանով: Տարբերում են կոնդուկտիվ՝ ձայնահաղորդման, սենսոնևրալ (զգայանյարդային)՝ ձայնաընկալման, և լսողության խառը խանգարումներ: Ընդ որում՝ լսողության սենսոնևրալ խանգարումներն ամենաբարդն են. սրանք, ի տարբերություն կոնդուկտիվ ծանրալսության, բուժման ենթակա չեն ո՛չ դեղորայքային, ո՛չ էլ վիրաբուժական միջոցներով և կարող են դրսևորվել ծանրալսության ամենախորը աստիճանով՝ խլությամբ:

Լսողության խանգարման հետևանքները տարբեր կերպ են անդրադառնում երեխաների և մեծահասակների կյանքի վրա: Մեծահասակը լսողության խանգարման առաջացման պահին արդեն ձևավորված անհատականություն է. ունի բառային խոսք,

բառատրամաբանական մտածողություն, և լսողական գործառույթի խանգարումը հիմնականում հանգեցնում է միայն հաղորդակցման դժվարությունների:

Մանկության տարիներին առաջացած լսողական խնդիրները ազդում են երեխայի զարգացման ողջ ընթացքի վրա: Հատկապես մինչխոսքային փուլում առաջացած լսողության խանգարումների պատճառով յուրահատուկ ձևով են զարգանում նրա խոսքը, մտածողությունը և առհասարակ ողջ իմացական ոլորտը: Լսողության խանգարումը երեխային դնում է յուրահատուկ բարդ դրության մեջ, երբ դժվարանում են շրջապատողների խոսքի ընկալումը և հաղորդակցումը, ինչը աղքատացնում է նրա սոցիալական փորձը, բարդացնում է սոցիալական հարմարումը, արդյունքում տուժում է նրա անձնային հատկանիշների զարգացումը: Լսողության անգամ միակողմանի կամ թեթև (≤ 40 դբ) խանգարումը կարող է բացասաբար անդրադառնալ մանկան զարգացման վրա՝ իր հետքը թողնելով երեխայի առաջադիմության և սոցիալական վարքի վրա:

Վաղ մանկական հասակում՝ մինչխոսքային փուլում, ծանրալսության բացասական հետևանքները՝ խոսքի թերզարգացումը կամ համրությունը, հոգեկան և հուզական զարգացման խանգարումները, սոցիալական անհարմարությունը բերում են հաշմանդամության: Այսպիսի բարդ հաշմանդամության հաղթահարումը հնարավոր է միայն վաղ և ճիշտ կազմակերպված մանկավարժական աշխատանքների միջոցով:

Լսողության խանգարումների դրսևորումները (դասակարգումները)

Սովորաբար մանկավարժը սկսում է աշխատել երեխայի հետ, երբ արդեն ախտորոշված են երեխայի լսողության խանգարումը, դրա բնույթը և աստիճանը: Ուստի ավելի կարևոր է, որ մանկավարժը պատկերացնի երեխայի լսողական հնարավորությունները՝ ծանոթանալով բժշկական ախտորոշմանը: Այդ նպատակով ստորև ներկայացվում է լսողության միջազգային դասակարգմանը (ԱՀԿ) համապատասխան, երեխաների լսողական ընկալման մակարդակները (Victory J., 2020).

1-ին աստիճան կամ լսողության թեթև կորուստ (25-40 դբ). խոսակցական բարձրության խոսքը ընկալվում է 5 մ-ից, դժվարացած է միայն ցածրաձայն խոսքի ընկալումը, բանավոր և գրավոր խոսքի յուրացման խնդիրներ չկան:

2-րդ աստիճան կամ լսողության միջին կորուստ (41-55 դբ). խոսակցական բարձրության խոսքը ընկալվում է մինչև 3 մ հեռավորությունից, գրավոր խոսքի յուրացման խնդիրներ չկան:

3-րդ աստիճան կամ լսողության միջին-ծանր կորուստ (56-70 դբ). խոսակցական բարձրության խոսքը ընկալվում է մինչև 1 մ հեռավորությունից, առկա են խոսքի առոգանական և հնչարտաբերական կողմի խանգարումներ, գրավոր խոսքի յուրացման խնդիրներ սովորաբար չկան:

4-րդ աստիճան կամ լսողության ծանր կորուստ (71-90 դբ). բարձրաձայն խոսքի ընկալումը հնարավոր է միայն ականջախեցու մոտ, խանգարվում են խոսքի առո-



գանական և հնչարտաբերական կողմերը, առկա են գրավոր խոսքի յուրացման դժվարություններ:

Խլություն կամ լսողության խոր կորուստ (91 դբ-ից ավելի). խոսքի ընկալումը և զարգացումը, առանց հատուկ միջամտության և ուսուցման, անհնար է: Սակայն ձայները ընկալելու՝ չլսող (խուլ) երեխաների հնարավորությունները ևս տարբեր են և կախված են պահպանված հաճախականային ընդգրկույթից (դիապազոն): Այն կարող է տատանվել միայն ականջի մոտ հնչող բարձր ձայների ընկալումից մինչև դրանից 15-20 սմ հեռավորությունից հնչող անձանոթ բառերի վանկառիթմային կազմը, բոլոր ձայնավոր հնչյունները և բաղաձայնների մեծ մասը, խոսակցական բարձրության ծանոթ բառերը և արտահայտությունները:

Լսողության խանգարումների առաջացման պատճառները

Լսողության խանգարումներ առաջացնող պատճառները տարբեր են: Դրանք կարող են լինել ժառանգական, բնածին և ձեռքբերովի: Առանձնացվում են լսողության խանգարումների ռիսկի հետևյալ գործոնները (Pediatric Management of Hearing Loss, 2019).

1. Ժառանգական. նորածինների լսողության խանգարումների 35-50%-ը ժառանգական է, ընդ որում՝ դրանց 1/3 ունի համախտանիշային բնույթ, այսինքն համակցված է այլ խանգարումներով (նյարդային համակարգի, նյութափոխանակության, աչքի, մաշկային համակարգի, երիկամների)

2. Ծնողների վնասակար սովորությունները. ավոհոլիզմ, թմրամոլություն և այլն:

3. Հղիության ընթացքում մոր տարած վարակիչ և վիրուսային հիվանդությունները. կարմրուկ, կարմրախտ, քութեշ, ջրծաղիկ, խոզուկ, գրիպ, տոքսոպլազմոզ, ցիտամեգալովիրուս, հերպես, տուբերկուլյոզ, պոլիոմելիտ, սիֆիլիս: Լսողական վերլուծիչը հատկապես խոցելի է կարմրուկի հարուցիչի հանդեպ: Հղիության առաջին 2 ամիսների ընթացքում մոր հիվանդանալու դեպքում պտղի վարակվելու հավանականությունը 70-80% է:

4. Մոր սոմատիկ հիվանդությունները. նեֆրիտ, շաքարային դիաբետ, տիրեոտոքսիկոզ, անեմիա, ավիտամինոզ, հիպերխոլեստերինեմիա:

5. Հղիության ընթացքում մոր կողմից օտոտոքսիկ դեղամիջոցների կիրառումը. ամինոգլիկոզիդային հակաբիոտիկներ (ստրեպտոմիցին, մոնոմիցին, գենտամիցին, նեոմիցին, կանամիցին, ամիկսացին), դիուրետիկներ (ֆուրասեմիդ, լազեկս), սալիցիտատներ և խինին:

6. Հղիության ավտաբանական ընթացքը. տոքսիկոզներ, վաղաճնություն և այլն:

7. Ծննդաբերական վնասվածքները:

8. Նորածնի թթվածնային քաղցը, շնչահեղձուկը:

9. Պտղի անհասությունը. կշիռը ծնվելու պահին 1500 գ-ից պակաս:

10. Հիպերբիլիռուբինեմիան (ավելի քան 20մմոլ/լիտր):



11. Նորածնի դիմաձևն ու տային կմախքի ախտաբանությունը:
12. Արգարի սանդղակով (ԱՄՆ, 1952թ.)՝ 1 րոպեում 0-4 միավոր, 5 րոպեում 0-6 միավոր:
 13. Նորածնի ինտենսիվ թերապիան. արհեստական շնչառություն 5 օր և ավելի:
 14. Վաղ մանկական հասակում երեխայի տարած վարակիչ և վիրուսային հիվանդությունները. գրիպ, խոզուկ, կարմրուկ, տոքսոպլազմոզ, էնցեֆալիտ, դիֆթերիա, մալարիա, տիֆ, մենինգիտ:
 15. Երեխայի ընդունած օտոտոքսիկ դեղամիջոցները:
 16. Վնասվածքները. գանգի հիմքի կոտրվածք, խխունջի արյունազեղում, հաղորդող ուղիների, կենտրոնական բաժինների ախտահարում, ձայնային վնասվածքներ:

Ինչպե՞ս իրականացնել երեխայի լսողության մանկավարժական գնահատումը

▶▶ **Խոսք ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների լսողության մանկավարժական գնահատումը** (Таварткиладзе Г. А., Шматко Н. Д., 2004)

Սույն հետազոտության իրականացման համար հարկավոր է նախապատրաստել բառացանկեր և դրանց համապատասխան նկարներ: Բառացանկերը կառուցվում են հետևյալ սկզբունքներով.

- բառերը պետք է լավ ծանոթ լինեն երեխային,
- դրանցում պետք է ընդգրկված լինեն ցածր և բարձր հաճախականության հավասար քանակի բառեր,
- բառերը պետք է լինեն միավանկ, երկվանկ և եռավանկ,
- ցանկում ընդգրկվող բառերի քանակը կախված է երեխայի տարիքից. նախադպրոցականների համար ընտրվում է 10 բառ, դպրոցականների համար՝ 20-30:

Դպրոցական երեխաների ընկալման գնահատման օրինակելի բառացանկ. **նավ, լուսին, բալ, պատուհան, բաժակ, խաղող, ձու, նապաստակ, շուն, մկրատ, կատու, գազար, ծաղիկ, գնդակ, ուլ, թել, ժամացույց, օդանավ, ձուկ, սոխ, կապիկ, ծառ, բադ, աղվես, աչք, հավ, պաղպաղակ, պանիր, հեռախոս, սեղան:**

Նախադպրոցական երեխաների ընկալման գնահատման օրինակելի բառացանկ.

ձի, շուն, գնդակ, մկրատ, բաժակ, նավ, գազար, փուն, նապաստակ, պահարան:

Երեխաներին ցանկալի է նախապատրաստրաստել գնահատմանը: Դրա համար օգտագործում են օժանդակ ցանկ, որը բաղկացած է երեխաներին լավ ծանոթ 10 բառից (օրինակ՝ ավտո, փուչիկ, ճոճանակ, ափսե, միս, աթոռ, խոզանակ, գդալ և այլն), որոնք ընդգրկված չեն հիմնական ցանկում:

Նախապատրաստական փուլ

Երեխայի հետ կոնտակտ հաստատելուց հետո հետազոտողը 6 մ հեռանում է դեմքով դեպի իրեն նստած կամ կանգնած երեխայից և, թղթով, սովարաթղթով, ձեռքի ափով



փակելով դեմքը (շրթունքները), արտաբերում է ցանկի բառերից մեկը: Եթե երեխան ճիշտ է կրկնում բառը, մեծահասակը ցույց է տալիս համապատասխան նկարը և խրախուսում է նրան: Եթե երեխան ճիշտ է կրկնում նաև 2-րդ բառը, նշանակում է, որ նա հասկացել է պահանջը և պատրաստ է հետազոտությանը:

Գնահատման փուլ

Մանկավարժը 6 մ հեռավորությունից շշուկով արտաբերում է հիմնական ցուցակի բառերից մեկը: Եթե երեխան 6 մ հառավորությունից չի լսում շշուկով արտաբերված բառը, այն կրկնում է խոսակցական բարձրության ձայնով: Ճիշտ պատասխանի դեպքում բառը նորից ասվում է շշուկով, սխալ պատասխանի կամ դրա բացակայության դեպքում գնահատողը մոտենում է 3 մ-ով, ապա մինչև 10 սմ: Երբ երեխան ճիշտ է պատասխանում, մեկական մետրով հեռանալով որոշվում է ընկալման առավելագույն հեռավորությունը:

Եթե երեխան բարձրաձայն չի արտաբերում բառերը, քանի որ չի հասկանում պահանջը, ամաչում է, հրաժարվում կրկնելուց, կամ նրա արտաբերումը անհասկանալի է, ապա գնահատման ժամանակ երեխայի դիմաց դրվում են ցանկի բառերը պատկերող նկարներ և նրանից պահանջում ոչ թե կրկնել, այլ՝ ցույց տալ դրանք: Եթե նախադպրոցական երեխան չի կարողանում կատարել հանձնարարությունը անգամ բառերի խոսակցական բարձրության ձայնով արտաբերման ժամանակ, ապա հարկավոր է նրա լսողությունը հետազոտել չխոսող երեխաների համար նախատեսված մեթոդով:

Ամփոփում

- Եթե երեխան ընկալում է 6 մ-ից շշուկով արտաբերված բոլոր ստուգող բառերը, ապա անհանգստանալու կարիք չկա:

- Եթե երեխան շշուկը լսում է 6 մ-ից պակաս հեռավորությունից, ապա հնարավոր է, որ նրա լսողությունն իջած է: Լսողության խանգարման մասին է վկայում, երբ երեխան ճանաչում է ականջախեցու մոտ կամ որոշ հեռավորությունից խոսակցական բարձրության ձայնով արտաբերված բառերը և չի ընկալում միևնույն հեռավորությունից շշուկով ասվածները, կամ երբ տարբեր բառերը երեխան ճանաչում է տարբեր հեռավորությունից: Լսողության խանգարման կասկածի տեղիք կարող է տալ, եթե երեխան ընկալում է բառերը տարբեր հեռավորություններից:

- Լսողության խանգարման կասկածի դեպքում երեխաները ուղղորդվում են բժշկական հետազոտության:

||➡ **Խոսք չունեցող նախադպրոցական փարիքի երեխաների լսողության մանկավարժական գնահատումը** (Таварткиладзе Г. А., Шматко Н. Д., 2004)

Խոսք չունեցող երեխաների լսողության մանկավարժական գնահատումը կարելի է



իրականացնել թե՛ խոսքով (բառեր, հնչյունակապակցություններ, ծայնանմանակումներ), թե՛ ոչ խոսքային ձայներով (երաժշտական տարբեր գործիքների հնչողություններ):

Նախապատրաստական փուլի նպատակը ձայնի հանդեպ երեխաների պայմանական խաղային հակազդման (ռեակցիայի) ձևավորումն է: Գնահատողը նստում է երեխայի դիմաց՝ դնելով իր և երեխայի ձեռքերը սեղանի վրա, ապա, կենտրոնացնելով երեխայի ուշադրությունը իր շրթունքներին, խոսակցական բարձրության ձայնով արտաբերում է «պա-պա-պա», «սի-սի-սի», «տու-տու-տու» և այլ տիպի հնչյունակապակցություններ կամ բառեր: Արտաբերման պահին նա երեխայի ձեռքով վերցնում է սեղանին դրված խաղալիքը (գնդիկը, կոճակը, բուրգի օղակը և այլն) և գցում տուփի մեջ (անցկացնում ձողի վրա): Այս գործողությունները կրկնվում են այնքան, մինչև երեխան ինքնուրույն (առանց օգնության) կատարի դրանք ի պատասխան արտաբերված հնչյունակապակցությունների: Հնչյունակապակցությունների միջև դադարների տևողությունը պետք է տարբեր լինի, որպեսզի երեխան արձագանքի ոչ թե ուղիղ, այլ՝ ձայնին: Այս ընթացքում պետք է երեխայից պահանջել կրկնել հնչյունակապակցությունը, բառը. նա պետք է պատասխանի խաղային գործողություններով:

Երբ երեխան սկսում է ինքնուրույն հստակ կատարել գործողությունները՝ տեսնելով մանկավարժի շրթունքները, վերջինս նստում է փոքրիկի կողքին և խոսակցական բարձրության ձայնով արտաբերում է, օրինակ, «պա-պա-պա» ականջախեցու մոտ: Այս դեպքում արտաբերման ժամանակ երեխան զգում է արտաշնչվող օդի շիթը (շիթը կա՛ գցում է գնդիկը, չկա՛ սպասում է): Եթե երեխան չի կատարում գործողությունը, ապա արտաբերման պահին պետք է նրա ձեռքով գցել գնդիկը տուփի մեջ: Այս վարժությունը կրկնվում է այնքան, մինչև երեխան ինքնուրույն կատարի գործողությունը: Երբ նա յուրացնում է պահանջը, վանկերը խոսակցական բարձրության ձայնով արտաբերվում են երեխայի ականջախեցու մոտ, բայց՝ արդեն սովորաբար կամ ձեռքի ափով փակելով օդի շիթը: Պետք է ուշադիր լինել, որ ոչ մի տեղ (հայելու, ապակու մեջ) չանդրադառնա մեծահասակի դեմքը: Ընկալելով ձայնը լսողությամբ՝ երեխան պետք է կատարի խաղային գործողությունները. եթե նա չի կատարում դրանք, ապա ձայնը բարձրացվում է: Բարձր ձայնի հանդեպ հակազդման ամրապնդումից հետո պետք է փորձել ձևավորել այն խոսակցական բարձրության ձայնով, ապա՝ նաև շշուկի հանդեպ:

Երբ, ի պատասխան շշուկի, երեխան կատարում է գործողությունները, մանկավարժը աստիճանաբար հեռանում է նրանից և որոշում շշուկի ընկալման առավելագույն հեռավորությունը: Ի պատասխան լսած բառին՝ երեխան կատարում է խաղային գործողություններ (չի կրկնում բառը):

Այս նույն սկզբունքով կարելի է հետազոտել նաև ոչ խոսքային ձայների հանդեպ երեխայի հակազդումները:

Ամփոփում

● Եթե երեխան հակազդում է 6 մ հեռավորությունից շշուկով արտաբերված բոլոր ստուգիչ ձայներին, ապա անհանգստանալու կարիք չկա:

● Եթե երեխան շշուկը լսում է ավելի պակաս հեռավորությունից, ապա կարելի է ենթադրել, որ նրա լսողությունը իջած է:

● Եթե երեխան արձագանքում է խոսակցական բարձրության ձայնին, բայց չի հակազդում շշուկին, ապա նա կարող է ունենալ լսողության զգալի իջեցում:

● Լսողության իջեցման մասին կարող են վկայել նաև այն դեպքերը, երբ երեխան նույն բարձրությամբ արտասանված տարբեր բառերին արձագանքում է տարբեր հեռավորություններից:

Լսողության խանգարման կասկածի դեպքում երեխաները ուղղորդվում են լսողության բժշկական հետազոտության:

Երբ պետք է անհանգստանալ և դիմել մասնագետին

Երեխային հարկավոր է ուղղորդել հատուկ մասնագիտական համակողմանի հետազոտության կամ աջակցության, եթե նա՝

● լուռ միջավայրում շշուկով արտաբերված լավ ծանոթ բառերը չի ընկալում 6մ հեռավորությունից,

● հաճախակի խնդրում է կրկնել ասվածը (ասում է «ի՛նչ», «հը՛»),

● դժվարանում է հասկանալ իրեն ուղղված խոսքը, եթե չի նայում խոսակցի դեմքին,

● խոսում է շատ բարձր կամ, ընդհակառակը, շատ ցածր,

● հաճախ աղմկում է,

● հեռուստացույցի ձայնը շատ է բարձրացնում կամ շատ մոտ է նստում դրան:

Լսողության խանգարումների մասին կարող են վկայել նաև երեխայի՝

● խոսքի խանգարումները. հնչարտաբերական, ձայնի, առոգանության,

● հաղորդակցման դժվարությունները,

● վարքի խանգարումները,

● ցածր ինքնագնահատականը,

● անկայուն ուշադրությունը (ցրվածությունը),

● ուսումնական դժվարությունները:

Առաջարկություններ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժներին.

Լսողության թեթև և միջին խանգարումներ ունեցող երեխաների խոսքը ձևավորվում է բնական հաղորդակցման գործընթացում (Янн П., Королева И. В., 2011):

Անհրաժեշտ է՝

● շտկել և զարգացնել խոսքի հնչարտաբերական կողմը,

- հստակեցնել և հարստացնել բառապաշարը,
- ձևավորել խոսքի քերականական կառուցվածքը,
- զարգացնել մենախոսությունը և երկխոսությունը,
- զարգացնել լսողական ընկալումը:

Լսողությունը ուշ կորցրած (3 տարեկանից հետո) երեխաների խոսքը ձևավորվում է բնական հաղորդակցման գործընթացում:

Անհրաժեշտ է՝

- զարգացնել լսողական ընկալումը,
- զարգացնել շրթունքներից կարդալը,
- բարելավել խոսքի հնչարտաբերական կողմը,
- հստակեցնել և հարստացնել բառապաշարը,
- ձևավորել խոսքի քերականական կառուցվածքը,
- վերականգնել խոսքայի հաղորդակցումը:

Լսողության ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների խոսքը զարգանում է միայն հատուկ ուսուցման արդյունքում: Անհրաժեշտ է ուղղորդել հատուկ մանկավարժի (սուրդոմանկավարժ կամ լոգոպեդ) մոտ՝ ձևավորելու լսողական ընկալումը և խոսքի բոլոր բաղադրիչները:

Լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է **միջավայրի ճիշտ հարմարեցում** (Victory J., 2020): Յուրաքանչյուր մանկավարժ պետք է տիրապետի այդպիսի հարմարեցման հնարքներին: Հարմարեցումները լինում են տեխնիկական, ֆիզիկական և հաղորդակցական: **Տեխնիկական հարմարեցումը** ենթադրում է անհատական լսողական սարքերի մշտական գործածություն ակտիվ գործունեության ողջ ընթացքում (դրանք հանվում են միայն երեխայի քնի ժամանակ), ինչպես նաև՝ FM համակարգերի (առկայության դեպքում) կիրառում խմբային և անհատական պարապմունքների ժամանակ: Թեև, լսողության խանգարում ունեցող անձանց համար ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ սարքավորումներ, այնուամենայնիվ՝ կրթական միջավայրը ևս պետք է հարմարեցվի այնպես, որ այն նպաստի լսողության խանգարում ունեցող երեխաների ուսումնառությանը՝ ապահովելով տեղեկույթի ընկալման հավասար պայմաններ լսող և չլսող նախադպրոցականների համար: Միջավայրի հարմարեցումը ենթադրում է ինչպես խմբասենյակի ֆիզիկական պայմանների փոփոխություն, այնպես էլ՝ պարապմունքի ընթացքում հաղորդակցական միջոցների կիրառում: Խմբասենյակի **ֆիզիկական պայմանների** հարմարեցումը ենթադրում է ոչ միայն սենյակի չափերի, ձևի, բարձրության, այլ նաև կահավորման և ծածկանյութերի բնույթը: Ֆիզիկական պայմանների անգամ աննշան փոփոխությունները կարող են հեշտացնել տեղեկույթի լսողության խանգարում ունեցող երեխաների ընկալումը:

Խմբասենյակի չափերից է կախված դրանում ռեվերբերացիայի (արձագանք) առկայությունը. որքան մեծ է սենյակը, այնքան շատ է արձագանքը: Սա մեծ խոչընդոտ է

լսողական սարք դնող մարդու համար, քանի որ արձագանքի առկայության դեպքում խախտվում է լսողական ընկալման հստակությունը: Ուստի խիստ կարևոր է արձագանքի բացառումը, որը հնարավոր է ձայնակլանիչ ծածկույթի ապահովման շնորհիվ. գորգեր, վարագույրներ և այլն:

Լսողության խնդիր ունեցող երեխաները խմբասենյակում պետք է նստած լինեն այնպես, որ պարապմունքի ընթացքում կատարվող բոլոր իրադարձությունները լինեն տեսանելի: Դրա համար սեղանները պետք է դասավորվեն **կիսաշրջանաձև**. այդպես հնարավոր է տեսնել բոլորի դեմքերը և դրսի դուռը: Մանկավարժը խոսելիս միշտ պետք է լինի դեմքով դեպի չլսող սանը:

Արևի ուղիղ ճառագայթները կարող են առաջացնել ստվերներ, որոնք դժվարացնում են մարդկանց դեմքերի և/կամ առարկաների պարզ զանազանումը: Ճիշտ լուսավորությամբ ապահովելը և երեխային համապատասխան տեղում նստեցնելը կարող են կանխել նշված խնդիրները: Խոսքի հասկացմանը կարող է խոչընդոտել նաև ուսուցչի անընդհատ քայլերը խոսելու ընթացքում, քանի որ անընդհատ փոփոխվում են ձայնի աղբյուրը, ուղղությունը և բարձրությունը: Այս խնդրից խուսափելու համար պետք է խոսելիս լինել երեխային լսելի և տեսանելի դիրքում: Աղմուկը՝ միջանցքից եկող ոտնաձայները, փողոցի երթևեկության ձայնը և այլն, խափանում է լսողական սարքերի աշխատանքը և խոչընդոտում խոսքի ընկալումը: Ուստի պարապմունքների ժամանակ պետք է ապահովել լուռ միջավայր:

Պարապմունքների ընթացքում կիրառվող **հաղորդակցական բազմազան միջոցները** կարող են դրական ազդեցություն ունենալ լսողության խանգարում ունեցող երեխաների ուսումնական գործընթացի վրա: Այդպիսի միջոցներից են ժեստերի լեզուն և մատնախոսությունը: Սակայն, հաղորդակցման այլընտրանքային միջոցներից բացի, կարևորվում է գրավոր խոսքի (բառաքարտերի) կիրառումը և մանկավարժի խոսքին առաջադրվող պահանջների պահպանումը: Մանկավարժի խոսքը պետք է լինի արտահայտիչ, պարզ, հանդարտ տեմպով, խոսակցական բարձրության, երեխայի խոսքի զարգացման մակարդակին համապատասխան:

➡ Առաջարկություններ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ընդանիքներին

Լսողության խանգարումներ ունեցող երեխայի հաղորդակցման դժվարությունները և դրանց հետևանքները մեղմելու նպատակով հարկավոր է, որ՝

- լսողության անգամ թեթև իջեցման դեպքում (35-40 դբ) երեխան դնի լսողական սարքեր: Այն դեպքերում, երբ լսողական սարքերը չեն բավարարում (լսողության խոր խանգարում) երեխաներին, ցուցված է խխունջային ներպատվաստում,

- երեխան դնի երկու սարք,
- սարքերի մարտկոցները լինեն լիցքավորված,

- անհատական ներդիրի խողովակը ճկուն լինի. կարծրացած չլինի,
- ներդիրները համապատասխանեն երեխայի ականջախեցու չափերին և խցանված չլինեն ականջածծումբով:

||▶ ՀԻՇԵՔ

▶ Լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար խիստ կարևոր են խոսքային ակտիվ միջավայրի ստեղծումը, նրանց խոսքի խթանումը:

▶ Երեխային ուղղված խոսքը պետք է լինի հանդարտ, խոսակցական բարձրության, առանց ընդգծված արտաբերման:

▶ Մեծահասակի խոսքը պետք է լինի հուզական և արտահայտիչ:

▶ Լսողական անգամ չնչին մնացորդի կիրառությունը անչափ կարևոր է, պետք է խթանել լսողական ընկալումը՝ ձայները ընկալելու, տեղակայելու, ճանաչելու ունակությունը:

▶ ***Լսողության խանգարումներ ունեցող երեխայի հաջողության գրավականը ծնող-մանկավարժ համագործակցությունն է:***

ԲԱԺԻՆ 13.

ՇՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵՒԱՅԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ալինա Մանուկյան, հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու

Այս բաժնում ներկայացվում են երեխայի բացասական վարքի հիմքում ընկած հիմնական պատճառները, շարժառիթները: Քննարկվում են նաև երեխաների վարքի կարգավորման նպատակով մեծահասակների առավել արդյունավետ արձագանքներն ու վարքի կարգավորմանն ուղղված մոտեցումները:

Ինչո՞ւ է կարևոր հասկանալ երեխաների բացասական վարքի հիմքում ընկած պատճառները և շարժառիթները

Մեծահասակները հաճախ անհանգստություն են զգում, երբ երեխաները չարաճճի, անընդունելի, անպատշաճ վարք են դրսևորում կամ վարքային խնդիրներ ունեն:

Իրավիճակն առավել բարդանում է հատկապես այն դեպքերում, երբ, ի պատասխան այդպիսի վարքի, ձեռնարկվում են խիստ միջոցներ՝ փորձելով փոխել կամ դադարեցնել այն, ինչն իրենք՝ մեծահասակները, համարում են արտառոց վարք:

Այն դեպքերում, երբ երեխան ունի զարգացման որոշակի խնդիրներ, երեխայի հուզական ու վարքային գրեթե բոլոր խնդիրները վերագրվում են զարգացման խնդրին, և դրանց պատճառներն ու շարժառիթները հասկանալուն միտված փորձեր հազվադեպ են արվում կամ չեն արվում ընդհանրապես:

Սակայն բոլոր վարքաձևերը, ներառյալ՝ երեխաների բացասական կամ անպատշաճ վարքը, ուղղված են որոշակի նպատակի և ունեն հիմնարար պատճառ՝ անկախ երեխայի զարգացման առանձնահատկություններից: Բացասական վարքի պատճառը և/կամ նպատակը բացահայտելով՝ մենք կարող ենք հասկանալ, թե ինչու՞ է երեխան տվյալ կերպ վարվում, և այսպիսով հնարավորություն կունենանք արդյունավետ արձագանքելու իրավիճակին:

Երեխաները հաճախ լիարժեք չեն գիտակցում իրենց խնդրահարույց վարքի առաջացման պատճառները: Այն հարցին, թե ինչու է այդպես վարվել, նա կարող է պատասխանել, որ չգիտի, կամ անհիմն պատճառաբանություն և բացատրություն տալ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պարագայում սեփական վարքի տարբեր դրսևորումները մեկնաբանելու կամ բացատրելու դժվարությունները պայմանավորված են նրանց մտավոր և խոսքային զարգացման մի շարք առանձնահատկություններով:

Փորձագետների մեծամասնության կարծիքով⁴² երեխաների բացասական վարքագծերը կարելի է բացատրել չորս հիմնարար պատճառներով. ուշադրություն գրավելու ձգտում, իշխանության դրսևորում, վրեժ և անհամարժեքության զգացում: Կարծում ենք, որ տեղին կլիներ այս շարքում ավելացնել նաև զգայական և հուզական ծանրաբեռնվածությունը, որը հատկապես կարևոր է դառնում զարգացման մի շարք խնդիրների առկայության դեպքում:

Ուշադրություն գրավելը. նախադպրոցական տարիքում ուշադրություն գրավելուն ուղղված վարքաձևերի հիմնական պատճառը ինքնագնահատականի և մեծահասակներից (մանկավարժներ, ծնողներ, ընտանիքի այլ անդամներ) ուշադրություն ստանալու հարաբերակցությունն է: Ուշադրության արժանանալու ցանկությունը կարևոր պահանջ-մունք և շարժառիթ է շատ երեխաների համար: Բոլոր այն դեպքերում, երբ երեխան չի կարողանում ուշադրության արժանանալ իր դրական արարքների կամ ձեռքբերումների շնորհիվ, սկսում է թերագնահատել իր հնարավորությունները և փորձում է ուշադրություն գրավել այլ եղանակներով, օրինակ՝ անցանկալի վարքով, որը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Նման վարքը կանխելու համար մեծահասակները հաճախ պատժում են երեխային կամ այս կամ այն կերպ արձագանքում նրա վարքին՝ արդյունքում տալով նրան հենց այն, ինչի կարիքն ուներ, հետևաբար՝ նաև ամրապնդելով երեխայի անցանկալի վարքը: Արդյունքում երեխան սովորում է կրկնել նման վարքը:

Իշխանություն դրսևորելը. ամենավաղ տարիքից երեխաները գիտակցում են, որ իրենք իրենց գործողությունների միջոցով կարող են ազդել շրջապատող աշխարհի վրա: Մեծահասակ-երեխա փոխհարաբերությունների արդյունքում, հաճախ, որոշ երեխաներ թյուր կարծիք են ձևավորում այն մասին, որ իրենք կարևոր են մյուսների համար միայն այն ժամանակ, երբ կարողանում են նրանց շահարկելու միջոցով հասնել իրենց ուզածին: Ձևավորված ոչ ճիշտ փոխհարաբերությունների հետևանքով երեխաներն իրենց արժևորում են մեծահասակներին մարտահրավեր նետելու և նախանշված սահմանները խախտելու միջոցով: Մեծահասակներն ի պատասխան գործադրում են իրենց իշխանությունը, երեխան էլ ավելի է համառում կամ ենթարկվում է՝ ակնհայտորեն ցուցադրելով իր դժկամությունը: Սա կարող է վերաճել մեծահասակի և երեխայի միջև իշխանության պայքարի:

Վրեժ լուծելը. սիրո, հարգանքի կամ արդար վերաբերմունքի պակաս զգալու դեպքում երեխաները կարող են վիրավորված զգալ: Իրենց կարող է թվալ, որ անարդար կերպով են պատժվում, և իրենք հակված կլինեն վրեժխնդրության: Ֆիզիկապես և/կամ հուզականորեն իր հասակակիցներին կամ շրջապատող մեծահասակներին մարտահրավեր նետող երեխան, թերևս, համարում է, որ իրեն անարդարացի են վերաբերվել կամ վիրավորել են: Իրական կամ երևակայական վնաս կրած երեխան կարող է ձգտել

⁴² Гиппенрейтер Ю.Б. Как общаться с ребенком.: АСТ, Астрель, Харвест; Москва; 2008 ISBN 978-5-17-052715-1, 978-5-271-2Sե0891-1, 978-985-16-5630-7, 214 стр.

թշնամական խոսքերի և/կամ գործողությունների, ինքնամեկուսացման և համագործակցությունից հրաժարվելու միջոցով վրեժխնդիր լինելու: Երեխան շարունակում է վրեժ լուծել՝ ուժգնացնելով բացասական վարքը, ամենայն հավանականությամբ՝ փորձելով միաստալ, խոսքով վիրավորել կամ այլ «զենք» գտնել: Սա հաճախ վերաճում է մեծահասակի և երեխայի միջև վրեժխնդրության ցիկլի:

Անհամարժեքության զգացման արտահայտում. երեխան տարբեր պատճառներով կարող է համարել, որ ինքը չի արդարացնում մեծահասակների ակնկալիքները, կարծել, թե ինքը չի կարող կատարել այս կամ այն գործողությունը, և հիասթափվել: Սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ երեխայի հավատի կորուստը կարող է հանգեցնել անհամարժեքության զգացման: Անհամարժեքության զգացումը կարող է արտահայտվել այս կամ այն գործողությունից հրաժարվելու միջոցով, երբ երեխան զգում է, որ այն իր ուժերից վեր է, և ցանկանում է խուսափել ծախսողումից: Նման դեպքերում երեխան հաճախ «չեմ կարող» արտահայտությունը փոխարինում է «չեմ ուզում» արտահայտությամբ: Եթե երեխան գտնում է, որ չի կարող կատարել աշխատանքը, նա կարող է ճնշվածություն զգալ, ինչն էլ, բնականաբար, իր հերթին դառնում է երեխայի գործողությունների արդյունավետությունը նվազեցնող գործոն: Նման դեպքերում երեխային ծաղրելը կամ այս կամ այն գործողությունը, աշխատանքը կատարելու պարտադրանքը կարող է ստիպել երեխային էլ ավելի թերաթեք ու անհամարժեք զգալ:

Զգայական ծանրաբեռնվածություն. գերզգայունության հետևանքով զգայական տարբեր ազդակները կարող են զգայական ծանրաբեռնվածության պատճառ դառնալ: Սակայն շատ հաճախ ոչ միայն շրջապատողները, այլև հենց իրենք՝ երեխաները, չեն գիտակցում, որ վարքում առաջացող խնդիրները պայմանավորված են հենց այդ ծանրաբեռնվածությամբ: Իրավիճակն առավել բարդանում է բոլոր այն դեպքերում, երբ երեխայի զարգացման խնդիրը հնարավորություն չի տալիս նրան խոսքային կամ ոչ խոսքային միջոցներով հուշելու իր անհարմարավետության մասին կամ նվազեցնելու, բացառելու այն ազդակների ներգործությունը, որոնք ծանրաբեռնում կամ անհանգստացնում են իրեն: Ընդ որում, զգայական (ինչպես և հուզական) ծանրաբեռնվածությունը տարբեր երեխաների վրա տարբեր կերպ է անդրադառնում. ինչ-որ մեկը դառնում է գրգռված, մեկ ուրիշն առհասարակ սկսում է լռել, երրորդն ասես «անջատում է իրեն» կամ դառնում գերգրգռված: Արդյունքում ծանրաբեռնվածությունը ուղղակիորեն անդրադառնում է երեխայի վարքի վրա, հաճախ դարձնում այն անկառավարելի, իսկ շարժառիթների իմաստով՝ առաջին հայացքից անհասկանալի:

Ինչ պետք է անեն մեծահասակները

Որքան էլ մեզ համար անհասկանալի, չտրամաբանված կամ անհիմն լինի երեխայի վարքի այս կամ այն դրսևորումը, երեխայի համար այն ունի իր հստակ նպատակն ու



պատճառները: Հետևաբար՝ եթե մենք ուզում ենք կարգավորել երեխայի վարքը, առաջին հերթին պետք է փորձենք հասկանալ, թե երեխան ինչո՞ւ և ի՞նչ նպատակով է նման վարք դրսևորում:

Ի՞նչ կարող են անել մեծահասակները երեխաների խնդրահարույց վարքի իրական նպատակները որոշելու համար:

II ➡ **Բացահայտել երեխաների բացասական վարքի հիմնական նպատակները**

➡ Երեխաների բացասական վարքի պատճառներն ու նպատակները հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծել սեփական հույզերը:

➡ Եթե անհանգստություն և միևնույն ժամանակ զայրույթ եք զգում, ապա, ամենայն հավանականությամբ, երեխան իր այդ վարքով փորձում է ձեր ուշադրությունը գրավել:

➡ Եթե զայրույթ եք զգում, ապա երեխան, հավանաբար, փորձում է իր իշխանությունը ցույց տալ:

➡ Եթե ձեզ վիրավորված եք զգում, ապա երեխան փորձում է վրեժ լուծել:

➡ Եթե հիասթափված և սպառնված եք զգում, ապա երեխան, հնարավոր է, փորձում է խուսափելու միջոցով արտահայտել իր անհամարժեքության զգացումը:

➡ Եթե շփոթված եք, ապա, հնարավոր է, երեխայի վարքի պատճառը զգայական ծանրաբեռնվածությունն է:

Ինչպիսի՞ն կարող է լինել մեծահասակների արձագանքը

Երեխաների բացասական վարքի դրսևորումների դեպքում մեծահասակները հաճախ կարող են տարբեր միջոցներով փորձել ազդել նրանց վրա և փոխել նրանց վարքը: Այդ միջոցները կարող են լինել ինչպես դրական (օրինակ՝ խրախուսանք, գովեստ) այնպես էլ՝ բացասական (օրինակ՝ պատիժ)⁴³: Պետք է նշել, որ երեխաների բացասական վարքի վերոհիշյալ հիմնական նպատակներից յուրաքանչյուրը, ցավոք սրտի, կարող է երեխային ֆիզիկապես կամ հոգեպես պատժելու պատճառ դառնալ:

Նման իրավիճակներն արդյունավետ կերպով հարթելու համար լավագույն միջոցներն են հանգստություն պահպանելը, փորձելը հասկանալ և հարգել երեխային, դրական դաստիարակչական մոտեցումներ կիրառելը, ակտիվ ունկնդրումը, խրախուսելը, և ինքնատիրապետումը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս «Արդյունավետ ծնողավարում. տեխնիկաներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար» բաժնում:

Ի՞նչ պետք է անեն մեծահասակները երեխային պատժելու փոխարեն

Եթե երեխան **փորձում է ուշադրություն գրավել. Անհրաժեշտ է, որ դուք՝**

⁴³Դրական դաստիարակչական մոտեցումներ. ուղեցույց մանկավարժների համար, Երևան 2018, 155 էջ



Հնարավորության դեպքում չնկատեք այդ վարքը, սակայն երեխային ուշադրություն հասկացնեք, երբ նա դրական վարք է դրսևորում:

- Օգտագործեք տեսողական կոնտակտը:
- Երեխային ուղղորդեք դեպի ավելի դրական վարքաձևերը:
- Երեխային ընտրության հնարավորություն ընձեռեք:
- Պարբերաբար ժամանակ անցկացնեք երեխայի հետ :

Եթե երեխան **իշխանություն է դրսևորում, անհրաժեշտ է, որ դուք՝**

● Աշխատեք պահպանել հանգստությունը, և չներգրավվել իշխանության պայքարի մեջ, հնարավորություն տալով երեխային հանդարտվել: Հիշեք, որ վեճի համար պահանջվում է առնվազն երկու մարդ:

● Միջոցներ ձեռնարկեք երեխային համագործակցության մղելու համար: Զանազան հասկանալի երեխաների զգացմունքները և ցույց տվեք, որ հասկանում եք: Ներապրեք տվյալ իրավիճակի հետ կապված իրենց հույզերը: Այս հանգամանքը հատկապես կարևոր է բոլոր այն դեպքերում, երբ երեխան խոսքային հաղորդակցում չի կիրառում և փորձում է հակադրվող վարքով արտահայտել սեփական հույզերը, զգացմունքներն ու իշխանությունը:

● Օգնեք երեխային հասկանալ, որ նա կարող է իր իշխանությունը և ուժը օգտագործել առավել կառուցողական ձևով, առաջարկեք նրան հնարավոր եղանակներ:

Եթե երեխան **վրեժ է լուծում, անհրաժեշտ է, որ դուք՝**

● Համբերատար լինեք, դուրս գաք հակահարվածների ցիկլից և խուսափեք պատժելուց:

● Ընկերական վերաբերմունք դրսևորեք և սպասեք՝ մինչև երեխան հանդարտվի:

● Խրախուսեք համագործակցությունը: Երեխայի հետ վստահելի հարաբերություններ ստեղծեք:

● Համագործակցեք երեխայի հետ խնդիրները լուծելու ուղղությամբ:

● Խրախուսեք երեխային, ցույց տվեք նրան, որ սիրված և հարգված է :

Եթե երեխան **անհամարժեքության զգացում է արտահայտում, անհրաժեշտ է, որ դուք՝**

● Խուսափեք անհամաձայնություն արտահայտելուց կամ քննադատությունից (նույնիսկ այն դեպքերում, երբ երեխան ունի մտավոր կամ խոսքային զարգացման խնդիրներ, միևնույն է՝ նա ընկալում է խոսքային և ոչ խոսքային միջոցներով իրեն ուղղված բացասական տեղեկույթը (ինֆորմացիան):

● Հաշվի առեք երեխայի զարգացման մակարդակը և հնարավորությունները:

● Երեխային ներկայացվող առաջադրանքը բաժանեք մի քանի փոքր մասերի և օգնեք երեխային սկսել ամենահեշտից՝ նախնական հաջողության համար:

● Խրախուսեք երեխային, կենտրոնացեք երեխայի ուժեղ կողմերի վրա :

● Խուսափեք խղճահարություն կամ չափազանց շատ կարեկցանք արտահայտելուց:



Եթե երեխան **զգայական ծանրաբեռնվածություն է զգում, անհրաժեշտ է, որ դուք՝**

- Ուշադրություն դարձնեք զգայական այն ազդակներին կամ դրանց համակցությանը, որոնց առկայության դեպքում երեխան խնդրահարույց վարք է դրսևորում: Զգայական ծանրաբեռնվածությունը վարքում կարող է արտահայտվել տարբեր կերպ. խուճապային գրոհներին բնորոշ գրգռվածությունից մինչև հուզական անհասկանալի պոռթկումները կամ ագրեսիայի ու ինքնաագրեսիայի դրսևորումները:

- Նվազեցնեք կամ սահմանափակեք ծանրաբեռնող ազդակները: Եթե դրանք ձայնային կամ տեսողական ազդակներ են (բարձր ձայն, երաժշտություն, այլ երեխայի լաց կամ աղմուկ, վառ լույսեր, վառ պատկերներ և այլն), որոնք չեք կարող սահմանափակել, ապա երեխային հնարավորություն տվեք հանգստանալու առավել խաղաղ վայրում, այնտեղ, ուր քիչ, ցանկալի է բնական, լուսավորություն կա: Փորձեք երեխայի համար ապահովել վայր, որտեղ չկա «տեսողական աղբ» և «լսողական աղբ»:

- Նվազեցրեք երեխային ուղղված խոսքը, նրան ավելի շատ ժամանակ տվեք խոսքային տեղեկույթն ընկալելու համար: Կարևոր է, որ համբերատար լինեք: Օգտագործեք հաղորդակցման այլընտրանքային միջոցներ (տե՛ս ձեռնարկի «Երեխաների հաղորդակցման բարելավումը նկարների/սիմվոլների միջոցով» բաժինը):

- Հիշեք, որ թեպետ երեխան նման դեպքերում կարող է նաև ագրեսիա դրսևորել, այդուհանդերձ նա նպատակ չունի ձեզ վնասելու. դրանք ընդամենը ստեղծված իրավիճակից դուրս գալու նրա փորձերն են, որոնք հիմնականում հրահրվում են իրեն դիպչելու, նրա հետ անընդհատ խոսելու կամ հանգստացնելու անհաջող փորձերով:

- Լսեք երեխային. նման դեպքերում, երեխան խոսքային կամ ոչ խոսքային միջոցներով հուշում է, թե ինչը կարող է իրեն հանգստացնել (մեկը կարող է ճոճվել, մեկ ուրիշը ձեռքում կարող է սկսել պտտել որևէ առարկա, երրորդը՝ երգել և այլն): Եթե ինքնահանգստացման նման փորձերում վտանգավոր բան չկա, ապա որոշ ժամանակ մի՛ միջամտեք, և հնարավորություն տվեք երեխային հանդարտվելու:

Առաջարկություններ ընտանիքի հետ աշխատանքի վերաբերյալ

Ընտանիքի հետ իրականացվող ուղղակի կամ անուղղակի որևէ աշխատանքի նպատակը բնականաբար, ծնողական հմտությունների զարգացումն է և ընտանիքի քանքերն ի նպաստ երեխայի զարգացմանն ուղղելը: Կարծում ենք՝ այս տեսանկյունից աշխատանքը հատկապես արդյունավետ կլինի, եթե ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում ծնողներին տրամադրվող մանկավարժական խորհրդատվությունը ներառի մի շարք կարևոր հարցեր, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև.

- Օգնեք ծնողներին հաշվի առնել երեխայի հոգեկան գործընթացների առանձնահատկությունները: Կարևորեք այն հանգամանքը, որ կարիք չկա անընդհատ համեմատելու երեխային իր հասակակիցների հետ, և զարմանալու ու նյարդայնանալու, թե ինչն

վերջիններս «դա» արդեն կարող են անել (ճանաչել գույները, խոսել, հաշվել, նկարել, գրել և այլն), իսկ ձեր երեխան՝ դեռ ոչ: *Խոսեք նրանց հետ այն մասին, որ երեխայի հոգեկան գործընթացները՝* զգայությունները, հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, խոսքն ունեն իրենց առանձնահատկությունները, և դրանց զարգացումը հնարավոր է միայն այդ առանձնահատկությունների շրջանակում:

● *Կարևորեք այն հանգամանքը, որ ծնողները հաշվի առնեն իրենց երեխայի հնարավորություններն ու զարգացման մակարդակը:* Այս առումով ճիշտ ընտրություն կատարելը շատ կարևոր է: Հուշեք ծնողներին, որ նախ և առաջ անհրաժեշտ է ընտրել գործունեության այնպիսի ձևեր և միջոցներ, որոնցով երեխան կարող է հաջողության հասնել: Երեխան հեշտությամբ կկարողանա յուրացնել նոր հմտությունները, եթե դրանց յուրացման ընթացքն իրականացվի քայլ առ քայլ: Այդ իսկ պատճառով, որևէ նոր հմտություն ձևավորելիս սկզբում անհրաժեշտ է օգտագործել պարզ և հեշտ առաջադրանքներ, աստիճանաբար բարձրացնելով դրանց բարդության մակարդակը:

● *Օգնեք ծնողներին սովորել պահպանել գործողությունների ճիշտ հաջորդականություն:* Գոյություն ունեն երկու օգտակար մեթոդներ, որոնք կոչվում են «ուղիղ հաջորդականություն» և «հակառակ հաջորդականություն»: Յուրաքանչյուր ներգործություն կարելի է պատկերացնել շղթայի կամ փոքրիկ քայլերից կազմված հաջորդականության տեսքով: «Ուղիղ հաջորդականության» դեպքում մենք խրախուսում ենք երեխային կատարելու շղթայի առաջին քայլը և գործողությունն ավարտում ենք ինքներս, իսկ «հակառակ հաջորդականության» դեպքում երեխան ավարտում է գործողությունը, որը մենք էինք սկսել: Օրինակ՝ երբ ուզում եք երեխային լվացվել սովորեցնել, կարող եք օգտագործել «ուղիղ հաջորդականությունը». թող երեխան ինքը պահի ձեռքերը ուղիղ ջրի շիթի տակ, իսկ դուք բռնեք նրա ձեռքերը և կատարեք մնացած գործողությունները: Իսկ ահա խճանկար հավաքելիս ավելի հարմար կլինի «հակառակ հաջորդականությունը»: Շարժեք խճանկարի բոլոր մասերը՝ բացի վերջինից: Թող երեխան ինքը դնի վերջին, պակասող պատկերը և վայելի ամբողջական պատկերը ստանալու բերկրանքը:

● *Խոսեք ծնողների հետ այն մասին, թե որքան կարևոր է հաշվի առնել երեխայի հետաքրքրությունները, քանզի այն, ինչ հետաքրքրական է, շուտ է յուրացվում:* Ծնողները կարող են երեխային գործունեության մղելու համար դրդապատճառ գտնել՝ ելնելով նրա հակումներից և հետաքրքրություններից: Առօրյա կյանքը բազմաթիվ հնարավորություններ է տալիս մեզ այս կամ այն հմտությունը ձևավորելու համար, և հաջողությունն արդեն կախված է նրանից, թե որքանով արդյունավետ ու հարմար ձև կգտնենք դա անելու համար:

● *Առաջարկեք ծնողներին, հատուկ ուշադրություն հատկացնել երեխայի անգամ ամենաչնչին ձեռքբերումներին, խրախուսել երեխային նույնիսկ անհաջող փորձերի դեպքում և գովել՝ ամեն անգամ, երբ նա ունենում է որևէ նոր ձեռքբերում:*

● *Խրախուսեք ծնողներին կանգ չառնելու մեկ ձեռքբերման վրա:* Ծնողները երբեմն

սևեռում են ուշադրությունը կոնկրետ հմտության կամ կարողության ձևավորման վրա՝ անտեսելով մի շարք այլ, ոչ պակաս կարևորները: Իհարկե՝ դա կարող է ունենալ իր օբյեկտիվ պատճառները (օրինակ՝ երբ շրջապատողներն անընդհատ հարցնում են. «Դե ինչ, նա դեռ չի քայլում (կամ դեռ չի խոսում)»): Այնուամենայնիվ՝ նման կենտրոնացումը վնասակար է երեխայի համար: Առաջին հերթին այն պատճառով, որ այդ դեպքում մենք մոռանում ենք մյուս հմտությունների կամ կարողությունների մասին, որոնք պակաս կարևոր չեն երեխայի ամբողջական զարգացման համար: Երկրորդ՝ երեխան ամբողջական անձ է և պետք է զարգանա որպես մեկ ամբողջություն:

● Հաճախ հիշեցրեք ծնողներին սեփական երեխային զգալու կարևորության մասին: Երբ ծնողն աշխատում է իր երեխային զարգացնելու ուղղությամբ, միշտ վտանգ կա, որ, տարվելով այդ գործընթացով, երեխայի հաջողություններով, հասակակիցների հետ համեմատություններով և այլն, ծնողները կարող են մոռանալ իրենց երեխայի, որպես սիրո և ջերմության կարիք զգացող էակի, մասին: Կարևոր է, որ երեխայի առաջընթացն ու հաջողությունները (անհաջողություններն՝ առավել ևս) ոչ մի դեպքում չնույնացվեն երեխայի հետ: Առաջարկեք ծնողներին խաղալ երեխայի հետ այն խաղերը, որ նրան դուր են գալիս, կրկնել նրա գործողությունները, մտնել նրա աշխարհ և փորձել հասկանալ, թե ինչ է նա ուզում, ինչի՝ է ձգտում, ինչ տրամադրություն և հույզեր ունի, զերծ մնալով երեխային ամեն կերպ մեր ընկալումների, պատկերացումների, դատողությունների, ցանկությունների և սպասումների աշխարհ մտցնելուց:

ԲԱԺԻՆ 14. ԳԻՏԱԿԻՑ ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Թագուհի Մակարյան, հոգեբան

Սույն բաժնում ներկայացված են երեխայի կյանքում հաճախ հանդիպող տարբեր խնդրահարույց իրավիճակների կանխարգելման և հաղթահարման համար հստակ ցուցումներ, որոնք կուղղորդեն ծնողներին և ՆՈՒՀ մանկավարժներին ծնողավարման գործընթացում:

Նման ուղղորդումներ ներկայացվել են Ա. Բարկանի աշխատությունում, որոնք մեր կողմից վերամշակվել և հարմարեցվել են (Баркан., 1995):

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան սուտ է խոսում

- ➡ բացահայտեք ստախոսության հնարավոր պատճառը և վերլուծեք այն,
- ➡ պարզեք՝ սուտն անմեղ է, թե՞ կանխամտածված. եթե կանխամտածված է, ապա ինչու՞,
- ➡ փնտրեք, թե ի՞նչ է ձեր մեղավորությունը երեխայի ստախոսության մեջ,
- ➡ գնահատեք ձեր պահանջները երեխայի հանդեպ,
- ➡ պարզեք՝ ի՞նչ է եղել ստախոսությունից տուժողը. դուք, երեխան, թե՞ կողմնակի անձինք,
- ➡ մտաբերեք՝ չեն եղել դեպքեր, երբ ինքներդ եք խթանել, որ երեխան ստի,
- ➡ բացահայտեք՝ ինչ տեղեկույթ է թաքնված երեխայի ստի ներքո,
- ➡ պարզեք՝ սուտը պաշտպանվելու միջոց է, երևակայության արդյուն՞ք, թե՞ փրկության միջոց,
- ➡ դիտեք ձեզ կողքից և փորձեք օբյեկտիվորեն գնահատել իրավիճակը,
- ➡ փորձեք պարզել՝ արդյո՞ք երեխան տանն իրեն օտարացած չի զգում,
- ➡ պարզեք՝ արդյոք շեշտու՞մ եք ձեր գերակայությունը երեխայի հանդեպ ձեր բազմաթիվ «չի կարելի»- ներով,
- ➡ պարզեք՝ արդյոք չե՞ք համեմատում նրան ձեր մյուս երեխաների հետ՝ նպաստելով երեխայի մեջ խանդի, դժգոհության և անառողջ մրցակցության ձևավորմանը,
- ➡ փորձեք հիշել՝ երբևէ իջեցրե՞լ եք նրա ինքնագնահատականը,
- ➡ պարզեք ինքներդ ձեզ համար՝ նա իրավունք ունի՞ ասելու «դառը» ճշմարտությունը՝ որպես բացասական հույզերից ազատվելու ելք,
- ➡ գնահատեք՝ արդյոք երեխան չափից շատ ծանրաբեռնված չէ՞ առօրյա հոգսերով ու գործերով,
- ➡ գնահատեք՝ արդյոք չափազանցված չեն երեխային ուղղված ձեր դիտողությունները,

- ➡ գնահատե՛ք՝ արդյո՞ք հաճախ չեք մխրճվում երեխայի անձնական աշխարհի մեջ,
- ➡ մտաբերե՛ք՝ արդյո՞ք երեխան չի կրկնօրինակում ձեզ՝ հանդես գալով որպես անսպասելի վկա, երբ դուք ինքներդ եք շահարկել սուտը՝ համարելով այն մանրուք,
- ➡ գնահատե՛ք՝ արդյո՞ք երեխայի մեջ թշնամություն չի առաջանա անընդմեջ նրան պատժելուց կամ պատիժը կանխարգելիչ նպատակով կիրառելուց,
- ➡ երեխայի ստախոսության պատճառը հայտնաբերելուն պես, անմիջապես փնտրե՛ք ելքեր նրան օգնելու,
- ➡ երեխային բերեք այն գիտակցման, որ «լավ է դառը ճշմարտությունը, քան՝ քաղցր սուտը»,
- ➡ երեխային ազնիվ դաստիարակելու համար պետք է ինքներդ չափազանց ազնիվ լինեք,
- ➡ երեխայի հոգսերը պետք է լինեն իր տարիքային սահմանում:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան սուտ է խոսում

- ➡ պետք չէ անվերջ ամոթանք տալ երեխային նույնիսկ կանխամտածված ստելու համար,
- ➡ պետք չէ ամեն ճանապարհով ստիպել երեխային գիտակցել և խոստովանել սուտը՝ այն ավելի կարևոր համարելով, քան՝ ստի տակ թաքնված պատճառը,
- ➡ պետք չէ ծեծել երեխային ստախոսության համար՝ առանց պարզելու՝ որն է ճիշտը,
- ➡ պետք չէ հետևել երեխայի յուրաքանչյուր քայլին, փորձելով «բռնել սուտը», և ծիծաղել նրա վրա,
- ➡ պետք չէ երեխայի ստախոսության մասին պատմել բոլորին,
- ➡ պետք չէ նրան պատժել՝ ավելացնելով նրա հանդեպ պահանջները,
- ➡ պետք չէ անընդմեջ վախեցնել նրան «թե չէ կպատժեմ» պայմանականությամբ,
- ➡ պետք չէ ամեն ինչ անել երեխայի ինքնագնահատականը իջեցնելու համար,
- ➡ պետք չէ հայտարարել, որ դադարում եք այսուհետ սիրել նրան,
- ➡ պետք չէ դիտավորյալ մրցակցություն և խանդ առաջացնել քրոջ կամ եղբոր հանդեպ՝ համեմատելով նրան մյուսների հետ,
- ➡ պետք չէ նրա ներկայությամբ ստել՝ իբր թե դա մանրուք է և ոչ թե սուտ,
- ➡ պետք չէ չարաշահել «չի կարելի» - ները,
- ➡ պետք չէ ձեր զայրույթով ճնշել երեխային, եթե դեռ պարզ չէ երեխայի ստելու պատճառը,
- ➡ պետք չէ փնտրել երեխայից իրավունք պահանջելու ձևեր. նա հանցագործ չէ, այլ՝ դեռ ոչ հասուն և անփորձ երեխա,
- ➡ պետք չէ ստիպել երեխային, երբ նա հրաժարվում է ճանաչել իր սուտը. նրան ավելի լավ է ծանոթացնել ստի վտանգավոր հետևանքներին և ազնիվ լինելու առավելությանը,
- ➡ պետք չէ ծուղակ զցող հարցեր ուղղել երեխային, երբ ինքներդ արդեն պարզել եք ստախոսության պատճառը:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան գողություն է անում

- ➡ փորձե՛ք գտնել «գողություն անելու» հնարավոր պատճառը, որքան էլ այն շատ թաքնված լինի,
- ➡ երեխային հասանելի ձևով բացատրեք, որն է «իմ»- ի և «ոչ իմ»-ի տարբերությունը, եթե երեխան «տարիքային գող» է,
- ➡ երեխայի հետ միասին հանձնե՛ք «գողացված» իրը տիրոջը, բայց՝ այնպես, որ երեխան չամաչի դրանից,
- ➡ փորձե՛ք բացատրել երեխային, որ միայն իր իրերը կարող է վերցնել առանց թույլտվության, իսկ ուրիշներինը՝ միայն թույլտվություն ստանալու դեպքում,
- ➡ սովորեցրե՛ք երեխային տարբերակել անձնական սեփականությունը հասարակական սեփականությունից,
- ➡ խորհե՛ք փոքր-ինչ՝ արդյո՞ք հերիքում է ձեր սերը երեխային. շտապե՛ք լրացնել պակասը,
- ➡ սովորեցրե՛ք երեխային պատասխանատու լինել սեփական վարքի համար,
- ➡ երեխան պետք է իմանա, որ «գողությունը» միշտ էլ բացահայտվում է, իսկ դա ավելի տհաճ է, քան՝ նախապես խոստովանելը,
- ➡ եթե դուք երեխայի «գողության» անսպասելի վկան եք եղել, այդ մասին անկեղծորեն պատմեք երեխային,
- ➡ երեխան պետք է իմանա, որ մայրիկն ու հայրիկը միշտ դեմ են գողությանը

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան գողություն է անում

- ➡ պետք չէ ընտանիքում ստեղծել արտակարգ իրավիճակ,
- ➡ պետք չէ դուրս բերել բացասական հույզերի տարափ,
- ➡ պետք չէ ճչալ, ծեծել և «հանցագործ» անվանել երեխային (առավել ևս՝ ուրիշների ներկայությամբ),
- ➡ պետք չէ բոլորին հայտարարել այդ մասին,
- ➡ պետք չէ դա ընկալել՝ որպես երեխայի հետ կատարված անուղղելի դիպված,
- ➡ պետք չէ շարունակ պնդել, որ չեք սիրում նրան,
- ➡ պետք չէ՝ անընդմեջ ինքներդ ձեզ հարցնեք՝ «ինչո՞ւ նա դա արեց», «ինչո՞ւ այդպես վարվեց»,
- ➡ պետք չէ զրկել երեխային այն բանից, ինչի կարիքը նա շատ ունի այսօր,
- ➡ պետք չէ թույլ տալ երեխային առանց թույլտվության վերցնել եղբոր, քրոջ կամ ծնողների իրերը,
- ➡ պետք չէ ցույց տալ երեխային, որ ձեզ համար միևնույնն է, որ նա ինչ-որ բան վերցրեց առանց հարցնելու,
- ➡ պետք չէ գայթակղել երեխային՝ անհասանելի հասանելի դարձնելով,
- ➡ պետք չէ ուշադրություն չդարձնել, թե ո՞ւմ հետ է շփվում երեխան,
- ➡ պետք չէ երեխայի ներկայությամբ պատմել, թե ինչպես եք «հաջողեցրել» տիրանալ

որևէ մեկի իրերին,

- ➔ պետք է խոսքով կամ առանց խոսքի հաստատել նրա արարքը,
- ➔ պետք է ուշադրություն չդարձնել և չդիմել մասնագետի, երբ ձեր երեխան

շարունակ գողանում է:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան նյարդային է

- ➔ փորձեք բացահայտել երեխայի նյարդային լինելու պատճառը և վերացնել այն,
- ➔ վերանայեք ձեր հարաբերություններն ընտանիքի անդամների հետ,
- ➔ վերազնահատեք ձեր և երեխայի միջև փոխհարաբերությունները,
- ➔ ժամանակին նախապատրաստեք երեխային նորաձնի լույս աշխարհ գալուն՝ խուսափելով մյուս երեխայի հանդեպ նրա մեջ խանդ առաջացնելուց (եթե կա այդպիսի հնարավոր պատճառ),
- ➔ փորձեք հասկանալ երեխային՝ երբեմն նրա տեսանկյունից նայելով նույնիսկ ամենահիմար արարքին,
- ➔ օգնեք երեխային հեշտությամբ հաղթահարել իր տարիքային ճգնաժամերը,
- ➔ փորձեք հաղթահարել ձեր իսկ նյարդայնությունը և խուսափեք դա երեխայի մոտ դրսևորելուց,
- ➔ աշխատեք ցույց չտալ ձեր իսկ վախերը՝ հնարավորինս դրանք հաղթահարելով:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան նյարդային է

- ➔ պետք է հատուկ պայմաններ ստեղծել երեխային նյարդայնացնելու համար,
- ➔ պետք է ստիպել երեխային բոլորին սիրել միանման,
- ➔ պետք է վտանգել երեխայի ինքնասիրությունը և անտեսել նրա արժանիքները,
- ➔ պետք է կառավարել երեխային,
- ➔ պետք է երեխայից պահանջել իր ուժերից և կարողություններից ավելին,
- ➔ պետք է չարաշահել «կարելի»-ն և «չի կարելի»-ն,
- ➔ պետք է երեխային օգտագործել որպես միջոց ընտանեկան վեճերը կանխարգելելու համար,
- ➔ պետք է երեխայի հետ հարաբերություններում լինել լարված, գրգռված և նյարդային:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ունի վախեր

- ➔ փորձեք պարզել վախի պատճառները,
- ➔ ընդունեք, որ վախն ունի չգիտակցված բնույթ,
- ➔ համակերպվեք այն մտքին, որ երեխան դժվար թե կարողանա կառավարել իր վարքը վախի ներքո, ուստի ձեր դիտողություններն անարդյունավետ կարող են լինել,
- ➔ համբերատար եղեք երեխայի վախի և վերջինիս հաղթահարման հանդեպ,
- ➔ փորձեք լինել երեխայի կողքին հատկապես այն ժամանակ (երբ վախը

կառավարում է նրան, երբ մուտ է, երբ փակ տարածություն է և այլն), երբ երեխան վախենում է միայնակ քնել, թույլ տվեք նրա հետ քնի իր ամենասիրելի խաղալիքը,

- ➡ դերային խաղ խաղացեք երեխայի հետ, որտեղ նա ուժեղի և անվախի դերում է,
- ➡ փորձեք խաղի միջոցով երեխայի աչքին ծիծաղելի դարձնել իր իսկ վախը,
- ➡ պայմաններ ստեղծեք, որ երեխան նկարի իր վախն այնքան մինչև դա անհետանա,
- ➡ վախի հաղթահարման յուրաքանչյուր միջոց ընտրելիս հիշեք, որ այն պետք է համապատասխանի երեխայի անհատական առանձնահատկություններին:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ունի վախեր

- ➡ պետք է երեխայի վախերը կիրառել որպես նրան պատժելու կամ նրան ենթարկեցնելու միջոց,
- ➡ պետք է անտարբեր լինել երեխայի վախի և նրա հաղթահարման հանդեպ,
- ➡ պետք է փոխանցել սեփական վախերը երեխային,
- ➡ պետք է ծանրաբեռնել երեխայի երևակայությունը սարսափելի հեքիաթներով և պատմություններով,
- ➡ պետք է անընդմեջ երեխային հիշեցնել իր վախի մասին,
- ➡ պետք է ամոթանք տալ երեխային վախենալու համար,

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ունի մնասակար սովորություններ

- ➡ փորձեք հասկանալ երեխային,
- ➡ երեխայի համար ստեղծեք հնարավորինս ապահով միջավայր,
- ➡ խրախուսեք երեխայի ցանկալի արարքը,
- ➡ փորձեք պարզել՝ ինչին է հաջորդում մնասակար սովորությունը,
- ➡ անտեսեք, մի՛ արձագանքեք երեխայի մնասակար սովորությանը
- ➡ հետաքրքրական դարձրեք երեխայի առօրյան,
- ➡ դերային խաղ խաղացեք երեխայի հետ՝ երեխայի անհանգստությունների և լարվածության պատճառները դուրս բերելու նպատակով,
- ➡ ընդլայնեք երեխայի շփումը,
- ➡ բազմազանեք խաղալիքները,
- ➡ նվազեցրեք մտավոր ծանրաբեռնվածությունը,
- ➡ սահմանափակեք գայթակղիչ ֆիլմերի դիտումը և «սարսափ» հեքիաթների ընթերցումը,
- ➡ սահմանափակեք աղմկոտ միջոցառումներին երեխայի մասնակցությունը:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ունի մնասակար սովորություններ

- ➡ պետք է բարկանալ երեխայի վրա,
- ➡ պետք է պատժել երեխային,

- ➡ պետք չէ անընդմեջ արգելել երեխային դա անել,
- ➡ պետք չէ անընդհատ վերահսկել և կառավարել երեխային,
- ➡ պետք չէ կապել մատները կամ ինչ-որ քսուքով պատել,
- ➡ պետք չէ վախեցնել երեխային «քեզ էլ չեմ սիրի» արտահայտությամբ:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան գերակտիվ է

- ➡ երեխայի համար ստեղծեք խիստ ռեժիմային պայմաններ (սնունդ, քուն, խաղ, դաս)
- ➡ ձգտեք այնպես անելու, որ ձեր երեխայի ընկերների շրջանում չլինեն գերակտիվ երեխաներ,
 - ➡ նպաստեք երեխայի ֆիզիկական ակտիվությունն ապահովող խաղերին,
 - ➡ ձգտեք, որ ձեր երեխան հասկանա խաղի նպատակը, կանոնները և փորձի պահպանել դրանք,
 - ➡ ձգտեք այնպես անել, որ ձեր երեխան կարողանա պլանավորել իր խաղը, որը հետագայում իր վարքում սովորության կվերաձվի ,
 - ➡ նպաստեք, որ երեխան հաճախի իր տարիքին և խառնվածքին համապատասխան մարտական խմբակներ, որտեղ հնարավորինս կազատվի էներգիայի ավելցուկից,
 - ➡ ձգտեք, որ երեխան խաղա ոչ աղմկոտ խաղեր (լոտո, դոմինո), որոնք կօգնեն նաև ուշադրության կենտրոնացմանը,
 - ➡ փորձեք գրավել երեխային հեքիաթների ընթերցմամբ և նկարչությամբ,
 - ➡ ցանկալի է, որ երեխան խաղա միայն մեկ խաղալիքով, պետք չէ նրա ուշադրությունը հրավիրել այլ խաղալիքների վրա,
 - ➡ համբերատար եղեք երեխայի հանդեպ,
 - ➡ հնարավորինս սահմանափակեք հեռուստացույց դիտելը,
 - ➡ եղեք հետևողական ձեր խրախուսանքներում և պատիժներում,
 - ➡ զգուշությամբ կիրառեք «կարելի»-ն և «չի կարելի»-ն:

Ինչպես պետք չէ վարվել, երբ երեխան գերակտիվ է

- ➡ պետք չէ երեխայի գերակտիվությունը դիտարկել որպես երեսառածություն,
- ➡ պետք չէ երեխային արգելել կամ թույլ տալ ամեն ինչ,
- ➡ պետք չէ հատուկ ծանրաբեռնել երեխային հեռուստահաղորդումներով,
- ➡ պետք չէ երեխային տանել աղմկոտ վայրեր,
- ➡ պետք չէ զայրանալ, երբ երեխան ամեն ինչ հակառակն է անում,
- ➡ պետք չէ, որ երեխան դիտի ագրեսիվ տեսարաններով «սարսափ» ֆիլմեր,
- ➡ պետք չէ երեխային այնպիսի առաջադրանքներ տալ, որոնք իր ուժերից վեր են,
- ➡ պետք չէ չարաշահել «չի կարելի»-ն,
- ➡ պետք չէ անտեսել այն կոնֆլիկտները (բախումները), որտեղ «մեղավորը» ձեր երեխան է,
 - ➡ պետք չէ միաժամանակ և պատժել, և խրախուսել,



- ➡ պետք է ծիծաղել երեխայի՝ այսպես կոչված «երեսառածության» վրա,
- ➡ պետք է խրախուսել երեխային՝ չհնազանդվելու համար:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ամաչկոտ է

- ➡ ամեն ինչ այնպես արեք, որ երեխան իրեն զգա պաշտպանված և ապահով,
- ➡ բարձրացրեք երեխայի ինքնագնահատականը,
- ➡ խրախուսեք և օբյեկտիվորեն հաճախ հաճոյախոսեք երեխային,
- ➡ ձևավորեք ինքնավստահություն,
- ➡ սովորեցրեք երեխային համարձակ քայլերի դիմել և փորձել ինքնուրույն հաղթահարել դժվարությունները,
- ➡ բացահայտեք երեխայի ուժեղ կողմերը և հենվեք դրանց վրա,
- ➡ ձևավորեք և զարգացրեք երեխայի շփման հմտությունները,
- ➡ ընդլայնեք հասակակիցների հետ երեխայի շփման ոլորտը,
- ➡ փորձեք գտնել նրա համար այնպիսի ընկեր, որը կպաշտպանի նրան հասակակիցների շրջանում,
- ➡ օգնեք երեխային, որ ինքն իրեն անկրկնելի համարի,
- ➡ հովանավորեք երեխային,
- ➡ ապրումակցեք նրա զգացումները,
- ➡ ստեղծեք վստահության գոտի ծնող-երեխա փոխհարաբերություններում,
- ➡ զգույշ և ջերմ վերաբերվեք երեխային:

Ինչպես պետք է վարվել, երբ երեխան ամաչկոտ է

- ➡ պետք է վանել երեխային՝ կիրառելով դաստիարակության ավտորիտար (անքնիշխանական) ոճը,
- ➡ պետք է համեմատել երեխայի արտաքին տեսքը ուրիշների հետ,
- ➡ պետք է գեղեցկության տեսանկյունից գնահատել երեխայի առավելությունները,
- ➡ պետք է բարձրաձայն քննադատել երեխային,
- ➡ պետք է ստեղծել իրավիճակ, որտեղ երեխան իրեն թերարժեք կզգա,
- ➡ պետք է երեխային «ամաչկոտ» անվանել,
- ➡ պետք է ընդգծել երեխայի թերարժեքությունը,
- ➡ պետք է արգելել նրան խաղալ կամ շփվել հասակակիցների հետ,
- ➡ պետք է ծիծաղել երեխայի վրա՝ հատկապես ուրիշների ներկայությամբ,
- ➡ պետք է պատժել երեխային իր ամաչկոտության համար,
- ➡ պետք է ընդգծել երեխայի անպաշտպանությունն ու կախվածությունը ձեզանից:

Այսպիսով՝ ծնողական, ինչպես նաև մանկավարժական կառուցողական հովանավորությունը և աջակցությունը երեխային, դրական դիրքորոշումը նրա անձի և հնարավորությունների հանդեպ, հարգանքն ու անկեղծությունը փոխհարաբերություններում, երեխայի համար առողջ օրինակ լինելը արդյունավետ ծնողավարման գրավականն են:

ԲԱԺԻՆ 15. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԾՆՈՂԱՎԱՐՈՒՄ. ՏԵԽՆԻԿԱՆԵՐ ՆՍԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թագուհի Մակարյան, հոգեբան

Սույն բաժնում ներկայացված է ծնող-երեխա արդյունավետ փոխհարաբերությունների կարևորությունը երեխայի հոգեբանական զարգացման գործընթացում: Մանկավարժների համար, արդյունավետ ծնողավարման համապեքստում, առաջարկվում է գործնական խորհուրդների շարք, որոնք կնպաստեն կառուցողական համագործակցությանը և ծնողներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով իրազեկելուն: Այն կծառայի որպես մանկավարժների և ծնողների համար ուղեցույց, որում ամփոփված են ծնողավարման հակիրճ ցուցումներ:

Ծնող-երեխա փոխհարաբերությունների բնույթը որոշիչ դեր ունի երեխայի հոգեկան զարգացման գործում: Ուստի, եթե մենք ցանկանում ենք դրականորեն անդրադառնալ երեխայի հոգեկան զարգացման գործընթացին, ապա պետք է համապատասխանաբար հոգանք բոլոր երեխաների հոգեկան առողջության համար և՛ ոչ թե միայն նրանց, ովքեր արդեն մասնագիտական աջակցություն են պահանջում: Դրա համար անհրաժեշտ է որոշակի հոգեբանական գիտելիքներով և հմտություններով զինել ծնողներին:

Այս փորձը ծնողներին հաղորդելու ամենաարդյունավետ հնարներից է մանկավարժ-ծնող արդյունավետ համագործակցությունը: Այն, թե ինչպես են գնահատում իրենց ծնողները, իրենց զգացողությունները՝ կապված սեփական անձի, իրենց, որպես ծնողի հանդեպ, անմիջականորեն անդրադառնում է իրենց և երեխաների, հաճախ նաև իրենց և մանկավարժների փոխհարաբերությունների վրա: Երբ ծնող-երեխա փոխհարաբերություններում խնդիրներ են առաջանում, ծնողները սովորաբար սկսում են մեղադրել իրենք իրենց և հաճախ սկսում են կասկածել իրենց ծնողական գործառույթի իրացման սեփական հնարավորությունների վրա՝ երբեմն նաև մեղադրելով երեխայի հետ աշխատող մասնագետներին:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնող-երեխա փոխհարաբերությունների արդյունավետությունը, անկասկած, անդրադառնում է երեխայի զարգացման վրա և այդ հարաբերություններում գլխավոր գործոնն են հանդիսանում ծնողի դիրքորոշումը իր իսկ անձի հանդեպ, իրեն որպես ծնող ընկալելը և որպես ծնող դրսևորելը (Захарова Е.И., 2010):

Երբ ծնողը դիմում է երեխայի հետ աշխատող մասնագետի աջակցությանը, կարևոր է նախ և առաջ վերականգնել ծնողի ինքնավստահությունը, հավատը, որ նա



միայնակ չէ և կարող է վերանայել իր մոտեցումները երեխայի հանդեպ, հասկանալ և ընդունել նրան այնպիսին, ինչպիսին որ կա, և դրականորեն ազդել նրա զարգացման գործընթացի վրա: Կարծում ենք՝ դրանք փոխկապակցված գործընթացներ են, և, **ծնողին օգնելով, օգնում ենք երեխային, երեխային օգնելով՝ օգնում ենք ծնողին:**

Այս ամենի կապակցությամբ, երեխայի հետ աշխատող յուրաքանչյուր մանկավարժ՝ տեղեկացված լինելով երեխայի հոգեբանական զարգացմանն առնչվող գիտելիքներին և հմտություններին, կկարողանա օգնել ծնողներին իրենց ծնողավարման գործընթացում՝ ապահովելով մանկավարժ-ծնող արդյունավետ համագործակցություն:

||▶ Ծնող-երեխա ոչ արդյունավետ փոխհարաբերությունների պատճառներն են՝

- ▶ ծնողավարման գործընթացում ընտանիքի անդամների ոչ բավարար համախմբվածությունն ու ներքին տարաձայնությունները,
- ▶ երեխային ներկայացվող պահանջների և սահմանափակումների հարցում ոչ հետևողական լինելը,
- ▶ հաճախակի քննադատություններն ու պատիժները,
- ▶ հոգեբանամանկավարժական գիտելիքներին ծնողների ոչ համապատասխան տիրապետելը,
- ▶ դաստիարակության մեջ կարծրատիպերը,
- ▶ դաստիարակության ոչ արդյունավետ ոճը,
- ▶ ծնողների անձնային խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնք տեղափոխվում են երեխայի հետ փոխհարաբերությունների դաշտ,
- ▶ երեխայի հետ ոչ արդյունավետ շփումը :

Որո՞նք են ծնողավարման դրդապատճառները

||▶ Ծնողավարման դրդապատճառները կարելի է բաժանել երեք խմբի (Քարաբանովա Օ.Ա., 2005).

- Երեխան՝ որպես արժեք,
- սոցիալական դրդապատճառներ,
- գործիքային դրդապատճառներ:

Երեխան՝ որպես արժեք: Ծնողավարման այս դրդապատճառը ենթադրում է երեխայի հանդեպ խոր սերը, երեխայի հետ սերտ կապվածությունը, հուզական կապը, երեխային որպես կյանքի իմաստ ընկալելը: Երեխան ծնողի կողմից արժևորվում է որպես անձնավորություն, երեխա-ծնող հարաբերությունները կառուցվում են իրավահավասար համակարգում՝ նպաստելով կողմերից յուրաքանչյուրի անձնային աճին: Այս դրդապատճառի հիմքում ընկած է նշանակալի մեկի հետ հուզական դրական կապեր հաստատելու անձի բնական պահանջմունքը: Հաճախ հենց այդ դրդապատճառն է ընկած ծնողավարման հիմքում:

||▶ Այս դրդապատճառի ռիսկային կողմերն են.

Ռիսկ 1. Ծնողավարման ընթացքում հաճախ դժվարություններ, խնդիրներ են առաջանում այն դեպքում, երբ այդ նշանակալի մեկը դառնում և մնում է միայն երեխան, որի հանդեպ դրսևորվում է այդ պահանջմունքը: Նման խնդիրներ առավել շատ հանդիպում են ոչ լրիվ ընտանիքներում, երբ ծնողի շփումներն ու նպատակները սահմանափակվում են միայն երեխայի վրա կենտրոնացվածությամբ, և երեխային է փոխանցվում ծնողի բոլոր հույզերն ու ապրումները:

Ռիսկ 2. Ծնողավարման գործընթացում ծնողի և երեխայի հուզական կապի այնպիսի դրսևորումը, երբ ծնողն այնքան է տարվում ծնող-երեխա հարաբերություններով, որ առաջ է գալիս հուզական կախվածություն միմյանցից:

Ռիսկ 3. Քանի որ երեխան գերարժեք, գերնպատակ է ծնողի կյանքում, որոշակի փուլում՝ ծնողավարման գործընթացի ավարտից հետո, ծնողների մեջ երբեմն հարուցում է էկզիստենցիալ (գոյաբանական) խնդիրներ: Ծնողը բախվում է կյանքի իմաստի, ունայնության, պիտանիության զգացման կորստին, դատարկությանը:

Սոցիալական են համարվում դաստիարակության այն դրդապատճառները, որոնք կապված են պարտքի զգացման և սոցիալական ինքնահաստատման հետ: Այս դրդապատճառի առանձնահատկությունն այն է, որ երեխայի դաստիարակությունը համարվում է ծնողների ձեռքբերումը՝ որպես իրենց սոցիալական կոչում և նոր կարգավիճակ: Այստեղ առաջին պլանում է ծնողի ձգտումը լինելու իդեալական, օրինակելի և անսխալ:

||▶ Այս դրդապատճառի ռիսկային կողմն է. երեխան դառնում է դաստիարակության օբյեկտ և ոչ թե սուբյեկտ:

Գործիքային դրդապատճառները միավորում են դաստիարակության գործառույթի բոլոր դրդապատճառները:

||▶ Այս դրդապատճառի ռիսկային կողմն է. երեխան հանդես է գալիս որպես միջոց ծնողների այլ պահանջմունքները բավարարելու համար:

Ըստ էության՝ երեխային որոշակի հատկանիշներով դաստիարակելու դրդապատճառը պայմանավորված է նրանով, թե ինչպիսին է ծնողի՝ իդեալական երեխա դաստիարակելու մոդելը, այսինքն՝ ինչպիսին է ուզում տեսնել երեխային: Գիտակցված ծնողավարումը ցանկալի է կառուցել իդեալների, մշակութային նորմերի և արժեքների հիմքի վրա, բայց կարևորելով երեխայի հետաքրքրությունները և անհատականությունը: Ստորև ներկայացված խորհուրդները կաջակցեն շրջանցելու արդյունավետ ծնողավարման ռիսկերը և կառուցելու գիտակցված և կառուցողական ծնող-երեխա փոխհարաբերություններ:

Գործնական խորհուրդներ մանկավարժների և ծնողների համար

II ➡ *Ինչպես արդյունավետ հաղորդակցվել ու համագործակցել երեխայի և ծնողի հետ*

Արդյունավետ ծնողավարման հետաքրքրական մոդել է առաջարկել հումանիստական ուղղության ներկայացուցիչ Տ. Գորդոնը: Համաձայն Տ. Գորդոնի՝ ոչ միայն մարդկային փոխհարաբերությունների, այլ նաև երեխա-ծնող փոխհարաբերությունների ոլորտում արդյունավետ շփման և հաղորդակցման կարևորագույն գրավականներ են երեխայի հանդեպ էմպաթիկ (ապրումակցային) վերաբերմունքը և նրան լսելու կարողությունը, որը հոգեբանության մեջ անվանում են ակտիվ լսելու տեխնիկա (Гордон Т., 1997):

Ակտիվ լսելու տեխնիկա

Ծնող-երեխա, մանկավարժ-ծնող փոխհարաբերություններում հաճախ դիտարկվում է կոնֆլիկտի հաղթահարման երկու ռազմավարություն:

Ծնողների (նաև մանկավարժների) մի մասը փոխհարաբերություններում ընտրում է «ես հաղթողն եմ՝ դու պարտվողն ես», կամ «դու հաղթողն ես՝ ես պարտվողն եմ» մոտեցումները, իսկ մի երրորդ մաս մոլորվում է այդ երկու մոտեցումների միջև (Гордон Т., 1997): Առաջարկվում է ծնող-երեխա, մանկավարժ-ծնող փոխհարաբերությունների կառուցման երկու մոտեցումների փոխարեն դիտարկել արդյունավետ մի երրորդ մեթոդ, այն է՝ «և՛ ինձ, և՛ քեզ»: Այն անշահախնդիր է, երեխա-ծնող, մանկավարժ-ծնող փոխհարաբերություններում լուրջ դիրքորոշումներ է փոխում:

Մեթոդն արդյունավետ է, քանի որ՝

- Փոխհարաբերությունները կառուցվում են առանց ճնշումների:
- Մեթոդը մոտիվացնում (շարժառթափորում) է երեխային և ծնողին՝ խնդրահարույց իրավիճակում արագ լուծումներ գտնելու:
- Նպաստում է միմյանց հանդեպ վստահության, փոխհամաձայնության և համագործակցության առաջացմանը:
- Ծնողը և երեխան կամ մանկավարժը և ծնողը համատեղ լուծում են իրենց առջև դրված խնդիրը:
- Ունի թերապևտիկ ազդեցություն:
- Չկան առաջնորդներ, կան երկու իրավահավասար կողմեր:

Մեթոդի կիրառման համար առաջարկում ենք վեց հիմնական քայլեր, որոնք են.

- ➡ որոշակիացնել կոնֆլիկտը,
- ➡ վերհանել այլընտրանքային հնարավոր լուծումներ,
- ➡ գնահատել այդ լուծումները,
- ➡ ընտրել ամենահավանականն ու կիրառելին,
- ➡ գտնել այն կյանքի կոչելու ելքեր,
- ➡ հետևել և գնահատել՝ ինչպես է աշխատում այդ որոշումն իրական կյանքում:

Մեթոդը կարևորում է, առանց գնահատականների երեխային և ծնողին լսելը, սեփական զգացմունքներն արտահայտելը:

Ինչ է նշանակում երեխային լսել

Ակտիվ լսելու տեխնիկան հաղորդակցման յուրահատուկ ձև է՝ երբ մեծահասակը՝ ծնողը կամ մանկավարժը, հրաժարվում է երեխայի անձը պիտակավորել, վարքին գնահատականներ տալ, քննադատել կամ բացատրություններ, խորհուրդներ տալ, այլ կենտրոնանում է երեխային հնարավորինս հասկանալու, նրա ապրումները և հուզական վիճակը նկարագրելու կամ յուրօրինակ ձևով վերարտադրելու վրա:

Այս տեխնիկայի հիմնական գործառույթն այն է, որ էմպաթիկ վերաբերմունքի (ապրումակից լինելու) միջոցով ծնողն իր խոսքում առարկայացնի այն զգացումներն ու ապրումները, ինչ զգում է երեխան: Սա հնարավորություն է տալիս երեխային ապահով միջավայրում, վերացարկվելով իր խնդրից, կողքից դիտարկելու իրավիճակը և, սեփական զգացումները գիտակցելով, խնդրի հաղթահարման ելքեր գտնելու:

Ակտիվ լսելու տեխնիկան ունի դրսևորման երկու ձև՝ խոսքային /վերբալ/ և ոչ խոսքային /ոչ վերբալ/: Ոչ խոսքային դրսևորման ձև կարող ենք համարել ծնողի կամ մանկավարժի հետաքրքրված հայացքը, լուռ, առանց ընդհատելու լսելը, խոսքի մեղմությունը, տարածական որոշակի հեռավորությունը և այլն: Խոսքային դրսևորման ձև կարող ենք համարել երեխայի բառերը կրկնելը, մտքերին, զգացմունքներին արձագանքելը, երեխայի ներկայացրածի սահմանում նրա ապրումները վերարտադրելը, խոսքայնացնելը և այլն:

Ինչու՞ է կարևոր ակտիվ լսելու մեթոդը

Այս մեթոդը կարևոր է, քանի որ՝

- նպաստում է զգացմունքների դուրս բերմանը (կատարսիսի էֆեկտ),
- օգնում է ծնողին կամ երեխային բացասական հույզերն առանց վախի արտահայտել (երբ ցույց ենք տալիս, որ ընդունում ենք երեխայի բացասական հույզը, օգնում ենք, որ ինքն իր հույզը ևս ընդունի),
- ստեղծում է ջերմության, վստահության մթնոլորտ ծնող-երեխա, մանկավարժ-ծնող փոխհարաբերություններում,
- հեշտացնում է ծնողի կամ երեխայի որոշում կայացնելու գործընթացը,
- երեխան կամ ծնողը ոչ մրցակցային միջավայրում ցանկանում են լսել միմյանց կարծիքներ, տեսակետներ:

Ակտիվ լսելու տեխնիկայի ռիսկերը

Ինչպես մյուս մեթոդներն ու տեխնիկաները, այս տեխնիկան ևս կարող է ունենալ ոչ միայն ուժեղ, այլև թույլ կողմեր կամ ռիսկեր: Հաճախ, ծնողները, որպեսզի հասնեն

Երեխայի վարքում ցանկալի արդյունքի, գիտակցված կամ չգիտակցված ձևով կիրառում են վարքի մանիպուլյատիվ (մտաշահարկող) տարրեր, վերջինս բախվում է երեխայի դիմադրությանը: Լինում են իրավիճակներ, որ ծնողները, երբեմն նաև մանկավարժները մեխանիկորեն են արձագանքում երեխայի գործողություններին՝ առանց էմպաթիկ վերաբերմունքի, ինչը հայտնի է «ծնող-թութակ» անվանումով, կամ, երբ ծնողները փորձում են կիրառել տեխնիկան ոչ հարմար կամ ոչ համապատասխան իրավիճակում: Դա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ երեխան պատրաստ չէ խոսելու իր զգացմունքների մասին նույնիսկ էմպաթիկ վերաբերմունքի պայմաններում, բայց ծնողը դրդում է (Гордон Т., 1997) :

Ծնողական առողջ մտրեցումը ենթադրում է՝

- երեխայի անձնային ներուժի զարգացման վրա արդյունավետ ազդեցություն,
- երեխայի մեջ որոշում կայացնելու հմտության ձևավորում,
- կառուցողական վարքի մոդելավորում,
- պատիժ-խրախուսանքի արդյունավետ կիրառում,
- երեխայի անձի հանդեպ համարժեք (ադեկվատ) վերաբերմունքի դրսևորում.

Երեխայի հոգեբանական և բնութագրական առանձնահատկություններին տրվող գնահատականները պետք է լինեն օբյեկտիվությանը հնարավորինս մոտ,

● դինամիկություն. ճկուն լինել՝ փոխելու երեխայի հետ հարաբերություններում կիրառվող ձևերն ու մեթոդները՝ կապված տարիքային առանձնահատկությունների, կոնկրետ իրավիճակների և ընտանեկան կյանքի պայմանների հետ ,

● դաստիարակչական ջանքերի ուղղվածությունը դեպի ապագա, համապատասխանությունը այն պահանջներին, որը կյանքն է դնում երեխայի առջև,

● չափազանց պահանջկոտության և անհրաժեշտ հսկողության համապատասխանեցումը երեխայի հուզական առանձնահատկություններին,

- հաստատունություն, կայունություն (միանշանակություն և հաջորդականություն):

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ա., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) (2019) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 249 էջ:
<https://uni.cf/3io34Ty>
2. Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է., Կարապետյան Ա., Կիրակոսյան Ա., Հովյան Գ., Չարյան Ա., Պայլոզյան Ժ. (2017) Լոգոպեդիան գործնականում: Երևան, <<Ասողիկ>> հրատ., 76 էջ,
<https://www.unicef.org/armenia/media/2196/file>
3. Բարբոյան Ա., Հակոբյան Ա., Երիցյան Մ., Սարգսյան Ս. «Զարգացման և վարքագծային մանկաբուժության հիմունքները, Երևան, 2008
4. Դրական դաստիարակչական մոտեցումներ. ուղեցույց մանկավարժների համար. Ասողիկ տպ. Երևան 2018, 155 էջ
5. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ/ ՅՈՒՆԻՍԵՖ –Վերանայված հրատարակություն.- Եր.: Ասողիկ,- 2019. 196 էջ:
<https://uni.cf/3mbSuS9>
6. Մանուկյան Ա.Վ. (2012) Լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի զարգացումը խաղային գործընթացում. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 256 էջ
7. Մարության Մ.Կ. (2012) Թույլ տեսող երեխաների տեսողական ընկալման զարգացման հատուկ խաղեր, խաղային վարժություններ և հանձնարարություններ Ուսումնամեթոդական ձեռնարկ, Զանգակ-97, - 40 էջ
8. Պայլոզյան Ժ. (2018) Այբ-Բեն մոլորակի խաղերից:// ուսումնասօժանդակ ձեռնարկ: Երևան, 84 էջ
9. Պետրոսյան Ս. (2018) Ներառական կրթությունը գործնականում, ուսումնամեթոդական ձեռնարկ, 100 էջ
10. Փոփոխություններն իրականացնում են ընտանիքները (ծնողավարման ուղեցույց), խմբ.կազմ, Եր.պաշտպ.ցանց, Երևան 2019թ., 90 էջ
11. Айрес Э. (2009) Дж. Ребенок и сенсорная интеграция. Понимание скрытых проблем развития / Э. Дж. Айрес; [пер. с англ. Юлии Да-ре]. - М.: Тервинф, - 272 с.
12. Баркан Л.И. (1996) Его Величество Ребенок какой он есть. Тайны и загадки. - М.: АО «Столетие».
13. Гиппенрейтер Ю.Б (2008) Общаться с ребенком. Как: АСТ, Астрель, Харвест; Москва; ISBN 978-5-17-052715-1, 214 стр.
14. Гордон Т. (1997) Повышение родительской эффективности Популярная педагогика. Екатеринбург
15. Денискина В.З. (2012) Особые образовательные потребности, обусловленные нарушениями зрения и их вторичными последствиями, Ж. «Дефектология. –Москва, №5. – С.3- 12.
16. Дружинина Л.А. (2006) Коррекционная работа в детском саду для детей с нарушением зрения–Москва, 160 с.
17. Ермаков В. П. (2017)Что и как видят дети от рождения до 10 лет с сохранным и нарушенным зрением. Диагностика, развитие и тренировка зрения. Учебное пособие.- 146 стр.
18. Заваденко Н.Н. (2000) Факторы для формирования дефицита внимания и гиперактивности у детей>>, Мир психологии №1
19. Захаров А.И. (2010) Дневные и ночные страхи у детей. – СПб.: Речь, 310 с.
20. Захаров А.И. (1995) Как помочь нашим детям избавиться от страха. СПб.
21. Захарова Е.И. (2010) Родительство как ресурс личностного развития в зрелости// Перинатальная психология и психология репродуктивной сферы. — №1.– с.29-37.
22. Карабанова О.А. (2005) Психология семейных отношений и основы семейного консультирования.—М.: Гардарики, — с.320.23. Лютова Е. К., Монина Г. Б. (2003) Тренинг общения с ребенком (период раннего детства). –СПб.
24. Ньюмен С. (2018) Игры и занятия с особым ребенком. Руководство для родителей. Издательство: Издательство: Тервинф, ISBN: 5-901599-22-5, 236 стр.
25. Рикрофт Ч. (2008) Тревога и неврозы /Пер. с англ. В.М.Астапов, Ю.М.Кузнецова /Под .ед. В.М.Астапова – М.: ПЕР СЭ, 142 с.
26. Савостьянов А. И. (2001) Техника речи в профессиональной подготовке учителя. – М.: Владос. – 140 с.3.
27. Таварткиладзе Г. А., Шматко Н. Д. (2004) Выявление детей с подозрением на снижение слуха. Младенческий, ранний, дошкольный и школьный возраст. – М., 96 с.
28. Янн П., Королева И. В. (2011) Дети с нарушениями слуха// Книга для родителей и педагогов// КАРО, Санкт Петербург,-с. 240

29. Alzyoudi, M., Sartawi, A.& Almuhiiri, O. (2014), The impact of video modelling on improving social skills in children with autism, *British Journal of Special Education* 42(1)
Doi:[https://www.researchgate.net/publication/265605108_The_impact_of_video_modelling_on_improving_social_skills_in_chi](https://www.researchgate.net/publication/265605108_The_impact_of_video_modelling_on_improving_social_skills_in_children_with_autism)
[ldren_with_autism](https://www.researchgate.net/publication/265605108_The_impact_of_video_modelling_on_improving_social_skills_in_chi)
30. Autism Spectrum Disorder DSM-5™ Diagnostic Criteria.
Doi:https://images.pearsonclinical.com/images/assets/basc-3/basc3resources/DSM5_DiagnosticCriteria_AutismSpectrumDisorder.pdf
31. Ayres, J. (1974) *The development of sensory integrative theory and practice*. Dubuque, IA: Kendall Hunt
32. Beukelman, D. & Mirenda, P. (2013). *Augmentative and Alternative Communication: Supporting Children & Adults with Complex Communication Needs* 4th Edition. Baltimore: Paul H. Brookes Publishing.
33. Briesch, A. M., & Chafouleas, S. M. (2009). Review and analysis of literature on self-management interventions to promote appropriate classroom behaviors (1988-2008). *School Psychology Quarterly*, 24, 106–118 p.
34. Challenging Behaviors Tool Kit. (2012) Autism Speaks Inc. Autism Speaks and Autism Speaks It's Time To Listen & Design are trademarks owned by Autism Speaks Inc. Doi: <https://www.autismspeaks.org/sites/default/files/2018-08/Challenging%20Behaviors%20Tool%20Kit.pdf>
35. Chubey, A., Evans, T. (2009) Types and stages of play, <https://slideplayer.com/slide/10890580/>
36. Cooper, J. O., Heron, T. E., & Heward, W. L. (2007). *Applied behavior analysis* (2nd ed.). Upper Saddle River, NJ: Pearson.
37. Davis, K., Dubie, M., (2004). Sensory integration: Tips to consider. *Reporter*, 9, (3), 3-8 p.
38. Data and Statistics About Hearing Loss in Children.//Hearing Loss in Children//2017: <https://www.cdc.gov/>
39. Diagnostic and Statistical Manual of mental Disorders. (2000). DSM- IV-TR. (4th ed.) Washington, DC: American Psychiatric Association.
40. Eileen, K., Edward, G. s *The Exceptional Child: Inclusion in Early Childhood Education*, 2015,2012, 624 p.
41. Evanovich L.& Kern L. (2018) *Precorrection: Preventing Predictable Problem Behaviors in School Setting, Beyond Behavior*, Vol. 27(2) 90–98 p.
42. Faraone S. V., Biederman J. (1998) Neurobiology of attention deficit hyperactivity disorder. *Bio Psychiatry*,44:10: 951-958 p.
43. Frieman, B.B. (2001). *What Teachers Need to Know About Children at Risk*. Boston, MA: McGraw-Hill
44. Geyh, S., Peter, C., Müller, R., Bickenbach J.E., Kostanjsek, N., Ustün, B.T, Stucki, G., Cieza, A. (2011) The Personal Factors of the International Classification of Functioning, Disability and Health in the literature — a systematic review and content analysis // *Disabil Rehabil.* —33 (13—14). — P. 1089—1102. — doi: 10.3109/09638288.2010.523104. — PMID: 20925452.
45. Haydon, T., & Kroeger, S. D. (2016). Active supervision, pre- correction, and explicit timing: A high school case study on classroom behavior. *Preventing School Failure: Alternative Education for Children and Youth*, 60, 70–78 p.
46. Lucker K.D., (2009) *A Review of Self-Help Skills for People with Autism: A Systematic Teaching Approach*, by Stephen R. Anderson, Amy L. Jablonski, Marcus L. Thomeer, and Vicki Madaus. doi: 10.1007/BF03391740
47. Neitzel, J. (2009). *Steps for implementation: Antecedent-based interventions*. Chapel Hill, NC: The National Professional Development Center on Autism Spectrum
48. Pediatric Management of Hearing Loss.//Children's National// 2019: <https://childrensnational.org/>
49. Prizant, B., Wetherby, A., Rydell, P. (2000). Issues in enhancing communication and related abilities for young children with autism spectrum disorders: A developmental transactional perspective. In A. Wetherby, & B. Prizant (Eds.), *Autism spectrum disorders: A transactional developmental perspective* (pp. 193–214). Baltimore, MD: Paul H. Brookes.
50. John Salvia, J., Ysseldyke, J., Witmer, S.(2010) *Assessment in Special and Inclusive Education* 11th Edition, 453 p.
51. Sharon Vaughn Candace, (2012) *S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems*, 451 p.
52. Vaughn, Sh., Bos C. S. (2010) *Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems*, 451 p.
53. Victory J. (2020). *Hearing Loss in Children*. <https://www.healthyhearing.com/>
54. *Strategies for promoting positive behaviors: Reinforcement* (2013) The Center for Advanced Study of Teaching and Learning (CASTL) at the University of Virginia, Charlottesville.
Doi:http://curry.virginia.edu/uploads/resourceLibrary/Reinforcement_VKRP.pdf: Knapp
55. Sam, A., & AFIRM Team. (2016). *Antecedent-based intervention*. Chapel Hill, NC: National Professional Development Center on Autism Spectrum Disorder, FPG Child Development Center, University of North Carolina.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.
 ԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ 4

ԲԱԺԻՆ 2.
 ԱՌԻՏԻՉՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 14

ԲԱԺԻՆ 3.
 ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍԻ ԵՎ ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՈՒՄ.
 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ 25

ԲԱԺԻՆ 4.
 ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ
 ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 33

ԲԱԺԻՆ 5.
 ԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ
 ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40

ԲԱԺԻՆ 6.
 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ 47

ԲԱԺԻՆ 7.
 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ
 ՆԿԱՐՆԵՐԻ/ՍԻՄՎՈԼՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 53

ԲԱԺԻՆ 8.
 ՏԱՐԻՔԱՅԻՆ ՎԱԽԵՐ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ
 ՈՒ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 59

ԲԱԺԻՆ 9.
 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
 ՍՈՑԻԱԼ-ՀՈՒՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 71

ԲԱԺԻՆ 10.
 ՀԵՆԱՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՆ 78

ԲԱԺԻՆ 11.
 ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ 88

ԲԱԺԻՆ 12.
 ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ
 ՀՈԳԵՔԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ 97

ԲԱԺԻՆ 13.
 ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝
 ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 108

ԲԱԺԻՆ 14.
 ԳԻՏԱԿԻՑ ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ 116

ԲԱԺԻՆ 15.
 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԾՆՈՂԱՎԱՐՈՒՄ.
 ՏԵԽՆԻԿԱՆԵՐ ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ 123

ՀՂՈՒՄՆԵՐ 129

Բարդ իրավիճակների պարզ լուծումներ

Ձեռնարկի հեղինակներ՝

Ավագյան Արմենուհի, լրագրող, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բաբայան Լուսինե, մանկավարժական գիտությունների թեկնածու
Հովհաննիսյան Մարինա, հատուկ մանկավարժ
Մակարյան Թագուհի, հոգեբան
Մանուկյան Ալինա, հոգեբանական գիտությունների թեկնածու
Մարության Մարինե, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա, սոցիալական մանկավարժ

Մասնագիտական խմբագիր՝ Արմենուհի Ավագյան

Տեքստի խմբագիր՝ Գարեգին Ղազարյան

Ձեռնարկը ստեղծվել է և տպագրվել է Վորլդ Վիժն Հայաստանի աջակցությամբ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 64x90 1/8:
Թուղթը՝ 115գ/մ² կավճապատ: Ծավալը՝ 33 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 1220 օրինակ:
Տպագրվել է՝ «ՏՊԱՐԱՆ.ԷՅԷՄ» ՍՊԸ տպագրատանը: